ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(77-րդ տարի) **Թիվ-12** (1682) Դեկտեմբեր 2023

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhtps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Ասպարեզը՝ հաղթանակի հավատացողներին (էջ 1-4)

2- Քաղաքական

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Բանակցային 2023 թվականը: Ի՞նչ սպասել 2024-ից (էջ 5-6)

Անի Մելքոնյան
2023 թ. քաղաքական համապատկերը (էջ 7-10)

3- Տարածաշրջանային

Նարե Գևորգյան
Հայաստան-Ադրբեջան-Թուրքիա հարաբերություններն ու առկա մարտահրավերները (էջ 11-12)

Լիանա Պետրոսյան
Հայաստան-Իրան-Ռուսաստան հարաբերությունների ընդհանուր բնութագիրը (2023 թ. ընթացքում տեղի ունեցած գործընթացների համատեքստում) (էջ 13-14)

4- Աշխարհաքաղաքական

Արմեն Պետրոսյան
Մերձավոր Արևելքի 2023-ը (էջ 15-20)

5- Բնապահպանական

Արմեն Վարդանյան
Հայրենիք-բնաշխարհ՝ հարատևման գրավական (էջ 21-23)

6- Գաղափարական

Արարատ Հակոբյան
Մի մտահոգիչ դիտարկում «Հայրենիք» - «Պետություն» հասկացությունների հարաբերակցության շուրջ հարցի շուրջ (էջ 24-26)

7- Պատմության լուսարձակ

Անի Մելքոնյան
Հայոց պատմության դասագիրքը թուրքական շահերի պաշտպան (էջ 27-31)

Արմեն Կարապետյան
Ադանայի հայության կոտորածի արձագանքները «Հորիզոն» օրաթերթի էջերում (էջ 32-36)

Վանիկ Հրանտի Վիրաբյան
Տիգրան Դևոյանցը Առաջին Հանրապետության անվտանգության ապահովման դիրքերում: Պայքար ադրբեջանա-թուրքական նկրտումների դեմ (մաս 1) (էջ 37-42)

7- Հայ կյանք

Վրէժ-Արմէն
Մնալով տեսլականին հաւատարիմ (95-Ամեակին առթիւ) (էջ 43-44)

Ասպարեզը՝ հաղթանակի հավատացողներին

44-օրյա պատերազմից հետո Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, թե «նախորդները» վաղուց հանձնել էին Արցախը: Նա տարբեր առիթներով կրկնում է այդ միտքը՝ ամեն անգամ հիշելով նախկինում տեղի ունեցած տարբեր բանակցություններ և փաստաթղթեր: Կարծես ոչ մի նշանակություն չունի, որ գերագույն հրամանատար Փաշինյանի գլխավորությամբ երկիրը աննախադեպ պարտություն է կրել, իսկ ավելի շատ տարածքներ երկրի ղեկավար գերագույն գլխավոր հրամանատարը «հանձնել է թղթով»: Նշանակություն չունի, որ 2016 թվականի քառօրյա պատերազմից հետո Ալիևը խոստովանել էր, որ արտաքին ուժերը իրեն ստիպում են ճանաչել Ղարաբաղի անկախությունը: Ու նույն Ալիևը «գլխի չէր ընկնում» Փաշինյանի մատնանշած փաստաթղթերին հղում անել և խաղաղ ճանապարհով Արցախը «թղթով ստանալ», ոչ թե ռազմական սադրանքներ հրահրել թե՛ նախկինների և թե՛ Փաշինյանի օրոք: Նշանակություն չունեին, կարծես, երկրի ղեկավար եղած ժամանակ Փաշինյանի հայտարարությունները, թե բանակցությունները սկսում է իր զրոյական կետից, և թե Արցախը Հայաստան է և վերջ: Ինչպես և նշանակություն չունեն օտարերկրյան բարձրաստիճան պաշտոնյաների և հեղինակավոր կազմակերպությունների ներկայացուցիչների հայտարարությունները, որ Նիկոլ Փաշինյանը առաջին հայ ղեկավարն է, որը Ղարաբաղը ճանաչել է Ադրբեջանի կազմում, և այս պաշտոնական ճանաչումից հետո իրենք ոչինչ չեն կարող անել:

2020 թ. հայկական գերիշխանությանը ենթակա տարածքի 25 տոկոսը թշնամուն զիջելուց հետո Հայաստանի ղեկավարության համար իշխանությունը պահելու հարցը դարձավ ինքնանպատակ և նրա քաղաքականության մեջ գերիշխեց հետևյալ մարտավարությունը՝ գոհացնել արտաքին շահագրգիռ ուժերին, որպեսզի իշխանության գլխին իր մնալը լինի ձեռնտու, իսկ երկրի ներսում հնարավորինս գաղտնի պահել տեղի ունեցող բանակցային գործընթացներն ու հնարավոր լուծումների հեռանկարը, ներկայացնել փաստերը ոչ ամբողջովին, անհստակ ձևով՝ դրանք «մարսեցնելով» հայ հասարակությանը որպես «օբյեկտիվ» իրավիճակից փրկություն և երաշխիք մշտական խաղաղության համար: Որպեսզի ներքին հնարավոր բողոքը հանկարծ չսրի դեն նետի իշխանությանն ու նրա պայմանավորվածությունները թուրքերի հետ, մանրամասնորեն չեն ներկայացվում նախկին անկլավները զիջելու, հաղորդակցական ուղիների բացման հանգամանքները, երբ հայտնի չէ, Հայաստանը կստանա՞ որևէ բան անկլավները զիջելու ժամանակ կամ հայտնի է, որ Ադրբեջանի և մանավանդ Թուրքիայի պահանջը մնում է Հայաստանի տարածքով «միջանցքի» ձեռքբերումը, որի նկատմամբ իրավազորությունը կպատկանի իրենց: Ի դեպ, Ադրբեջանի իշխանությունն իր հասարակության համար բացահայտում է սեփական հավակնությունները՝



Սյունիքը, եթե ոչ ողջ Հայաստանը, անվանելով «Արևմտյան Ադրբեջան», խոսում է ադրբեջանցի փախստականների Հայաստան վերադարձի, միջանցքի խնդրի մասին, Արցախի հարցը հայտարարում է փակված և այլն: Ընդ որում, Արցախի խնդիրը վերջնականապես փակելու համար Ադրբեջանի իշխանությունը պահանջեց և Հայաստանի իշխանությունից ստացավ պայմանագրային գրավոր հավաստում այն մասին, որ Արցախը պատկանում է Ադրբեջանին: Նիկոլ Փաշինյանն, իրեն բնորոշ ձեռնածությամբ, փորձեց ներկայացնել, թե Հայաստանի ու Ադրբեջանի տարածքների չափերը փոխկապակցված են և մեկով պայմանավորված են մյուսի չափն ու անխախտելիությունը: Այնինչ ադրբեջանական կողմն ընդհանրական հայտարարություն անելով տարածքային ամբողջականության մասին՝ երբեք չի կոնկրետացնում դրա սահմանների ու չափերի հարցը, այլ ընդհակառակը՝ ոչ միայն նոր տարածքներ է պահանջում, այլև այս պահին 200 քառակուսի կիլոմետր խորացել է Հայաստանի սահմաններից ներս և նպաստավոր դիրքերում ամրանում է թե՛ ամրաշինական աշխատանքների, թե՛ ռազմուժի ու զինտեխնիկայի կուտակման ճանապարհով: Ադրբեջանական կողմը վերջերս հրաժարվեց նաև սահմանների հստակեցման համար հիմք ընդունել կոնկրետ քարտեզներ, և պահանջում է, որ այդ հանգամանքը տեղ չգտնի կնքվելիք խաղաղության պայմանագրում: Դա ևս վկայում է, որ խաղաղության պայմանագիրը կնքելով, ինչպես նոյեմբերի 9-ին տեղի ունեցավ, թշնամին ամրագրելու է նոր ձեռքբերումները, հետո դրանք մեկնաբանելու է ըստ ցանկության և կանգ չառնելով գրվածի սահմաններում՝ առաջ է շարժվելու նոր նվաճումների և նոր պահանջների ճանապարհով: Ասվածը տեսական ենթադրություն չէ, այլ բխում է նոյեմբերի 9-ից հետո տեղի ունեցածից, ինչպես և ադրբեջանա-թուրքական աշխարհաքաղաքական ակնառու հավակնություններից: Այս առումով Փաշինյանի ոչ պատահականորեն հայտնվելը Հայաստանի իշխանության ղեկին Ալլահի նվերն էր, որի միջոցով թուրքական տանդեմը կարճ ժամանակում ստացավ աներևակայելին և հիմա շտապում է ձեռք բերել շատ ավելին՝ հայ ժողովրդին հասցնելով այնպիսի մի իրավի-

ճակի, որ երբևէ որևէ ազգային իշխանություն ունակ չլինի վերականգնելու հայոց պետության ինքնիշխանությունը: Նիկոլ Փաշինյանը հայտարարում է, թե պատմության ընթացքում մենք ավելի շատ հարաբերվել ենք Ադրբեջանի ու Թուրքիայի, քան Ռուսաստանի հետ, և չի ասում, որ այդ հարաբերությունները եղել են իրավական, սոցիալ-տնտեսական, իսկ այնուհետ՝ ցեղասպանական գործողություններով հայ ժողովրդի դուրս մղման և նրա բնօրրանի յուրացման երկարատև գործընթաց: Դարերի և հատկապես վերջին երկու հարյուր տարիների ընթացքում թշնամական տանդեմն իր ծրագրերը իրականացրել է գրեթե ամբողջապես և հիմա հետապնդում է մեր պատմական հայրենիքից մնացած մեկ տասներորդին ևս փաստացի տեր դառնալու խնդիրը՝ Նիկոլ Փաշինյանի իշխանության բարենպաստ պայմաններում: Հայաստանի ղեկավարը կատարում է թշնամու պահանջները՝ հույս ունենալով, որ նրանք մի տեղ կանգ կառնեն և որպես դրա երաշխավորի՝ ցանկանում է ապավինել Արևմուտքի երաշխիքներին:

Ակնհայտ է, որ Փաշինյանը չի հավատում, որ հայ ժողովուրդն ընդունակ է ինքն իրեն պաշտպանելու և հակառակը՝ ձգտում է թույլ չտալ, որ տեղի ունենա ժողովրդի ոգու նոր վերելք: Իհարկե եթե նա ունակ լինի սթափ գնահատելու, կընդունի, որ հայկական ինքնապաշտպանության փլուզումը, և նորի կազմակերպման անհնարինության մտայնությունը իր իշխանության գալու և իր պարտվողական գաղափարախոսության արգասիքն են: Այդ իմաստով հայ ժողովրդի նկատմամբ նրա առաջին և ամենամեծ դավաճանությունը ռազմական և պետական կառավարման փորձի լիովին բացակայության պայմաններում փաստացի պատերազմից դուրս չեկած երկրի ղեկավարը դառնալու հավակնությունն էր: Հայտնվելով պարտությունների և այդ գահավիժումը հաղթահարելու անկարողության փաստի առջև՝ նա դարձել է թշնամու կամակատարը և այժմ Հայաստանը տանում է պատմական, քաղաքական, դիվանագիտական համընդհանուր պարտության:

Թշնամու առջև ծնկած իշխանությունը, ոչ միայն ցեղասպանության պահին հրաժարվեց արցախահայության պաշտպանությունից, այլև ամեն ջանք գործադրեց, որ ոչ հայկական կողմերը, ոչ էլ արտաքին ուժերը բողոքի ձայն չբարձրացնեն հազարամյակներով հայապատկան Արցախի բռնազավթման և էթնիկ զտման հարցով: Նա հրաժարվում է ադրբեջանաթուրքական ռազմական հանցագործությունների, նվաճողական հավակնությունների դեմ բողոքից, անպատասխան է թողնում հակառակորդի սպառնալիքներն ու բարձրաձայնվող կեղծիքը Հայաստանի տարածքի, իբրև թե նախկինում Ադրբեջանին պատկանելու մասին: Թշնամիներից սարսափած ոստիկանական պատնեշների հետևում սեփական ժողովրդի առջև աքլորացող ղեկավարը անգամ Հայաստանի ներսում ցայսօր չի հանդիպել Արցախի պաշտոնական ներկայացուցիչների հետ, դեմ է Արցախի պետական կառույցների պահպանմանը Հայաստանում և զրկել է նրանց գոյատևելու ֆինանսական միջոցներից: Հակառակը՝ նրա պահանջով Արցախն ու արցախցին Հայաստանում պետք է դադարեն այդպիսի կարգավիճակ և իրավունքներ ունենալ, իսկ ավելի խորքային ձևով հետապնդվում է արցախցիների համախմբումը թույլ չտալու ու այնպիսի պայմանների ստեղծումը, երբ նրանք կամ նրանց զգալի հատվածը ստիպված կլինի լքել նաև Հայաստանը: Փաշինյանի իշխանությունը ոչ միայն անհաղորդ է արցախահայության և ընդհանրապես բոլոր նորմալ հայերի ապրած մեծ ողբերգությանը, այլև անամոթաբար անտարբեր է, երբ Արցախի ղեկավարությանը Բաքու գերի տանելու ազգային նվաստացման դեմ միջոցառումներ ձեռնարկողը առաջին հերթին ինքը պետք է լիներ:

Կատարելով թուրքերի պահանջը, նա հայկական օրակարգից դուրս է հանում ցեղասպանության հարցը և թուրք ազգայնամոլական տեսությունների հիման վրա խեղաթյուրում է ողջ հայոց պատմությունը, դասագրքերում կեղծ պատմություն է գրել տալիս՝ որով «հայ պատմաբանները» զարգացնում են թուրք-ադրբեջանցի պատմաբանների պատմաշինության կեղծ թեզերը: Կրթական-գիտական ծրագրերում ամրագրված պատմագիտական, գրական-մշակութային առանցքային հայեցակարգերը վերանայվում են հիմնովին, այնտեղից դուրս են մղվում այն ամենը, ինչը վերաբերում է հայ ժողովրդի պայքարին թուրք նվաճողների դեմ, ժողովրդի պատմական ինքնությունն ու հոգեկարտվածքը դարերով ձևավորած արժեքներին, ժողովրդի պատմական ընթացքի շարունակականությունը բնորոշող երևույթները: Այլ խոսքով արտաքին ուժերի թելադրանքով ստանձնելով ժողովրդի և պետության աշխարհաքաղաքական կողմնորոշումներն ու գերակայությունները գլխիվայր շուռ տալու գործը նույն տրամաբանությամբ նա ձեռնմուխ է եղել նաև հեղաշրջելու ժողովրդի գիտակցությունը՝ ձևավորելով «նոր հային», անարժանապատիվ ու հիշողությունից զուրկ ստրուկին, որը կդառնա նրա ազգակործան ծրագրերի հլու ենթական: Այս ուղղությամբ արված վերջին բնորոշ քայլերից է Ռաֆֆու ստեղծագործու-

թյունների դուրս բերումը ուսումնական ծրագրերից (Ստալինն ու Քեմալը գերեզմանում հրճվանքից շուռումուռ կգան հայ հեղկոմականների այսպիսի ժառանգորդների լույս աշխարհ գալու համար):

Որպեսզի տպավորություն չստեղծվի, թե ժողովրդի բնորոշմամբ՝ «խեղճ Նիկոլը» չհասկանալով է ընկել այս ծուղակը, պետք է հստակ լինի, որ դա այդպես չէ: Նա իշխանության է եկել Արևմուտքի թելադրանքով՝ Ռուսաստանին տարածաշրջանից դուրս մղելու գլխավոր առաքելությամբ: Իր և իր հովանավորների համոզմամբ դա հնարավոր կլիներ անել նախ և առաջ Արցախից հրաժարվելու և Ռուսաստանին հակամարտող կողմերի վրա ազդելու այդ լծակից զրկելու ճանապարհով: Իհարկե, սա մեծ հոգեբանական խոչընդոտ չէր Նիկոլի համար, որովհետև նա միշտ անթաքույց ատել է Արցախն ու արցախցիներին, ավելորդ բեռ է համարել դրանք Հայաստանի ուսերին և Լևոն Տեր-Պետրոսյանի նման միշտ համարել է, որ «...ամեն գնով ադրբեջանցիների ու թուրքերի հետ պետք է հասնել խաղաղության»: 2008 թվականին Նիկոլը միացավ նույն կարգախոսով մեկնարկած Լևոն Տեր-Պետրոսյանի նախագահական նախընտրական պայքարին և ջախջախիչ պարտություն կրեց, որովհետև այն օրերի հայության շատ ավելի մեծ տոկոսն էր տոգորված հայրենասիրական ոգով, մեծ մասն էր գրագետ, և բացարձակ մեծամասնությունը չէր պատկերացնում, որ Արցախը կարելի է զիջել: Դժբախտաբար, Նիկոլ Փաշինյանի՝ իշխանության գալուց հետո առաջնորդող ուժին սատարող զանգվածը դարձավ վախկոտ, ազգային իդեալներին անհաղորդ, հակաարցախ և պատմական հիշողությունից զուրկ ամբոխը:

Փաշինյանն ու իր թիմը քաղաքականապես ձևավորվել են արևմտյան կոսմոպոլիտիզմի և հակառուսականության գաղափարական հենքի վրա և նույնը կարողացան ներարկել իրենց ընտրազանգվածին: Բոլշևիկյան ատելությամբ նախկինների դեմ լցված, Ռուսաստանին հայհոյող, թուրքերի եղբայրությանը և արևմտյան փրկիչներին հավատացող հայությունը չի էլ ըմբռնում, որ պետությանը, երկիրը և հենց ինքն իրեն տանում է քաղաքական ինքնասպանության: Եվ այս եզրակացությունը բնավ կապ չունի ռուսներին սիրելու, Արևմուտքը ատելու կամ հակառակի հետ: Քաղաքականության հարցում ինչպես հայտնի է, սիրով ու ատելությամբ չեն առաջնորդվում, այլ սառը հաշվարկով: Գոնե Վրաստանի և Ուկրաինայի օրինակները մեզ պետք է դաս լինեին՝ աշխարհաքաղաքական մեծ հրդեհների մեջ վառելափայտի դերում չհայտնվելու համար: Կբերի՞ Արևմուտքը կամ ուրիշ մեկը իր զինվորներին մեզ համար ռուսների դեմ կռվեցնելու: Վրաստանի ու Ուկրաինայի օրինակները փաստում են, որ՝ ո՛չ: Կգա՞, ի վերջո, Ռուսաստանը՝ մեզ փրկելու, կամ գոնե իր ավանդական շահերը Անդրկովկասում պաշտպանելու: Նախ Ռուսաստանը գուցեև չկարողանա դա անել թուրքարևմտյան դաշինքի դեմ, եթե անգամ ցանկանա: Եվ հետո ինչու պետք է անի դա, եթե ի դեմս իշխանության և նրան



ընտրող զանգվածի՝ Ռուսաստանը տեսնում է, որ Հայաստանը դարձել է հակառուսական և թեքվել է դեպի Արևմուտք: Հայաստանում այս ուժի իշխանության պայմաններում Ռուսաստանն ավելի շուտ կձգտի արտաքին մյուս ուժերի կողքին իր ազդեցությունը ապահովել Հայաստանում՝ հենվելով տնտեսական և էներգետիկ լծակների վրա և դուրս չբերելով այստեղից սեփական զինուժը: Հայաստանը Արևմուտքի պահանջով ձգտելով ռուսական զինուժի դուրս մղմանը՝ միաժամանակ հասկանում է, որ հատկապես տնտեսական ու էներգետիկ կապերի խզման դեպքում Հայաստանում քաոս կառաջանա: Սա ստիպում է նրան և հավատարմություն դրսևորել և, խաբել երկու բևեռներին միաժամանակ:

Ավելացնենք, որ Հայաստանի համար, անշուշտ, խիստ կարևոր է փոխգործակցությունը Արևմուտքի հետ, ինչը, ի դեպ, հնարավորինս հավասարակշռված ձևով արվել է նախկինների օրոք՝ Հայաստանի համար ապահովելով որոշակի գործընկերային հարաբերություններ և հակադրություններից խուսափելու հնարավորություն:

Աշխարհաքաղաքական հաշվարկներով պայմանավորված այսօր ԵԱՀԿ եռանախագահության երկրները, ինչպես և այլ երկրներ բարձրաձայնում են Արցախի հարցի քաղաքական լուծման անհրաժեշտության մասին (ինչին դեմ է ադրբեջանաթուրքական տանդեմն ու Հայաստանի իշխանությունը): Սա նշանակում է, որ սպառված չէ արցախցիների վերադար-



ձի և Արցախի որոշակի կարգավիճակ ձեռք բերելու հնարավորությունը: Ադրբեջանցիք ու թուրքերը ներդաշնակելով իրենց քաղաքականությունը՝ Հայաստանի իշխանություններին ստիպում են հրաժարվել որևէ մեկի աջակցությունից և բանակցություններում հանդես գալ միայնակ: Նույն ժամանակ, երկու թուրքական պետությունները ներկայանում են որպես աշխարհաքաղաքական ու տնտեսական կարևոր գործընկերներ և՛ Ռուսաստանի և՛ Արևմուտքի համար և ձեռք են բերել բոլոր կողմերի որոշակի աջակցությունը: Հայաստանը այստեղ ևս տեղի տալով, այսպես կոչված, խաղաղության բանակցություններում կամաց-կամաց հայտնվում է մեկուսացման մեջ:

Մյուս կողմից Ադրբեջանը կարողացել է բանակցությունների օրակարգից ամբողջովին դուրս մղել Արցախի ու արցախցիների հարցերը:

«Խաղաղության խաչմերուկի» կարգախոսը հրապարակ նետած Հայաստանի իշխանությունը ժողովրդին խաբում է այսօր և կխաբի Ադրբեջանի հետ պայմանագիր կնքելուց հետո, իբրև թե «ցավոտ զիջումների» գնով հաջողվել է հասնել երկարատև խաղաղության: Հետո կարճ ժամանակից ակնհայտ կդառնա, որ խաղաղությունն ու տարածքային անձեռնմխելիությունը դարձյալ ժամանակավոր էին: Այն ժամանակ Հայաստանի իշխանությունը կմոգոնի նոր ստեր. այս իշխանության համար գլխավորը սեփական իշխանությունը հնարավորինս երկարաձգելն է, ինչը միջոց է օրինաչափ պատժից խուսափելու:

Իսկ արտաքուստ ամեն ինչ լավ է. իշխանությունը տնտեսաֆինանսական ինչ-ինչ հաջողությունների մասին փուչիկ է խաղացնում օդում, պարծենում է ասֆալտած ճանապարհներով և կառուցվող շենքերով, և, այս օրերին, պատրաստվում է երկրով մեկ ամանորյա շոուներ կազմակերպել, կարծես չեն եղել ցեղասպանության հետևանքով Արցախի կորուստն ու արցախահայության բռնագաղթը, տարվա ընթացքում արձանագրված բազմաթիվ զինվորների ողբերգական մահերը, Հայաստանի ռազմավարական տարածքներում թշնամու զորքի առկայությունը, ինչպես և չեն անհանգստացնում բանակցությունները, որոնց հետևանքները կարող են ճակատագրական լինել երկրի համար: Իշխանությունը քողարկելով երկրի աղետալի վիճակն ու հեռանկարները, փորձում է խաբել ժողովրդին ժամանակավոր կայունությամբ ու թվացյալ խաղաղությամբ: Այնինչ նոր տարվա գալուստը մոտեցնում է ամենավատատեսական կանխատեսումների իրականացման վտանգը: Հայ ժողովրդի սերուցքը կկանգնի՞ ոտքի և կկանխի՞ պետության գահավիժումը: Չհիմնավորված լավատեսությունը միայն թերահավատություն կարող է առաջացնել: Այո՛, անհրաժեշտ է հայրենասեր մարդկանց և ուժերի գործնական միավորում ոչ թե ճառերի, այլ գործողությունների ծրագրի շուրջ, ինչը հիմնավորված կլինի տրամաբանական քայլերի ճանապարհային քարտեզով: Համարձակությունը փուչ կեցվածք է, եթե չի դրսևորվում որպես կոնկրետ և արդյունավետ գործ: Ժողովուրդների առաջընթացը կերտում են ոչ թե ամբոխները, այլ գիտակից փոքրամասնությունները: Իշխանությունը, որն արդեն իրեն է ենթարկել օրենսդիր, գործադիր և դատական մարմինները, քարոզչության հիմնական միջոցները, ձգտում է ենթարկել նաև տեղական ողջ իշխանությունը փաստացի պատրաստվելով գալիք ընտրություններում վերարտադրվելու և պաշտպանվելու, երբ մեծամասնության համար ակնհայտ կդառնան պետականության և ինքնիշխանության անվերականգնելի կորուստները: Անհրաժեշտ է պայքար, իսկ պայքար նախևառաջ նշանակում է հավատ հաղթանակի նկատմամբ: Ասպարեզ պետք է դուրս գան հաղթանակին հավատացողները. սրտացավները գիտեն ինչ որ պետք է, և ճառերի ժամանակը վաղուց անցել է: ■

Բանակցային 2023 թվականը: Ի՞նչ սպասել 2024-ից

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Քաղաքագետ, «Ոսկանապատ» վերլուծական կենտրոնի ղեկավար

Ավարտին է մոտենում 2023 թ., սակայն Հայաստանի, Ադրբեջանի և միջազգային միջնորդների կողմից ողջ տարվա ընթացքում հնչեցված լավատեսական հայտարարությունները, թե մինչև 2023-ի վերջ Հայաստանի և Ադրբեջանի միջև կարող է խաղաղության պայմանագիր ստորագրվել, այդպես էլ կյանքի չկոչվեցին: Ավելին, անցնող տարին նշանավորվեց Ադրբեջանի ևս մեկ լայնամասշտաբ ռազմական ագրեսիայով, որի հետևանքով Արցախն ամբողջությամբ հայաթափվեց, իսկ անվտանգության բոլոր միջազգային երաշխիքները հօդս ցնդեցին:

Այս իրողությունները ստիպում են միանգամայն նոր լույսի ներքո ընկալել այն ամենը, ինչ տեղի է ունենում արցախյան հիմնախնդրի և հայ-ադրբեջանական հարաբերությունների շուրջ: Ակնհայտ է, որ հակամարտության վերջին տարիների փուլը, որն այդքան հաջողություններ բերեց Ադրբեջանին, Ալիևի վարչակազմին ու նրա հովանավորներին ոգևորել է ավելի հեռուն գնացող պահանջներ ներկայացնելու Հայաստանին՝ ընդհուպ հավակնելով ՀՀ որոշ տարածքներ նվաճելուն կամ գոնե այդ տարածքներով Նախիջևանի ու Թուրքիայի հետ անխափան և չվերահսկվող կապ ստեղծելուն: Բաքվի նման ծավալապաշտությունը խնդիր է դարձել նույնիսկ Փաշինյանի կառավարության համար: Վերջինս, հասկանալով Հայաստանին պատուհասած ողբերգության ողջ ծավալները, սկսել է հայտարարել այն մասին, որ խաղաղության պայմանագիրը դեռ չի նշանակում, որ դրա ստորագրումից հետո խաղաղությունը երաշխավորված է լինելու: Մի կողմից՝ Փաշինյանը խոսում է խաղաղության պայմանագրի դրույթները կյանքի կոչելու երաշխիքների մասին՝ շեշտելով, որ դրանք կարող են ապահովվել միայն միջազգային հանրության (առավելապես Արևմուտքի - Հ.Մ.-Շ.) ջանքերով, մյուս կողմից՝ համաձայնվում Թուրքիայի նախագահ Էրդողանի կողմից մշակված հայ-ադրբեջանական երկկողմ ուղիղ բանակցությունների գաղափարին:

Ակնհայտ է, որ բանակցային գործընթացի զարգացումները դուրս են հայկական կողմի վերահսկողությունից: Այս հարցում պաշտոնական Երևանը հանդես է գալիս կամ արձագանքողի, կամ էլ ուրիշների թելադրանքով առաջնորդվողի դերում: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն իր անհետևողական և հակասական քաղաքականությամբ հենց ինքն է զիջել Հայաստանի սուբյեկտայնությունը: Ամեն ինչ սկսվեց այն բանից, երբ Փաշինյանի վարչակազմը միակողմանի կատարեց նոյեմբերի 9-ի և հունվարի 11-ի եռակողմ հայտարարությունների իր բաժին բոլոր պարտավորությունները՝ չսպասելով ու չպահանջելով, որպեսզի նույնը անեն նաև ադրբեջանական ու ռուսական

կողմերը: Սա Ալիևին նոր պահանջներ ձևակերպելու և դրանց հետամուտ լինելու հնարավորություն տվեց: Բանը հասավ նրան, որ 2022 թ. հոկտեմբերին ադրբեջանական կողմը պարտադրեց Հայաստանին ճանաչել Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը՝ ներառյալ Արցախը: Պրահայի այդ հայտարարությունից հետո բանակցային գործընթացի տրամաբանությունն ամբողջությամբ փոխվեց: Սակայն Ալիևը դրանով էլ չբավարարվեց և բոլոր այն հարցերը, որոնք արդեն կարող էր լուծել դիվանագիտական ճանապարհներով, արագ կարգով լուծեց զենքի ուժով:

2023 թ. սեպտեմբերի 19-20-ի զարգացումներից հետո Արցախի հարցը փաստացի վերջնական դուրս է եկել հայ-ադրբեջանական բանակցությունների օրակարգից: Երկու երկրների ներկայացուցիչներն այժմ միայն խոսում են սահմանազծման ու սահմանազատման աշխատանքների, տրանսպորտային միջանցքների, փախստականների իրավունքների, անկլավների և նման այլ հարցերի մասին: Ըստ այդմ՝ բանակցային այդ գործընթացում Հայաստանի դիրքորոշումներն ու մոտեցումներն այլևս ոչ մի հետաքրքրություն չեն ներկայացնում մեր տարածաշրջանում աշխարհաքաղաքական շահ հետապնդող տերությունների համար: Մեծ հաշվով նրանց համար միևնույն է, թե կոնկրետ քանի հազար քառակուսի կիլոմետր կլինի ՀՀ տարածքը և որքան՝ Ադրբեջանինը: Այս փուլում գերտերություններին հետաքրքրում են միայն Հարավային Կովկասի կոմունիկացիոն հնարավորություններն ու տրանսպորտային այն ուղիները, որոնք մոտ ապագայում ամենայն հավանականությամբ կգործարկվեն: Սակայն այս հարցում էլ նրանք Երևանի դիրքորոշմանը գրեթե ուշադրություն չեն դարձնում՝ լավ հասկանալով, որ իրենցից յուրաքանչյուրն առան-

ձին վերցրած Հայաստանին կարող է հեշտությամբ իր կամքը պարտադրել: Իսկ եթե այդ հարցում լինի նաև փոխադարձ համաձայնություն, այսինքն՝ գերտերությունները կարողանան միմյանց հետ համագործակցելու որոշակի եզրեր գտնել, ապա ամեն ինչ շատ ավելի հեշտ և արդյունավետ կստացվի նրանց համար:

Ինչ վերաբերում է ՀՀ կառավարության մշակած «Խաղաղության խաչմերուկ» ծրագրին, ապա այն կարճ կյանք ունի: Քաղաքական ակտորները, ինչպես նաև փորձագիտական շրջանակները շատ արագ են հասկացել, որ Փաշինյանի այս «գաղափարը» նույնպես պոպուլիզմի ոլորտից է: Պատճառները պարզ են: Նախ՝ որովհետև, այսպես կոչված, «Խաղաղության խաչմերուկը» չի արտացոլում տարածաշրջանում տեղի ունեցող իրական քաղաքական զարգացումների տրամաբանությունը: Երկրորդ՝ որովհետև Հայաստանն այսօր խաղաղության օրակարգ թելադրելու կարողություն չունի:

Սակայն այն փաստը, որ Արցախի հարցը դուրս է եկել հայ-ադրբեջանական բանակցությունների օրակարգից, ամենևին չի նշանակում, որ Արցախի հարցը, որպես այդպիսին, դադարել է գոյություն ունենալ: Ճիշտ հակառակը: Այն հիմա ավելի միջազգայնացել և համընդգրկուն նշանակություն է ստացել: Անցնող տարվա ամբողջ ընթացքում Արցախի խնդիրը եղել է Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Եվրոպայի, Իրանի, Թուրքիայի առաջնորդների շուրթերին: Ընդ որում, նրանցից շատերը, մասնավորապես՝ Մոսկվան, Բրյուսելն ու Վաշինգտոնը պնդում են, որ հայերը պետք է վերադառնան Արցախ: Այս հարցում նրանց դիրքորոշումները հստակ են: Հակասությունները վերաբերում են միայն հայերի՝ Արցախ վերադառնալու մեխանիզմներին ու ապագա անվտանգային երաշխիքներին:

Վերոնշյալը նշանակում է, որ գերտերությունները Արցախն ընկալում են որպես Հարավային Կովկասում իրենց ներկայության և ազդեցության մեծացման հիմնական գործիք: Սակայն, որպեսզի Արցախը կարողանա այդ դերակատարումն ունենալ նրանց համար, անհրաժեշտ է կոնֆլիկտայնության որոշ աստիճան: Այսպես, օրինակ՝ ռուսական կողմը պետք է կարողանա բացատրել, թե ինչ գործ ունի իր խաղաղապահ զորախումբն Արցախում, եթե այնտեղ հայեր չեն բնակվում:

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը լավ է հասկանում, որ հայերի վերադարձի հարցն ուշ թե շուտ դրվելու է իր առջև: Ներկայում նա փորձում է որոշակի նախապատրաստական աշխատանքներ տանել և հնարավորինս ապահովագրել իրեն դժվար զարգացումներից: Այդ խնդրի լուծմանն ուղղված Ալիևի քաղաքականությունը մի քանի պարզ քայլ է ենթադրում.

ա) Ադրբեջանի նախագահը փորձում է ամեն ինչ անել, որպեսզի արցախցիների մի մասը վերադառնա Ստեփանակերտ, բայց նրանց թիվը չգերազանցի մի քանի հազարը: Այսինքն՝ Արցախում այնքան հայեր բնակվեն, որ մի կողմից՝ նա կարողանա հայտարարել, թե հայերի վերադարձի հարցը լուծված է, մյուս կողմից էլ՝ վերադարձած հայերը խնդիր չդառնան Ադրբեջանի համար: Ալիևի վարչակազմն արդեն սկսել է ակտիվ աշխատել այս ուղղությամբ: Նրանք աջուձախ անվտանգության երաշխիքներ են շռայլում, խոստումներ տալիս հայերին, քարոզչական հոլովակներ նկարահանում և այլն:

բ) Հայերի՝ Արցախ վերադառնալու խնդրին զուգահեռ քաղաքական օրակարգ են բերում նաև ադրբեջանցիներին Հայաստանում վերաբնակեցնելու անհրաժեշտությունը: Այս հարցում Ալիևի հիմնական և կարևորագույն դաշնակիցը, որքան էլ տարօրինակ չհնչի, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն է ու նրա քաղաքական թիմը: Վերջիններս վաղուց են արդեն հայտարարում, որ Հայաստանում ադրբեջանցիների անվտանգությունն ու իրավունքները երաշխավորված կլինեն:

գ) Արտահերթ նախագահական ընտրություններ կազմակերպելով՝ Ալիևը փորձում է նախապես չեզոքացնել իր իշխանությանը սպառնացող բոլոր այն խնդիրները, որոնք, անկասկած, կառաջանան հայերի՝ Արցախ վերադառնալուց հետո: Ասել է, թե Ալիևը գիտի իր գլխին գալիքը և ուզում է մինչ գերտերությունների առջև ստանձնած պարտավորությունների կյանքի կոչելը լուծի իր իշխանության հարցը Արդբեջանում:

Այս ամենը վկայում է այն մասին, որ գալիք 2024 թ. կարող է միանգամայն նոր զարգացումների տարի դառնալ արցախահայության համար: Դրա մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ այլ տարածաշրջաններում Ռուսաստանի և Արևմուտքի միջև ընթացող աշխարհաքաղաքական մրցակցությունը հետզհետե մոտենում է հանգուցալուծմանը: Կասկածից վեր է, որ ուկրաինական ճակատում իր խնդիրները լուծելուց հետո Ռուսաստանն ակտիվացնելու է Հարավային Կովկասում իր դիրքերը վերականգնելուն ուղղված ջանքերը:

Հայկական կողմը պետք է պատրաստ լինի այդ զարգացումներին: Տարածաշրջանի աշխարհաքաղաքական վերափոխման, ավելի ճիշտ՝ կարգավորման ժամանակները սարերի ետևում չեն: Եվ եթե պաշտոնական Երևանը ճիշտ կողմնորոշվի գալիք զարգացումներում և դաշնակիցների ընտրության հարցում, ապա կարելի է սպասել նաև, որ վերականգնման ու նաև Արցախում որոշակի հայանպաստ լուծումների հնարավորություններ կբացվեն:

2023 թ. քաղաքական համապատկերը

Անի Մելքոնյան
Պատմաբան

2023 թ. դիմավորեցինք շրջափակման մեջ գտնվող Արցախով, որի նկատմամբ Հայաստանի իշխանության օղակներում կատարյալ անտարբերություն էր:

Նիկոլ Փաշինյանի՝ հունվարի 10-ի հերթական ասուլիսին հաջորդ օրը՝ հունվարի 11-ին, արձագանքեցին Արցախից, մասնավորապես դրան անդրադարձավ Արցախի ԱԺ ՀՅԴ խմբակցության ղեկավար Արթուր Մոսիյանը՝ նշելով. «Փաշինյանն ու Ալիևը նույն բառապաշարով են խոսում: Նրանք երկուսն էլ չեն ընդունում, որ Արցախը հանրապետություն է. դա ցավալի է, բայց փաստ է: Դրա մասին է վկայում նաև այն, որ ոչ մի անգամ «Արցախի իշխանություններ» արտահայտությունը չօգտագործեց Փաշինյանը: Մի բան հստակ է՝ 2018-ին Փաշինյանին իշխանության են բերել՝ Արցախը թշնամուն հանձնելու և Ռուսաստանին տարածաշրջանից դուրս մղելու համար: Փաշինյանի վարչախմբի՝ ՀՀ իշխանության ղեկին մնալու ամեն մի օրն ու ժամը ավելի են մոտեցնում Հայաստանի ու Արցախի կործանումը»[1]: Արցախն ընտրել էր պայքարի ճանապարհը:

Հունվարի 18-ին Արցախի ԱԺ-ն ահազանգ հնչեցրեց. «Արցախի Հանրապետության ազգաբնակչության նկատմամբ Ադրբեջանի իշխանությունների կողմից շարունակվող սողացող պատերազմը տեղի է ունենում աշխարհի գրեթե լուռ համաձայնությամբ: Այն նպատակ ունի կոտրել արցախահայության կամքը և տասնյակ հազարավոր մարդկանց էթնիկ զտումների միջոցով տեղահանել իրենց պատմական հայրենիքից: Նմանօրինակ քայլերով Ադրբեջանը փորձում է նաև ձախողել տարածաշրջանում պատերազմի օջախների մարմանն ուղղված միջազգային կառույցների և տարբեր երկրների ջանքերը....

Արցախի Հանրապետության առջև ծառացած մարտահրավերները արժանապատվորեն հաղթահարելու նպատակով դիմում ենք համայն հայությանը. պետք է համապատասխան քայլեր ձեռնարկել՝ սանձելու Ադրբեջանի ագրեսիվ գործողությունները և պաշտպանելու սեփական հողում ապրելու արցախահայության օրինական իրավունքը»[2], սակայն Հայաստանի Հանրապետությունը կառավարական մակարդակով սատար չկանգնեց Արցախին:

Հունվարի 19-ը Հայաստանի Հանրապետության համար ողբերգական օր էր. ժամը 01:30-ի սահմաններում, դեռևս չպարզված հանգամանքներում, հրդեհ էր բռնկվել Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղի տարածքում տեղակայված ՀՀ ՊՆ N զորամասի ինժեներասակրավորային վաշտի կացարանում[3]: Հրդեհի հետևանքով զոհվեց 15, վիրավորվեց 3 զինվոր:

Պատշաճ հետաքննություն չսկսած՝ իշխանության կողմից հրապարակ նետվեց բենզինի հետ անփույթ վարվելու հետևանքով հրդեհի առաջացման մասին

«եզրակացությունը», մասնավորապես. «Կառավարության ղեկավարը հայտնեց, որ պարզվել է ոչ միայն բենզին է օգտագործվել, այլև փորձ է արվել հինգ լիտրանոց տարայով այն լցնել վառարանի մեջ»[4]: Այս վարկածը, մեղմ ասած, արժանահավատ չէր, գործը քննվեց ոչ պատշաճ ձևով, իսկ բենզինի հետևանքով հրդեհի բռնկված լինելը ո՛չ ապացուցվեց, ո՛չ էլ հերքվեց:

Մենք, իհարկե, ի տարբերություն նախկին լրագրող Նիկոլ Փաշինյանի՝ զինվորների մահն ու 15 ընտանիքի դժբախտությունը շահարկելու մտադրություն չունենք, հետևաբար մանրամասնություններին չանդրադառնալով՝ առաջ անցնենք:

Փետրվարի 11-ին Հայաստանի Հանրապետությունը հումանիտար օգնություն ուղարկեց երկրաշարժից տուժած Թուրքիա[5]: Շատերը սա համարեցին մարդասիրական քայլ, շատերն էլ՝ «դիվանագիտություն», սակայն իրականությունն այն էր, որ Նիկոլ Փաշինյանը ցանկանում էր ուղղակի հաճոյանալ այն պետությանը, որը ոչ միայն 2020 թ. ամբողջ պատերազմի ընթացքում և դրանից հետո բացահայտ աջակցում էր Ադրբեջանին, այլև չէր թաքցնում և չի թաքցնում իր պանթյուրքիստական նկրտումները:

Ի պատասխան Նիկոլ Փաշինյանի թուրքասիրական ժեստի՝ Թուրքիայից ոչ միայն տարրական «շնորհակալություն» չասվեց.«...այլև ադրբեջանցի փրկարարների հետ հանդիպմանը Էրդողանը Բաքվի օգնությունը համեմատեց 44-օրյա պատերազմում Ադրբեջանին իրենց տրված օգնության հետ՝ վերահաստատելով իրենց ցեղասպան քաղաքականությունը»[6]: Նիկոլ Փաշինյանի «խաղաղության» կեղծ օրակարգին Էրդողանը հակադրեց թուրքական հար-

Կոռնիձոր. 20-ը մայիսի 2023 թ.

յուրամյակների երազանքը՝ պանթյուրքիզմը, ինչը ենթադրում է Մեծ Թուրանի ստեղծում. դրանից էլ նախևառաջ բխում է հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման Թուրքիայի նպատակը: Պատահական չէ, որ Թուրքիան և Ադրբեջանը այսօր ամեն կերպ ձգտում են ստանալ պանթյուրքիզմի շղթան կտրող Զանգեզուրը, որպեսզի կարողանան միավորվել և սկիզբ դնել պանթյուրքիզմի երկրորդ փուլին՝ թյուրքալեզու ժողովուրդների միավորմանը, որին, ըստ տրամաբանության, պետք է հաջորդեն մինչև Ալթայ և Չինաստան ընկած տարածքների, այսինքն՝ «թուրքական հայրենիքի» նվաճումը և Մեծ Թուրանի հռչակումը[7]: Քանի որ պանթյուրքիզմի առաջին փուլը՝ արևմտահայության ցեղասպանությունը, երիտթուրքերն ու հետագայում նաև Մուստաֆա Քեմալը իրականացրել են, ապա Էրդողան-Ալիև տանդեմը լծվել է երկրորդ փուլի իրագործմանը, իսկ դա ենթադրում է, որ «պետք է միավորվեին օղուզ թյուրքերը՝ օսմանյան թուրքերը, Հյուսիսային Պարսկաստանի ու Այսրկովկասի թյուրքալեզու մահմեդականները և թուրքմենները: Այս փուլը ենթադրում էր արևելահայության ամբողջական կամ մասնակի բնաջնջում. Արևելյան Հայաստանից նվազագույնը գրավվելու էին Կարսը, Արդահանը, Սուրմալուն, Նախիջևանը, Զանգեզուրը և Արցախը, որպեսզի կապ ստեղծվեր կովկասյան թյուրքերի (1936 թվականից՝ ադրբեջանցիներ) հետ: Ըստ այդմ էլ. «Կյանքի էր կոչվում ոչ միայն «Թուրքիան՝ թուրք-օսմաններին» լոզունգը, այլև թրքախոս ժողովուրդներին իրենց ենթարկելու, Անդրկովկասը զավթելու, Միջին Ասիայի, Ռուսաստանի, Պարսկաստանի հսկայածավալ տերիտորիաներն Օսմանյան կայսրությանը կցելու կարգախոսը»[8]:

Նիկոլ Փաշինյանն այս մասին չգիտի՞. իհարկե, գիտի, բայց նպաստում է պանթյուրքիզմի իրականացմանը, որին ի նպաստ արված առաջին քայլը Արցախի հանձնումն էր, հաջորդը կլինի Սյունիքի, այսպես կոչված, միջանցքի հանձնումը, ինչն էլ շղթայական ռեակցիա կառաջացնի: Հետևաբար ամենևին էլ պատահական չէր, որ Թուրքիա ուղարկված օգնությունը դարձավ լոկ արտաքին ճակատում մեկ-երկու հայ պաշտոնյաների ու Նիկոլի գլուխը շոյելու փոքրիկ առիթ, որն օգտագործեց միայն եվրոպացի շարքային պաշտոնյա, Հարավային Կովկասի և Վրաստանում ճգնաժամի հարցերով Եվրոպական միության հատուկ ներկայացուցիչ Տոյվո Կլաարը:

Վաղը Անկարայի կողմից Հայաստանի ու Արցախի հանրապետություններին ուղղված նոր սպառնալիքի, առաջադրված նախապայմանի դեպքում միջազգային հանրությանն ուղղված Երևանից հնչեցվելիք օգնության կանչին լինելու է զարմացական արձագանք, թե կարծես Մարգարայի կամուրջը շահագործելու ցանկությամբ հայ-թուրքական հակամարտությունն ավարտվել էր[9]:

Արդեն փետրվարի 23-ին Ադրբեջանի պահանջով Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը Ռուբեն Վարդանյանին հեռացրեց Արցախի Հանրապետության պետնախարարի պաշտոնից, մինչդեռ Ադրբեջանի նպատակը Ռուբեն Վարդանյանը չէր, այլ Արցախը կլանելը և Հայաստանը ստրկացնելը: Դրան Ղարաբաղի մասով գոնե Ռուբեն Վարդանյանը խանգարում էր: Հիմա Վարդանյանին հանելով՝ իրենք քայլ առ քայլ մոտենալու են Ղարաբաղի կլանմանը[10]:

Մարտ, ապրիլ և մայիս ամիսներն անցան աշխարհի տարբեր երկրներում ՀՅԴ Հայ դատի կառույցների և Հայաստանում մտահոգ շրջանակների կողմից Արցախին զորակցության ցույցերով ու ակցիաներով, իսկ մայիսի 20-ին ՀՅԴ «Կամավորական շարժում» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ Կոռնիձորում՝ Ադրբեջանի կողմից ապօրինի շրջափակված Բերձորի միջանցքից չնչին հեռավորության վրա, Հայաստանի տարբեր հատվածներից հավաքված հազարավոր քաղաքացիներ երթով և հանրահավաքով իրենց զորակցությունը հայտնեցին Արցախին: Նույն պահին Արցախում նույնպես երթ էր՝ հաջակցություն Կոռնիձորում հավաքված հայրենակիցների: Արցախցիները Ստեփանակերտի զինվորական պանթեոնից քայլերթով շարժվել են դեպի Արցախը Մայր Հայաստանին կապող ավտոճանապարհի Զառին բաղ կոչվող տեղամաս[11]:

Նիկոլ Փաշինյանը, իհարկե, իրեն նման չէր լինի, եթե հասարակության ուշադրությունը շեղելու համար մի նոր շոու չկազմակերպեր: Փաշինյանական շոու ծրագրում այս անգամ Աշոտ Փաշինյանի «առևանգումն» էր, որի մեջ մեղադրեցին զոհված զինծառայող Ժորա Մարտիրոսյանի մայրիկին՝ Գայանե Հակոբյանին, որի նկատմամբ կալանքի որոշում կայացվեց: Ընդդիմադիր շրջանակներում ընկալումը հետևյալն էր. «Այս իշխանությունը խափանման միջոցը դիտարկում է որպես պատիժ և մահակ բոլոր նրանց համար, որոնց չի սիրում: Ինչո՞ւ է պետք կալանավորել տիկին Գայանեին, արդյո՞ք որևէ բանական մարդ կասկածում է, թե տիկին Գայանեն կարող է ազդել գործի քննու-

թյան վրա կամ խուսափել արդար քննությունից: Սա քաղաքական սադիզմ է. Փաշինյանի իշխանությունը փորձում է պատժել իր ընդդիմախոսներին «մեր դեմ խաղ չկա» սկզբունքով»[12]:

Մայիսի 28-ին տեղի ունեցավ Թուրքիայի նախագահական ընտրությունների երկրորդ փուլը, նախագահ վերընտրվեց Էրդողանը. նույն օրը Նիկոլ Փաշինյանը շնորհավորեց Էրդողանին վերընտրվելու կապակցությամբ. «Շնորհավորում եմ նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանին վերընտրվելու կապակցությամբ: Ակնկալում եմ, որ կշարունակենք համատեղ աշխատանքը մեր երկրների միջև հարաբերությունների կարգավորման ուղղությամբ»[13]: Բանական մարդու մոտ հարց է ծագում, թե ի՞նչ կարգավորումից է խոսում Նիկոլ Փաշինյանը, երբ Թուրքիայի ու անձամբ Էրդողանի համար հայ-թուրքական «հարաբերությունների կարգավորումը» նախևառաջ ցեղասպանության պահանջատիրությունից հայերի հրաժարումն է ու պանթյուրքիզմի իրականացման համար, այսպես կոչված, միջանցքի տրամադրումը: Թեև, դատելով Նիկոլ Փաշինյանի հռետորաբանությունից ու պահվածքից, նա ամենևին էլ դեմ չէ ցեղասպանության ուրացմանն ու թուրքերին Մեղրիով միջանցք տալուն, և միգուցե հենց դա՞ նկատի ունի Նիկոլ Փաշինյանը՝ «հարաբերությունների կարգավորում» ասելով, ճիշտ այնպես, ինչպես «Արցախյան հակամարտության կարգավորում» և «զրոյական կետից բանակցությունների վարում» ասելով՝ հասկանում էր Արցախի դավաճանական հանձնումը Ադրբեջանին:

Հունիսի 3-ին Նիկոլ Փաշինյանը մասնակցեց Էրդողանի երդման արարողությանը՝ ամոթի ու նվաստացման հերթական արարն ապահովելով Հայաստանի ու հայության համար: Էրդողանն, իհարկե, իր «բարոյական աջակցությունը» ցույց տվեց նրան՝ գովելով Արցախը Ադրբեջանի մաս ճանաչելու համար. «Մենք Փաշինյանի հետ այցի ժամանակ ոտքի վրա զրուցեցինք: Շատ կարևոր է, որ Փաշինյանը Ղարաբաղը ճանաչեց Ադրբեջանի տարածքային ամբողջականության մեջ: Մինչ այս պահը Փաշինյանն իր խոսքից հետ չի կանգնել»[14]:

Օգոստոսի 7-ին, Արցախի Հանրապետության ԱԺ նախագահ Արթուր Թովմասյանի հրաժարականից հետո ԱԺ խորհրդարանի կողմից հրավիրված նիստում ԱՀ ԱԺ նախագահ ընտրվեց ՀՅԴ Բյուրոյի անդամ Դավիթ Իշխանյանը[15]: Թվում էր, թե Արցախի ծանր իրավիճակը հաղթահարելու ելքեր են ուրվագծվում, սակայն Փաշինյան-Ալիև-Էրդողան եռյակը ձեռքերը ծալած չէր նստել, բայց այդ մասին մի փոքր ուշ:

Օգոստոսի 30-ին մամուլի ասուլիսի ժամանակ անդրադառնալով նախորդ օրը Ադրբեջանի կողմից Ակնայով «հումանիտար» բեռ ուղարկելուն ԱՀ Ազգային Ժողովի նախագահ Դավիթ Իշխանյանն ասաց, որ հումանիտար բեռի համար մեկ ճանապարհ կա. Լաչինի միջանցքն է[16]. «Եվ այդ միջանցքով անխափան երթևեկությունը պետք է վերականգնվի: Դա ամրագրված է նոյեմբերի 9-ին ստորագրված փաստաթղթով: Ինչ վերաբերում է Ակնա-Ստեփանակերտ ճանապարհի գործարկման ադրբեջանական թեզին, ապա դա նորություն չէ: Շաբաթվա ընթացքում ադրբեջանական կողմը արևմտյան գործընկերների, ռուսական գործընկերների միջոցով փորձել է այդ մտադրությունը ներկայացնել և իրականություն դարձնել:

Ադրբեջանի երեկվա քայլը մեզ հասկանալի է, նախ՝ անընդունելի է: Բավականին քննարկումներ են եղել, մեր հասարակությունը պետք է տեղեկացված լինի, որ Արցախի իշխանությունների քննարկումները հանգել են նրան, որ այդ ճանապարհի գործարկումը անընդունելի է մեզ համար մի շարք պատճառներով: Պատճառներից մեկն այն է, որ մենք ունենք մեկ ճանապարհ՝ Լաչինը և երկրորդ՝ միջանցքի հասկացողություն մեզ համար չպետք է ամրագրենք: Ադրբեջանը, քաղաքական նպատակներ հետապնդելով, փորձում է աշխարհին ցույց տալ, որ իրենք ներքին խնդիր ունեն, և Արցախի հումանիտար ճգնաժամը չի կարող առնչվել արտաքին աշխարհի հետ: Այս խնդիրը հասել է ՄԱԿ-ի ԱԽ»[17]:

Օգոստոսի 31-ին Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը Արցախի ԱԺ-ին ներկայացրեց իր հրաժարականի դիմումը: Սեպտեմբերի 9-ին Արցախի Հանրապետության խորհրդարանի կողմից երկրի նախագահ ընտրվեց Սամվել Շահրամանյանը, նույն օրը խորհրդարանում նախագահ Շահրամանյանը հայտարարեց. «Լեռնային Ղարաբաղը պիտի կարգավիճակ ստանա, Հայաստանի հետ ուղիղ կապ պետք է ունենանք Լաչինի միջանցքով, այլ ճանապարհներ ևս կարող են գործարկվել, սակայն դրանք չպետք է փոխարինեն միջանցքին:

Բանակցություններ պետք է լինեն, ձևաչափը կարող է լինել ինչպես բազմակողմ, այնպես էլ երկկողմ՝ երրորդ կողմի երաշխավորությամբ, Ստեփանակերտը պետք է լինի բանակցությունների սուբյեկտ»[18]: Այս իրադարձությունները Թուրքիայի, Ադրբեջանի ինչպես նաև Նիկոլ Փաշինյանի կառավարության սրտով չէին, և ինչպես ասացինք, Էրդողան-Ալիև-Փաշինյան եռյակը չէր պատրաստվում ձեռքերը ծալած նստել: Ընդամենը 10 օր էր, ինչ Սամվել Շահրամանյանը զբաղեցնում էր Արցախի Հանրապետության նախագահի պաշտոնը, երբ սեպտեմբերի 19-ին Արցախի տեղեկատվական շտաբը լուր տարածեց ադրբեջանական լայնածավալ հարձակման մասին: Թշնամու դեմ միայնակ մնացած Արցախը հերոսաբար մաքառում էր, իսկ այդ նույն ժամանակ 1991 թ. Արցախի անվտանգության երաշխավոր Հայաստանի Հանրապետության այսօրվա «թավշյա» վարչապետը հայտարարեց. «Այս գործընթացի նպատակներից մեկը Հայաստանին ռազմական գործողությունների մեջ ներքաշելն է, սա նպատակ ունի Հայաստանում քաոս ստեղծել»[19], ասել է թե՝ Նիկոլ Փաշինյանը կանաչ լույս վառեց Ադրբեջանի համար՝ շարունակելու ցեղասպանությունը Արցախում: Միայնակ մնացած, ջլատված ու Հայաստանի իշխանությունների կողմից լքված Արցախը ստիպված եղավ զենքերը վայր դնել և հանձնվել, իսկ դա նշանակում էր Արցախի անխուսափելի հայաթափում:

Սեպտեմբերի 28-ին լուր տարածվեց այն մասին, որ Սամվել Շահրամանյանը հրամանագիր է ստորագրել, որով. «մինչև 2024 թվականի հունվարի 1-ը պետք է լուծարվեն Արցախի բոլոր պետական հիմնարկներն ու կազմակերպությունները, իսկ Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետությունը դադարում է գոյություն ունենալ»[20], սակայն հոկտեմբերի 20-ին Սամվել Շահրամանյանը հերքեց այդ լուրը՝ ասելով, որ Արցախի Հանրապետությունը չի լուծարվել[21]:

Արցախի հայաթափումը առաջ բերեց հանրային լայն ընդվզում, որն, իհարկե, «ժողովրդավարության բաստիոն» Հայաստանի «թավշյա» կառավարությունը ճնշեց ամենաբիրտ ու ամենավայրենի միջոցներով:

Նոյեմբերն անցավ բռնագաղթված արցախցիներին օգնություն ցուցաբերելու հասարակական տարբեր նախաձեռնություններով:

2023 թ. ավարտվում է, հստակ չէ, թե ինչ իրադարձություններ տեղի կունենան 2024 թ., թեպետ դժվար չէ կռահել, որ Նիկոլ Փաշինյանի վարչապետության պայմաններում Հայաստանի Հանրապետության համար հուսադրող ոչինչ չի կարող լինել: Հետևաբար շարունակում ենք պնդել այն, ինչ բազմիցս ասել ենք. Հայաստանի Հանրապետության շահերից է բխում օր առաջ ազատվել Նիկոլ Փաշինյանի ու ՔՊ-ի իշխանությունից, որպեսզի Հայաստանը «շնչելու», ոտքի կանգնելու և գալիք մարտահրավերներին դիմագրավելու հնարավորություն ունենա: ■

Օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ

Գրականություն

1. Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Եր., 1982
2) Մամուլի նյութեր
1. «Դրոշակ», մարտ, 2021, թիվ 3
2. «Դրոշակ», հոկտեմբեր, 2023, թիվ 10
3) Համացանցի նյութեր
1.https://www.arfd.am/new/news/61429/?fbclid=IwAR2F0NolPbDOGOtdjoFjzyXDJiO2SFML5pu16oRiSrjbAE7_tix9W0jEj80(մուտք՝ 20.12.2022 թ.):
2.https://www.arfd.am/new/news/61516/?fbclid=IwAR1nKD1dylXCQw0nxE6xXVO7f76BMfR7LiElrC57IY4crJZxeNYDkL88Zh0(մուտք՝ 20.12.2022 թ.):
3. https://hetq.am/hy/article/152251(մուտք՝ 20.12.2022 թ.):
4. https://hetq.am/hy/article/152260(մուտք՝ 20.12.2022 թ.):
5. https://yerkir.am/hy/article/2023/02/11/7623(մուտք՝ 20.12.2022 թ.):
6.https://www.arfd.am/new/news/62129/?fbclid=IwAR1_A_Pm-Vx3I3KPe5BuwAv_HG_KxcRufJeKxcCYlCJakiOijf5gr_21hcQk(մուտք՝ 20.12.2022 թ.):
7.https://www.arfd.am/new/news/62129/?fbclid=IwAR1_A_Pm-Vx3I3KPe5BuwAv_HG_KxcRufJeKxcCYlCJakiOijf5gr_21hcQk(մուտք՝ 20.12.2022 թ.):
8.https://www.arfd.am/new/news/62437/?fbclid=IwAR3GgzzgEwwQuUBK9EWS3oeqQvB5f-X9zpw5mrIHdg_NedBNNbq07LReMlE(մուտք՝ 20.12.2022 թ.):
9. https://yerkir.am/hy/article/2023/05/20/12748(մուտք՝ 20.12.2022 թ.):
10.https://www.arfd.am/new/news/64942/?fbclid=IwAR1eQovCMUlg9eeuh2OwSWY-zxVfNtAEb-pOAEKboIERvyfj_Ft0gAh0Rd8(մուտք՝ 20.12.2022 թ.):
11. https://armenpress.am/arm/news/1111991.html(մուտք՝ 20.12.2022 թ.):
12.https://politik.am/am/xarabaxy-adrbejani-mas-chanacheluc-heto-pashinyann-ir-khosqic-het-chi-kangnum-erdoxan (մուտք՝ 20.12.2022 թ.)
13.https://www.arfd.am/new/news/66636/?fbclid=IwAR1_A_Pm-Vx3I3KPe5BuwAv_HG_KxcRufJeKxcCYlCJakiOijf5gr_21hcQk(մուտք՝ 20.12.2022 թ.):
14.https://www.arfd.am/new/news/67150/?fbclid=IwAR2yrI3qPJ8LwNYXTMEM-0w0DfPebeH-VkOHzu_Q8E1tWWOFM2vtu_ZBvCA(մուտք՝ 20.12.2022 թ.):
15. https://armenpress.am/arm/news/1119134.html(մուտք՝ 20.12.2022 թ.):
16. https://mediamax.am/am/news/karabakh/52684/ (մուտք՝ 20.12.2022 թ.):
17. https://yerkir.am/hy/article/2023/10/20/19776(մուտք՝ 20.12.2022 թ.):

Ծանոթագրություններ

1.https://www.arfd.am/new/news/61429/?fbclid=IwAR2F0NolPbDOGOtdjoFjzyXDJiO2SFML5pu16oRiSrjbAE7_tix9W0jEj80 (մուտք՝ 20.12.2022 թ.):
2.https://www.arfd.am/new/news/61516/?fbclid=IwAR1nKD1dylXCQw0nxE6xXVO7f76BMfR7LiElrC57IY4crJZxeNYDkL88Zh0(մուտք՝ 20.12.2022 թ.):
3. https://hetq.am/hy/article/152251(մուտք՝ 20.12.2022 թ.):
4. https://hetq.am/hy/article/152260(մուտք՝ 20.12.2022 թ.):
5. https://yerkir.am/hy/article/2023/02/11/7623(մուտք՝ 20.12.2022 թ.):
6.https://www.arfd.am/new/news/62129/?fbclid=IwAR1_A_Pm-Vx3I3KPe5BuwAv_HG_KxcRufJeKxcCYlCJakiOijf5gr_21hcQk(մուտք՝ 20.12.2022 թ.):
7. «Դրոշակ», մարտ, 2021, թիվ 3, էջ 34:
8. Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, հատ., Ա, Եր., 1982, էջ 208:
9.https://www.arfd.am/new/news/62129/?fbclid=IwAR1_A_Pm-Vx3I3KPe5BuwAv_HG_KxcRufJeKxcCYlCJakiOijf5gr_21hcQk(մուտք՝ 20.12.2022 թ.):
10.https://www.arfd.am/new/news/62437/?fbclid=IwAR3GgzzgEwwQuUBK9EWS3oeqQvB5f-X9zpw5mrIHdg_NedBNNbq07LReMlE(մուտք՝ 20.12.2022 թ.):
11. https://yerkir.am/hy/article/2023/05/20/12748(մուտք՝ 20.12.2022 թ.):
12.https://www.arfd.am/new/news/64942/?fbclid=IwAR1eQovCMUlg9eeuh2OwSWY-zxVfNtAEb-pOAEKboIERvyfj_Ft0gAh0Rd8(մուտք՝ 20.12.2022 թ.):
13. https://armenpress.am/arm/news/1111991.html(մուտք՝ 20.12.2022 թ.):
14.https://politik.am/am/xarabaxy-adrbejani-mas-chanacheluc-heto-pashinyann-ir-khosqic-het-chi-kangnum-erdoxan(մուտք՝ 20.12.2022 թ.):
15.https://www.arfd.am/new/news/66636/?fbclid=IwAR1_A_Pm-Vx3I3KPe5BuwAv_HG_KxcRufJeKxcCYlCJakiOijf5gr_21hcQk:
16.https://www.arfd.am/new/news/67150/?fbclid=IwAR2yrI3qPJ8LwNYXTMEM-0w0DfPebeH-VkOHzu_Q8E1tWWOFM2vtu_ZBvCA(մուտք՝ 20.12.2022 թ.):
17. Նույն տեղում:
18. https://armenpress.am/arm/news/1119134.html(մուտք՝ 20.12.2022 թ.):
19. «Դրոշակ», հոկտեմբեր, 2023, թիվ 10, էջ 4:
20. https://mediamax.am/am/news/karabakh/52684/(մուտք՝ 20.12.2022 թ.):
21. https://yerkir.am/hy/article/2023/10/20/19776 (մուտք՝ 20.12.2022 թ.):

Հայաստան-Ադրբեջան-Թուրքիա հարաբերություններն ու առկա մարտահրավերները

Նարե Գևորգյան
ԵՊՀ իրանագիտության ամբիոնի դասախոս

2023 թվականը քաղաքական զարգացումներով իր տեղը չզիջեց նախորդ տարիներին և կարելի է նույնիսկ նշել, որ հայ-թուրքական և հայ-ադրբեջանական հարաբերություններում առկա խնդիրներն ու գործող մարտահրավերներն էլ ավելի հստակեցվեցին: Չնայած ՀՀ-ում ներկայումս իշխող ղեկավարությունը դեռևս շարունակում է խոսել խաղաղության օրակարգի և հարաբերությունների բարելավման տեսլականի մասին՝ այնուամենայնիվ տեղի ունեցած գործընթացները, մասնավորապես Արցախի Հանրապետության վերջնական կապիտուլյացիան փաստում են այն դառավոր միտքը, որ հայ-թուրք-ադրբեջանական բարեկամության գաղափարն անհեթեթություն է, իսկ դրան ուղղված քայլերը ոչ այլ ինչ են, քան սին հույսեր:

Եթե ուղղորդվենք ՀՀ իշխանությունների կեղծ օրակարգով, ապա հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման վերաբերյալ կարող ենք նշել մի քանի կետեր, որոնք կներառեն.

1. Դիվանագիտական երկխոսության վերականգնում: Դիվանագիտական հարաբերությունների հաստատումը կամ պաշտոնական բանակցությունների մեջ ներգրավվելը կարող է նշանակալի ձեռքբերում լինել: Եթե երկու երկրները վերակենդանացնեն իրենց դիվանագիտական կապերը, դա կարող է դռներ բացել հետագա երկխոսության և պատմական տարբեր խնդիրների լուծման համար:

2. Հարաբերությունների կարգավորում: Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի վերաբացումը էական քայլ է հարաբերությունների կարգավորման ուղղությամբ: Սա կարող է հանգեցնել բարելավված տնտեսական և մշակութային փոխանակումների, ինչպես նաև նպաստել մարդկանց միջև փոխգործակցության խթանմանը:

Բայց այս ամենը հնարավոր կլիներ, եթե Թուրքիան մշտապես թշնամական վերաբերմունք չցուցաբերեր և բացահայտ չաջակցեր ադրբեջանական արհեստածին պետության՝ Արցախի օկուպացման և տեղի հայերի էթնիկ զտման քաղաքականությանը: Սեպտեմբերյան ռազմական գործողություններից հետո Ռեջեփ Թայիբ Էրդողանը մեկ անգամ չէ, որ հրապարակավ նշել է իր միանշանակ աջակցությունն Ադրբեջանին և Իլհամ Ալիևին, որին դիմում է իբրև իր փոքր եղբոր: Վերջերս ելույթներից մեկում Ռ. Էրդողանը կրկին հստակեցրեց, որ Արցախն իր որդեգրած թուրքական քաղաքականության և երթի գլխավոր կետերից է, և դրան կարևորություն չտալը կխոչընդոտի պանթյուրքական իր ծրագրին:

Ընդհանրապես խոսել հայ-ադրբեջանական հարաբերությունների մասին ենթադրում է նրանում ներառել նաև Թուրքիան, քանի որ վերջինիս ինչպես ուղղակի,

այնպես էլ անուղղակի ներգրավվածությունը մշտապես եղել է և լինելու է իր նպատակների իրագործման համատեքստում: Իզուր չէ, որ ԱՄՆ-ն հաճախ է նշում, որ դեմ է Ադրբեջանի և Հայաստանի միջև երկխոսությանը երրորդ երկրների մասնակցությանը, իսկ պետդեպարտամենտի խոսնակ Մեթյու Միլլերն ասել է. «Կարևոր է, որ Ադրբեջանն ու Հայաստանը ուղղակիորեն լուծեն հարցերն ի շահ տարածաշրջանի»[1]:

Իր հերթին Էրդողանը հայտարարել է, որ Հայաստանն անվտանգության համար պետք է նայի իր հարևաններին, ոչ թե հազարավոր կիլոմետրեր հեռու գտնվող երկրներին. «Հայ ժողովուրդը և նրա ղեկավարությունը պետք է ապահովություն փնտրեն խաղաղության և համագործակցության մեջ, այլ ոչ թե տարածաշրջանից հազարավոր կիլոմետրեր հեռու: Արևմտյան երկրների կողմից ուղարկված ոչ մի զենք ու ռազմամթերք չի կարող ապահովել կայունություն և խաղաղություն»[2]:

Միաժամանակ Թուրքիայի նախագահը Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանին խորհուրդ է տվել «բարեկամության ձեռք» մեկնել Ադրբեջանին: Նրա կարծիքով՝ Արցախյան հակամարտության ավարտից հետո տարածաշրջանում նոր դարաշրջան է սկսվել, թեև արևմտյան քաղաքական գործիչները դա չեն հասկանում[3]:

Նոյեմբերի 27-ին Բաքվում տեղի ունեցած Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ հանդիպման ընթացքում էլ Թուրքիայի պաշտպանության նախարար Յաշար Գյուլերը կրկին շեշտեց, որ Արցախը մշտապես եղել է Ադրբեջանին ենթակա շրջան[4]:

Բազմիցս հնչեցված խաղաղության կոչերին զուգահեռ այս տարվա սեպտեմբերի 30-ից (Արցախի վրա հարձակումից հետո) առնվազն 27 օդանավ է Թուրքիայից և Իսրայելից ժամանել Ադրբեջան՝ ամենայն հավանականությամբ տեղափոխելով ռազմական

բեռներ՝ զենք և զինամթերք[5]: Եվ հենց սա է մեր երկու հարևան պետությունների տարածաշրջանային «խաղաղության ու կայունության» մոդելը:

Այնուամենայնիվ ՀՀ դե-ֆակտո իշխանությունները կարծես սա չեն հասկանում: Նոյեմբերի 28-ին Հայաստանի խորհրդարանի նախագահ Ալեն Սիմոնյանը լրագրողներին տված հարցազրույցում նշեց, որ ժամանակի ընթացքում ադրբեջանցիները ցանկության դեպքում կկարողանան հաստատվել Հայաստանում. «Ժամանակը կգա, հուսով եմ՝ մենք ամեն ինչ կանենք սրա համար, և դա բնականաբար կգա... Հայերն ու ադրբեջանցիները պետք է ապրեն կողք կողքի, առևտուր անեն: Ես չեմ բացառում, որ որոշ հայեր կվերադառնան Ադրբեջանի տարածքում գտնվող իրենց տները, նաև չեմ բացառում, որ որոշ ադրբեջանցիներ որոշ ժամանակ անց կգան ու կհաստատվեն Հայաստանում»[6]:

Փաշինյանն էլ հույս է հայտնել, որ մոտ ապագայում մենք կկարողանանք լուրեր լսել Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի բացման մասին երրորդ երկրների քաղաքացիների և դիվանագիտական անձնագրեր ունեցողների համար. «Մենք հույս ունենք Հարավային Կովկասը դարձնել մի տարածաշրջան, որը լավ նորություններ է հաղորդում աշխարհին: Նա ընդգծեց, որ Հայաստանն ու ինքը պատրաստ են ստանձնել անհրաժեշտ պատասխանատվությունը՝ այս նպատակին հասնելու համար»:

Այս ֆոնին 2022 և 2023 թվականներին ակտիվացել են միջազգային միջնորդական ջանքերը, ընդ որում Մոսկվայի դերը, որպես հակամարտության մեջ առաջնային միջնորդ, աստիճանաբար ստանձնում է ԵՄ-ն և նաև ԱՄՆ-ն՝ փորձելով խուսափել տարածաշրջանում անվտանգության վակուումից: Կրեմլը դիվանագիտական ասպարեզում այս փոփոխությանն արձագանքել է բաց քննադատությամբ՝ փաստացի դադարեցնելով իր մասնակցությունը ԵԱՀԿ-ին: Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան, անդրադառնալով ֆրանսիական «Բաստիոն» զրահամեքենաները Հայաստան ուղարկելուն, այն անվանել է ոչ այլ ինչ, քան հանդգնություն. «Ուկրաինայում իրական մարտական գործողություններում նրանք ցույց տվեցին իրենց ցածր արդյունավետությունը, ինչը նշանակում է, որ Ֆրանսիան միայն անորակ ռազմական զենք է վաճառել Երևանին: Պարզ չէ, թե այս գնումը ինչպես կարող է ուժեղացնել Հայաստանի անկախ տարածքի պաշտպանությունը: Արևմուտքից օգնության Երևանի հույսը ձախողվել է, և դա կապված է նաև Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագրի կնքման հետ»[7]:

Միաժամանակ Հայաստանի արտգործնախարարությունը հայտնեց, որ հայկական կողմը ադրբեջանական կողմին է ներկայացրել խաղաղ համաձայնագրի իր վեցերորդ առաջարկը, իսկ արդեն նոյեմբերի 30-ին նախնական պայմանավորվածության համաձայն՝ նախատեսվում է Հայաստանի և Ադրբեջանի միջև պետական սահմանների սահմանազատման հանձնաժողովի հաջորդ նիստը[8]: Իրականում Բաքվի բարբարոսական վարչախմբին պետք չէ Հայաստանի հետ ոչ «խաղաղության պայմանագիր», ոչ էլ ինչ-որ սահմանազատում կամ սահմանագծում, քանզի վերջինիս միակ նպատակը Հայաստանի աշխարհաքաղաքական և նույնիսկ աշխարհագրական մահն է[9]:

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը Բաքվում իր իրաքցի գործընկերոջ հետ համատեղ ասուլիսում ասել է, որ Հայաստանը պետք է ծրագրի իր ապագան՝ հիմնվելով ազգային շահերի վրա, այլ ոչ թե մեր տարածաշրջանից հեռու գտնվող երկրների, հատկապես արյունոտ երկրների հավակնությունների վրա[10]:

Սրա հետ մեկտեղ «Արևմտյան Ադրբեջան» տերմինը ավելի մեծ տարածվածություն է ձեռք բերում Ադրբեջանի Հանրապետության հանրային քննարկումներում, ինչը ևս մեկ խթան է երկուստեք լարվածության և բանակցությունների տապալման համար:

2024 թվականի հետպատերազմյան զարգացումները մեծապես պայմանավորված կլինեն հրադադարի համաձայնագրի ստորագրմամբ և դրա արդյունավետությամբ, ինչպես նաև Հայաստանի և Ադրբեջանի միջև վստահության վերականգնմանը և հաշտեցմանը նպաստելու ջանքերով: Ինչ գին կվճարի դրա դիմաց Հայաստանը: Երկրները կարող են արդյոք դիվանագիտական ջանքեր գործադրել՝ լուծելու առկա խնդիրները և աշխատել տարածաշրջանում երկարաժամկետ խաղաղության և կայունության հաստատման ուղղությամբ: 2024 թվականի նրանց հարաբերությունների կոնկրետ հետագիծը կախված կլինի տարբեր գործոններից և զարգացումներից, որոնք այս պահին հնարավոր չէ որոշակիորեն կանխատեսել: Ակնհայտ է այն, որ հերթական հաղթանակներից ու ձեռքբերումներից հետո Բաքվի իշխանությունների ախորժակն ավելի է բացվում: Մյուս կողմից՝ շարունակվում է թուրք-ադրբեջանական բազմակողմանի և մշտական ճնշումը Հայաստանի վրա՝ սեփական հավակնությունները Հայաստանին պարտադրելու պահանջով: ■

Օգտագործված աղբյուրներ

1. https://factor.am/ru/48699.html:
2. https://t.me/KarabakhRu/40128:
3. https://t.me/KarabakhRu/40128:
4. https://t.me/KarabakhRu/40300:
5. https://t.me/varuzhandragoman/2576:
6. https://t.me/MiranPress/15438:
7. https://ru.armeniasputnik.am/20231122/bastiony-pokazali-nizkuyu-effektivnost-na-ukraine-zakharova-o-postavkakh-erevanu-68964579.html:
8. https://t.me/MiranPress/15381:
9. https://t.me/vardan_voskanyan/779:
10. https://www.farsnews.ir/news/14020830000956/%D8%B4%D8%B4%D9%85%DB%8C%D9%86-%D9%BE%DB%8C%D8%B4%D9%86%D9%87%D8%A7%D8%AF-%D8%B5%D9%84%D8%AD-%D8%A7%D8%B1%D9%85%D9%86%D8%B3%D-8%AA%D8%A7%D9%86-%D8%A8%D9%87-%D8%AC%D9%85%D9%87%D9%88%D8%B1%DB%8C-%D8%A2%D8%B0%D8%B1%D8%A8%D8%A7%DB%8C%D8%AC%D8%A7%D9%86:

Հայաստան-Իրան-Ռուսաստան հարաբերությունների ընդհանուր բնութագիրը (2023 թ. ընթացքում տեղի ունեցած գործընթացների համատեքստում)

Լիանա Պետրոսյան
Պատմ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրանագիտության ամբիոնի ասիստենտ

Հայաստանը, Իրանը և Ռուսաստանը տարածաշրջանում պատմականորեն բազմաշերտ ու բազմատեսակ կապեր են ունեցել, որոնք վերջին տարիներին խորացել, զարգացել կամ ինչ-որ առումով հետընթաց են ապրել: 2020 թ. 44-օրյա պատերազմից և հատկապես 2023 թ. սեպտեմբերին Արցախում տեղի ունեցած հայերի էթնիկ զտումից հետո հարավկովկասյան տարածաշրջանում ձևավորվել է նոր քաղաքական իրադրություն, որի համատեքստում զգալի փոփոխություններ են գրանցվել նաև այս երեք երկրներից երկուսի արտաքին քաղաքական, իսկ Հայաստանի դեպքում՝ նաև ներքաղաքական օրակարգերում: Հոդվածում քննության են առնվելու վերջին շրջանում Հայաստան-Իրան-Ռուսաստան հարաբերություններում տեղի ունեցած առանցքային զարգացումներն ինչպես եռակողմ ձևաչափով, այնպես էլ Հայաստան-Ռուսաստան և Հայաստան-Իրան ձևաչափերով:

Տնտեսական համագործակցություն. 2023 թ. Հայաստանի, Իրանի և Ռուսաստանի միջև տնտեսական համագործակցությունը զգալի աճ է գրանցել: Հայաստանն ու Իրանը ակտիվացրել են երկկողմ առևտրային հարաբերությունները՝ կենտրոնանալով ներդրումների ամրապնդման, գործընկերության խորացման և առևտրի ծավալների ընդլայնման վրա: Համատեղ տնտեսական կոմիտեների ստեղծումը նպաստել է առանցքային հարցերի շուրջ երկխոսությանը: 2023 թ. ընթացքում Հայաստանն ու Իրանը համագործակցել են տարբեր տարածաշրջանային հարթակներում՝ ներառյալ Տնտեսական համագործակցության կազմակերպությունը (ՏՀԿ) և Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպությունը: Սրանք նպաստել են տարածաշրջանային մարտահրավերների վերաբերյալ քննարկումներին, խթանել երկխոսությունը և բացահայտել համագործակցության հնարավորությունները այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են առևտուրը, էներգետիկան և տրանսպորտը:

Հայաստանի համար, որը մեծապես կախված է էներգիայի ներմուծումից, կարևոր է էներգետիկ ոլորտում Իրանի հետ համագործակցությունը: Երկու երկրների միջև մասնավորապես էլեկտրահաղորդման գծի կառուցումը խթանել է միջսահմանային էներգետիկ առևտուրը և ամրապնդել էներգետիկ անվտանգությունը:

Հայաստանի և Իրանի միջև ազատ առևտրի համաձայնագրի մշակումը դրական ազդեցություն է ունեցել երկու երկրների տնտեսությունների վրա, ինչն էլ իր հերթին հանգեցրել է առևտրի և ներդրումների հոսքերի ավելացմանը: Երկու երկրներն էլ ակտիվորեն աշխատել են առևտրային խոչընդոտները վերացնելու

ուղղությամբ՝ պարզեցնելով մաքսային ընթացակարգերը և միջսահմանային փոխադրումները: Համատեղ առևտրի պալատների ստեղծումը նաև հարթակ է ստեղծել բիզնեսին կապվելու և համագործակցության նոր ուղիներ ուսումնասիրելու համար:

Բացի այդ՝ «Հյուսիս-Հարավ տրանսպորտային միջանցք» ծրագրի շուրջ համագործակցությունը միտում ունի ընդլայնելու տարածաշրջանային կապը և տնտեսական ինտեգրումը, ինչը, մեր դիտարկմամբ, շատ ավելի արդյունավետ և շահեկան կլիներ Արցախում հայկական բնակչության և հայկական Արցախի առկայության պայմաններում (գաղտնիք չէ, որ ոչ պաշտոնապես Արցախի Հանրապետությունը տնտեսական կապեր է ունեցել Իրանի Իսլամական Հանրապետության հետ):

2023 թ. ընթացքում Հայաստանի և Ռուսաստանի միջև տարբեր նախաձեռնություններ են մեկնարկել, ինչպիսիք են էներգետիկան, զբոսաշրջությունը, գյուղատնտեսությունը և տեխնոլոգիաները: Հայաստանի SS ոլորտում աճ է գրանցվել, որը մասամբ նպաստում էր նաև ռուսական ներդրումներին: Բացի այդ՝ խորացել էին առևտրային կապերը՝ երկկողմ առևտրի և ներդրումների ավելացման տեսքով:

Քաղաքական համագործակցություն. 2023 թ. Հայաստանը և Իրանը, ի տարբերություն Հայաստանի և Ռուսաստանի, շարունակել են ամրապնդել իրենց քաղաքական համագործակցությունը: Հայաստանի և Իրանի ղեկավարների միջև կանոնավոր բարձր մակարդակի հանդիպումներն ու երկխոսությունները խթանել են փոխադարձ վստահությունն ու փոխըմբռնումը: Ի հակադրություն սրա՝ հայ-ռուսական դաշնակցային հարաբերություններում զգալի բացեր են առաջացել, ինչի հիմնական պատճառներից մեկը Հայաստանի գործող իշխանության հակառուսական

քաղաքական գիծն ու դեպի Արևմուտք արտաքին քաղաքական վեկտորի փոփոխությունն էր:

Միևնույն ժամանակ պետք է փաստել, որ եռակողմ գործընկերության ընդլայնումը, ինչպիսին է Եվրասիական տնտեսական միությունը (ԵԱՏՄ), պահպանել և ամրապնդել է երեք երկրների միջև քաղաքական կապը: ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցությունը հարթակ է ստեղծել Ռուսաստանի և Իրանի հետ ավելի սերտ համակարգման, տնտեսական ինտեգրման բարելավման և բիզնեսի հեշտացման համար:

Ավելին, Հայաստանի, Իրանի և Ռուսաստանի միջև համագործակցությունը տարբեր միջազգային ֆորումներում, ինչպիսիք են ՄԱԿ-ը և Շանհայի համագործակցության կազմակերպությունը (ՇՀԿ), դրական են ազդել նրանց համատեղ աշխատանքի արդյունքների վրա:

Սակայն Հարավային Կովկասում և Մերձավոր Արևելքում այսօր տեղի ունեցող իրադարձությունները անուղղակիորեն փոխկապակցված են, և դրա համատեքստում Հայաստանի գործող իշխանության անհեռատես քաղաքականությունը ի վնաս Հայաստանի է աշխատում: Կրկնելով պատմության սխալները՝ Հայաստանի գործող վարչապետը փորձում է շրջվել դեպի Արևմուտք՝ հավատալով, որ հարմար պահին Արևմուտքը կօգնի Հայաստանին վերագտնել իր երբեմնի փառքը կամ առնվազն պաշտպանել ադրբեջանաթուրքական ագրեսիվ նկրտումներից ու հնարավոր ռազմական ագրեսիայից: Թուրքիայում ղեկավարությունն ակտիվորեն պայքարում է քրդերի դեմ, իսկ Իրանը կանգնած է Իսրայելի հետ պատերազմի շեմին: Բացի այդ՝ հաշվի առնելով հարավկովկասյան տարածաշրջանի և հարավային Կասպից ծովի խնդիրները՝ չի կարելի բացառել, որ հակահրանական ուժերը կփորձեն այստեղ առանձին հակահրանական դաշինք ձևավորել՝ Ադրբեջանի ներգրավմամբ: Ինքնորոշման, կրոնի և ամենակարևորը՝ տարածքի համար պայքարում ժողովուրդներին և ազգություններին միմյանց դեմ հանելով՝ արևմտյան դերակատարները հետապնդում են իրենց նպատակը՝ ներքաշելու տարածաշրջանը քաղաքացիական պատերազմի մեջ: Ինչ վերաբերում է տարածաշրջանի առանձին պետությունների, օրինակ՝ Հայաստանի շահերին, ապա դժվար թե Վաշինգտոնն իր «խաղում» հաշվի առնի դրանք: Ելնելով վերջին շրջանի իրադարձություններից՝ Երևանը կդառնա ԱՄՆ-ի ևս մեկ գործիքը Ռուսաստանի դեմ պրոքսի պատերազմում, եթե, իհարկե, չվերանայի իր արտաքին քաղաքական առաջնահերթությունները:

Մշակութային փոխանակումներ. 2023 թ. Հայաստանի, Իրանի և Ռուսաստանի միջև մշակութային փոխգործակցությունը զարգացել է, քանի որ երկրները շեշտը դրել են ժողովրդական դիվանագիտության վրա: Գեղարվեստական ներկայացումներով փոխադարձաբար հանդես գալը, ակադեմիական համագործակցությունները և ուսանողների փոխանակման ծրագրերը խթանել են միջմշակութային փոխըմբռնումը և մշակութային դիվանագիտության խորացումը:

Ավելին, պատմամշակութային ժառանգության պահպանումն այս ընթացքում մեծ նշանակություն է ձեռք բերել: Հայաստանը, Իրանը և Ռուսաստանը համագործակցել են համատեղ ծրագրերի շուրջ, որոնք ուղղված են եղել իրենց տարածքներում ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության օբյեկտների պաշտպանությանն ու քարոզմանը: Այս մշակութային համագործակցությունը ոչ միայն մեծացրել է զբոսաշրջությունը, այլ նաև խթանել ընդհանուր ինքնության զգացումը և գնահատանքը տարածաշրջանի հարուստ պատմության նկատմամբ:

Ընդհանուր առմամբ, եթե 2023 թ. Հայաստան-Իրան-Ռուսաստան հարաբերությունների հնարավորությունները լիարժեքորեն իրացվեին, ապա ոչ միայն զգալի տնտեսական, քաղաքական և ֆինանսական օգուտներ կբերեին երեք երկրներին, այլև կնպաստեին տարածաշրջանային բարգավաճմանը և հարաբերությունների ընդլայնմանը ավելի լայն միջազգային համատեքստում: Հայաստանի, Իրանի և Ռուսաստանի միջև շարունակական համագործակցությունը դրական հետագիծ է ստեղծում հետագա առաջընթացի համար և ճանապարհ է հարթում համագործակցության, խաղաղության և փոխադարձ շահերի ընդհանուր ապագայի համար: Տնտեսական կապերի, քաղաքական փոխըմբռնման և մշակութային փոխանակումների ամրապնդումը հիմք է ստեղծում ապագայում խորացված տարածաշրջանային ինտեգրման, ընդհանուր բարգավաճման և փոխադարձ օգուտների համար:

Եթե նման դաշինքը խորանա և ամրապնդվի 2024 թ., ապա ոչ միայն շոշափելի առավելություններ կբերի ներգրավված երկրներին, այլև կնպաստի գլոբալ կայունության, խաղաղության և համագործակցության ավելի լայն նպատակների իրացմանը: Երկխոսության, փոխըմբռնման և համագործակցության խթանմանն ուղղված դիվանագիտական ջանքերը մնում են էական փոխկապակցված և ներդաշնակ տարածաշրջանային միջավայր ձևավորելու հարցում: Հետամուտ լինելով ավելի սերտ կապերին և աշխատելով ընդհանուր շահերի ուղղությամբ՝ Հայաստանը, Իրանը և Ռուսաստանը փոխկապակցված և ներդաշնակ աշխարհ ստեղծելու ներուժ ունեն: Նման ցանկալի հեռանկարի հասնելու համար, սակայն, կրկին ու կրկին գլխավոր հարցը մնում է այն հանգամանքը, թե ում շահերով կպայմանավորվի Հայաստանի իշխանությունների արտաքին քաղաքականությունը:

Մերձավոր Արևելքի 2023-ը

Արմեն Պետրոսյան
Արևելագետ

Ավարտվող 2023 թ. բավականին բարդ տարի էր նաև Մերձավոր Արևելքի (ՄԱ) համար: 2022-ի սկզբին ուկրաինական պատերազմով մեկնարկած աշխարհակարգի փոփոխության գործընթացը, ինչպես և կանխատեսվում էր, չշրջանցեց նաև այս տարածաշրջանը: Հակառակը, ինչպես աշխարհաքաղաքական, այնպես էլ ռազմական և անվտանգային լրջագույն գործընթացների պատճառ դարձավ՝ էականորեն փոխելով տարածաշրջանի ռազմաքաղաքական և անվտանգային միջավայրերը:

Ռազմավարական-դիվանագիտական դիրքային մանևրներից, աշխարհաքաղաքական հիմքով ներքաղաքական գործընթացներից մինչև աղետալի պատերազմ, հումանիտար լրջագույն ճգնաժամ... Եթե հակիրճ, ապա այդպիսին էր 2023 թ. ՄԱ-ի համար: Զարգացումներ, որոնցից շատերը մեկնարկելով ավարտվող տարում՝ վստահաբար շարունակվելու են նաև 2024 թ.՝ անկանխատեսելի դարձնելով մերօրյա աշխարհի ամենապայթյունավտանգ տարածաշրջանի բնականոն կյանքը:

Հարկ է ընդգծել, ինչպես արդեն վերևում է նշվել, քանի որ 2023-ին ՄԱ-ում տեղ գտած զարգացումների առանցքում ևս աշխարհաքաղաքական գործոնն է, ուստի և դրանց զգալի մասը տարածաշրջանային բազմաշերտ մրցակցության հարթությունում էին՝ ուղիղ առնչություն ունենալով տարածաշրջանային խորքային հակամարտային-մրցակցային հարաբերությունների ձևաչափերի հետ, ինչպես, օրինակ՝ Իսրայել-Իրան հակամարտությունը, Իրան-Սաուդյան Արաբիա, Իրան-Թուրքիա մրցակցությունը, պաղեստինահիսրայելական հիմնախնդիրը և այլն:

- ***Իսրայելի ռազմավարական դիրքերի ամրապնդումն Իրանի սահմանին***

Իսրայել-Իրան հակամարտության տիրույթում Թել Ավիվի կողմից ռազմավարական տեսանկյունից լավագույնս օգտագործվեց Թեհրան-Բաքու հարաբերություններում առաջացած ճգնաժամը: Այն իր գագաթնակետին հասավ 2023 թ. հունվարի 27-ին Թեհրանում ադրբեջանական դեսպանատան դեմ իրականացված հարձակման պատճառով, որի հետևանքով սպանվել էր ներկայացուցչության անվտանգության ղեկավարը: Միջադեպի հարցում մեղադրելով ԻԻՀ իշխանություններին՝ Ադրբեջանը փակեց դեսպանատունը և դուրս բերեց դիվանագիտական անձնակազմն Իրանից:

Շուրջ 8 ամիս տևած ադրբեջանահիրանական լարվածության ընթացքում Թել Ավիվն Արևմուտքի քաջալերմամբ ձգտում էր համակողմանիորեն խորացնել Բաքվի հետ հարաբերությունները՝ ամրապնդելով

սեփական ռազմավարական դիրքերն իր հակառակորդի հյուսիսարևմտյան սահմանին: Որպես այս գործընթացի բարձրակետ կարելի է դիտարկել Ադրբեջանի կողմից Թել Ավիվում դեսպանության բացումը և Մուխթար Մամեդովին այդ երկրում առաջին ռեզիդենտ դեսպանի նշանակումը: Դրա հետևանքով Ադրբեջանը դարձավ շիայական մեծամասնությամբ բնակչություն ունեցող առաջին երկիրը, որը դիվանագիտական ներկայացուցչություն ունի Իսրայելում: Հարկ է նշել, որ Իսրայելի հետ Ադրբեջանի հարաբերությունների խորացման և հատկապես սեփական սահմանին իսրայելական ներկայության խնդիրը մշտապես ամենազգայուն հարցերից է եղել շիայական Իրանի և նրա հարևանների հետ հարաբերություններում:

Ադրբեջանահիրանական լարվածության ողջ ընթացքում, հատկապես՝ Թել-Ավիվի ակտիվ նախաձեռնողականության ընթացքում արձանագրվեց անանախադեպ ակտիվություն Իսրայել-Ադրբեջան հարաբերություններում, որը դրսևորվեց մասնավորապես բարձրաստիճան պաշտոնյաների փոխայցելությունների, փաստաթղթային ամրագրում ստացած նոր պայմանավորվածությունների ձեռքբերման տեսքով: Մասնավորապես նշված ժամանակահատվածում տեղի ունեցան երկու երկրների ԱԳ նախարարների փոխայցելություններ, Իսրայելի էկոնոմիկայի նախարարի և նախագահ Իցհակ Հերցոգի պետական այցն Ադրբեջան: Տեղի ունեցած բոլոր մակարդակների բանակցություններում առնվազն հռետորաբանական-քարոզչական մակարդակում անթաքույց կերպով ընդգծվում էր երկկողմ հարաբերությունների խորացման կարևորումն «Իրանից բխող ընդհանուր սպառնալիքը լավագույնս չեզոքացնելու նպատակով»: Եվ չնայած ապրիլ ամսից բացառապես իրանական կողմի նախաձեռնությամբ սկսված փուլ առ փուլ բավա-

կանաչափ դանդաղընթաց տեմպով Իրան-Ադրբեջան կարգավորման գործընթացին՝ այնուամենայնիվ, վերջինս Իսրայել-Ադրբեջան չփաստաթղթավորված, բայց ռազմավարական բնույթի համագործակցության խորացման վրա որևէ ազդեցություն ունենալ չի կարողանում, թեպետ նման նպատակ հետապնդում է:

▪ ***Իրան-Սաուդյան Արաբիա հարաբերությունների կարգավորումը***

2023 թ. մարտի 10-ին Պեկինում անակնկալ կերպով հայտարարվեց[1] Սաուդյան Արաբիայի (ՍԱ) և Իրանի միջև հարաբերությունների կարգավորման գործընթացի մեկնարկի մասին: Չինաստանի միջնորդությամբ տեղի ունեցած քառօրյա գաղտնի բարդ բանակցությունների արդյունքում Պեկինը, Ալ-Ռիադը և Թեհրանը հանդես եկան եռակողմ համատեղ հայտարարությամբ՝ ՍԱ և Իրանի միջև դիվանագիտական հարաբերությունների վերականգնման և հաջորդող 2 ամիսների ընթացքում դեսպանատների վերաբացման մասին: Փատաթղթում նաև ընդգծվել էր, որ կողմերը հաստատել են իրենց հարգանքը երկու երկրների ինքնիշխանության և միմյանց ներքին գործերին չմիջամտելու պատրաստակամությունը: Վերջինը չափազանց կարևոր դրույթ է՝ հաշվի առնելով երկկողմ հարաբերությունների ամբողջ բովանդակության որոշ առանձնահատկություններ:

Հարկ է հիշեցնել, որ իսլամի հակոտնյա՝ սունիական և շիայական «ճամբարները առաջնորդողների» միջև լարվածությունը գագաթնակետին էր հասել 2016 թ.՝ նաև տարածաշրջանային մի շարք հակամարտությունների խորացմանը զուգահեռ:

Հիրավի, տարաբնույթ փորձագիտական-վերլուծական շրջանակների կողմից այս գործընթացը գնահատվեց որպես «մերձավորարևելյան սառը պատերազմի» ավարտ՝ հաշվի առնելով Ալ-Ռիադի ու Թեհրանի ուղիղ և վճռորոշ ներգրավվածությունը միաժամանակ մերձավորարևելյան մի քանի հիմնախնդիրներում:

Այս գործընթացի առանցքային գործոններից է միջնորդական դերակատարումը: Ուշագրավ է, որ դեռևս 2021 թ. ապրիլին Իրաքի նախկին վարչապետ Մուստաֆա ալ-Քազիմիի անմիջական նախաձեռնությամբ էր մեկնարկել Ալ-Ռիադ-Թեհրան կարգավորման գործընթացը, որի արդյունքում հաջորդ 1,5 տարվա ընթացքում Բաղդադում տեղի էր ունեցել բանակցությունների 5 փուլ: Մինչդեռ կարգավորման հանգուցալուծումը տեղի ունեցավ հենց Չինաստանի միջնորդությամբ, ինչը ներկա աշխարհաքաղաքական իրողությունների ուղղակի հետևանք է. հակամարտում են Արևմուտքն ու Ռուսաստանը, դրանից օգտվում է Չինաստանը: Գործընթացի շարունակականության արդյունքում հունիս-օգոստոս ամիսներին փոխադարձաբար վերաբացվեցին դեսպանատները Ալ-Ռիադում և Թեհրանում, գլխավոր հյուպատոսությունները՝ Ջիդդայում և Մաշհադում, նշանակվեցին նոր դեսպաններն ու հյուպատոսները, երկրների ԱԳ նախարարների, ղեկավարների մակարդակով տեղի ունեցան մի շարք կարևոր հեռախոսազրույցներ, փոխայցելություններ. այդ թվում՝ ԻՀԿ գագաթնաժողովին մասնակցելու նպատակով նոյեմբերի 11-ին Ալ-Ռիադ էր մեկնել[2] Իրանի նախագահ Էբրահիմ Ռաիսին:

Որպես այս գործընթացի ուղղակի շոշափելի արդյունք կողմերի համար կարելի է դիտարկել նաև օգոստոսի 22-24-ը Յոհանեսբուրգում ՀԱՀ նախագահությամբ անցկացված BRICS-ի գագաթնաժողովին կազմակերպության ընդլայնման մասին որոշման կայացումը, որի արդյունքում կառույցին անդամակցած 6 նոր անդամներից երկուսը ՍԱ-ն և Իրանն էին:

Ընդհանուր առմամբ, Ալ-Ռիադ-Թեհրան կարգավորումը բազմաշերտ կարևոր իրողություն է, որը միտված է էականորեն բարելավելու ՄԱ-ի անվտանգային միջավայրը՝ եմենական հիմնախնդրից, Բահրեյնից մինչև Սիրիա, Լիբանան և այլն, որտեղ երկու երկրներն իրարամերժ դիրքորոշումներ են ունեցել՝ վարելով միջնորդավորված հիբրիդային պատերազմներ: Միևնույն ժամանակ, իհարկե, հարաբերությունների կարգավորումը դեռևս չի վկայում տարածաշրջանային լրջագույն մրցակիցների միջև ջերմացման, առավել ևս բարեկամության վերականգնման մասին: Պարզապես այս գործընթացը կարող է փոխել տարածաշրջանում նրանց մրցակցության ձևաչափը՝ առնվազն 1 տասնամյակ շարունակվող հակամարտայինից դեպի համագործակցային: Իսկ որպես միջնորդ Չինաստանի դերակատարումն արդեն շատ ավելի լայն՝ գլոբալ առումով փոխում է տարածաշրջանի աշխարհաքաղաքական ազդեցության պատկերը՝ խախտելով ավանդական խաղացողների՝ ԱՄՆ-ի, մասնակիորեն նաև Ռուսաստանի ներգրավվածության ձևաչափերը:

▪ ***Թուրքիայի համապետական ընտրությունների աշխարհաքաղաքական շերտը***

Ուկրաինական ճգնաժամով պայմանավորված աշխարհաքաղաքական առճակատման հետագա ընթացքի վրա էական ազդեցություն է ունենում ԱՄՆ-ի մի շարք տարածաշրջանային գործընկեր/դաշնակիցների հնարավորինս հավասարակշռված վարքագիծը: Կասկածից վեր է՝ դիմակայության կշեռքի նժարները կփոխվեին այն բևեռի օգտին, դեպի որը միանշանակ կկողմնորոշվեին այնպիսի տարածաշրջանային դերակատարներ, ինչպիսիք են Թուրքիան, Սաուդյան Արաբիան, ԱՄԷ-ն, Եգիպտոսը և այլն: Մինչդեռ տեղի է ունենում տրամագծորեն հակառակ գործընթացը: Ջարգացումների վրա բովանդակային ազդեցության ունակ գրեթե բոլոր խաղացողները, հիմնականում վարելով ինքնուրույն քաղաքականություն, ջանում են առավելագույնս օգտվել միջաշխարհակարգի ժամանակահատվածին բնորոշ հնարավորություններից՝ հնարավորինս բարելավելով սեփական դիրքերը: Վերոնշյալը, թերևս, ձևավորվելիք աշխարհակարգի կարևոր յուրահատկություններին բնորոշ միտում է՝

Ադրբեջանի դեսպանատան բացումը Իսրայելում

պայմանավորված ոչ թե եղած ուժային կենտրոնների միջև կողմնորոշվելու, այլ որպես առանձին բևեռ դիրքավորվելու և ապագա աշխարհում սեփական ազդեցիկ դերն ու խոսքն ունենալու առանձին տարածաշրջանային դերակատարների ձգտումներով:

Այս համատեքստում, իհարկե, բավականաչափ հետաքրքիր է Թուրքիայի քաղաքականությունը, որը հակամարտ կենտրոնների միջև «չեզոք» խաղը «վաճառում էր» միջնորդական դերակատարման, հումանիտար խնդիրներ լուծելու անհրաժեշտության և այլ տեսանկյուններից: Իսկ նման դերակատարում ստանձնելու համար առանցքային նախապայման է ազդեցիկ օբյեկտիվ վարքագիծն ու հակամարտ կողմերի համար ընկալելի լինելու հանգամանքը: Նշվածի վառ օրինակ են ուկրաինական պատերազմի մեկնարկից ի վեր Անկարայի ակտիվ փորձերը ռուս-ուկրաինական բանակցություններ կազմակերպելու, հացահատիկի, պարենամթերքների միջազգային մատակարարումների խափանումների հնարավորինս կանխման (հացահատիկային գործարքի) և այլ հումանիտար նախաձեռնությունների առաջմղման հարցերում, որոնք, հանուն արդարության, պետք է նշել՝ ժամանակավոր հաջողություն արձանագրեցին: Մինչդեռ առավել առարկայական էին չեզոքության քողի ներքո հակամարտ կենտրոնների միջև առանձին-առանձին քաղաքական առևտրի դրսևորումները, դիցուք՝ ՆԱՏՕ-ի ընդլայնման քաղաքականությունը՝ Ֆինլանդիայի և Շվեդիայի անդամակցության հնարավորությամբ (ընդ որում, վերջինի անդամակցության որոշումն Անկարան դեռ չի վավերացրել), իսկ Ռուսաստանի հետ՝ տարբեր տարածաշրջաններում ազդեցության բաժանման, պատժամիջոցների հետևանքով տնտեսական օգուտներ ստանալու նպատակով:

Թուրքիայի նման վարքագիծը և, առհասարակ, վերջին տարիների ընթացքում առավել ինքնուրույն քաղաքականությունը, որը հաճախ խնդիրներ և անգամ շահերի բախում էր առաջացնում ոչ միայն տարածաշրջանում, այլև Անկարայի և նրա հետ միևնույն ռազմաքաղաքական դաշնակցային ձևաչափերում գտնվող գործընկերների միջև, հատկապես ներկա պատմափուլում մի կողմից՝ խիստ ձեռնտու է Ռուսաստանին, մյուս կողմից՝ լրջագույնս հակասում է հավաքական Արևմուտքի ընդհանուր և մասնավոր ծրագրերին: Հետևաբար 2023 թ. մայիսին Թուրքիայում տեղի ունենալիք համապետական ընտրական գործընթացը բավականաչափ պատեհ առիթ էր դրա բարենպաստ արդյունքներով նաև Անկարայի արտաքին քաղաքական ուղեգծի վրա ազդելու համար: Սա է պատճառը, որ Արևմուտքն իր տրամադրության տակ եղած գործիքակազմով հնարավորինս աջակցություն ցուցաբերեց ընդդիմադիր 6 կուսակցությունների ձևավորած «Ազգ» դաշինքին և դաշինքի նախագահի թեկնածու, քեմալական «Հանրապետական ժողովրդական» կուսակցության առաջնորդ Քեմալ Քըլըչդարօղլուին: Բանն այն է, որ իշխող «Ժողովուրդ» դաշինքի ու դրա նախագահի թեկնածու Ռեջեփ Թայիփ Էրդողանի համար նախընտրական մեկնարկային իրավիճակը բավականաչափ խնդրահարույց էր: Նման իրավիճակը պայմանավորված էր վերջին առնվազն 3 տարիներին արձանագրված տնտեսական խնդիրներով՝ լիրայի լուրջ արժեզրկմամբ, երկնիշ գնաճով, դրան ածանցյալ սոցիալ-տնտեսական ճգնաժամով, որն առավել խորացավ 2023 թ. փետրվարի 6-ին Թուրքիայի հարավ-արևելքում տեղի ունեցած աղետալի երկրաշարժի պատճառով, ինչի հետևանքով զոհվեց ավելի քան 50 000 մարդ[3]:

Բայց և այնպես, չնայած Արևմուտքի կողմից ընդդիմությանը ցուցաբերված համակողմանի քաղաքական, քարոզչական բնույթի աջակցությանը՝ նախընտրական բավականաչափ թեժ պայքարում Թուրքիայի իշխանությունները կարողացան դժվարին հաղթանակ տանել՝ մոբիլիզացնելով շուրջ 85% և ավելի ընտրազանգված: Եթե խորհրդարանական ընտրությունների արդյունքներով իշխող դաշինքի հաջողությունն ակնհայտ էր, ապա նախագահի ընտրությունը կատարվեց երկփուլ քվեարկության արդյունքում: Առաջին փուլում՝ 49,52 %, իսկ երկրորդում արդեն 52,18 % ձայնով Էրդողանը կարողացավ ստանալ «վերջին անգամ ազգից հայցած քվեն»[4]:

Չնայած նախընտրական քարոզարշավի լարվածությանը և այդ ընտրություններին թե՛ ընդդիմության, թե՛ իշխանության կողմից տրված համակողմանի կարևորությանը՝ այնուամենայնիվ, Թուրքիայում հետընտրական խմորումներ, լարում տեղի չունեցան: Եվ ընդդիմությունը, և՛ նրա արտաքին աջակիցներն ընդունեցին ընտրությունների արդյունքները՝ խուսափելով երկրում ներքին անկայունություն հրահրելուց: Այս հանգամանքը, իր հերթին, փաստում է կայուն, բայց բարդ կառավարելի Թուրքիայի նախընտրությունն անկայունի փոխարեն, քանի որ այդ երկրում անվերահսկելի գործընթացների հետևանքով միաժա-

Ընտրությունները Թուրքիայում

մանակ մի քանի տարածաշրջաններում հնարավոր հետևանքների գինը շատ ավելի ծանր կարող է լինել:

▪ ***Պատերազմը Գազայում՝ տարածաշրջանում ռազմավարական ազդեցության փոփոխության տեսանկյունից***

Հոկտեմբերի 7-ին Իսրայելի դեմ պաղեստինյան «ՀԱՄԱՍ» իսլամական արմատական կազմակերպության «անակնկալ» մասշտաբային հարձակման[5] և աննախադեպ վնասի պատճառման հետևանքով հերթական անգամ ակտիվացած իսրայելապաղեստինյան հակամարտության ընթացիկ շրջափուլն իր բովանդակությամբ էականորեն տարբերվում է նախորդներից: Այն նույնպես կրում է աշխարհակարգի փոփոխության գործընթացի ազդեցությունը և պարունակում է ռազմավարական լուծումների հասնելու տարբեր թե՛ պաղեստինյան, թե՛ իսրայելական կողմերից: Ինչպես, օրինակ՝ «ՀԱՄԱՍ»-ի կողմից Իսրայելի դեմ տևական ժամանակ նախապատրաստված հարձակման ժամանակահատվածի ընտրությունը պայմանավորված էր նաև պաղեստինյան հիմնախնդրի լուծման տեսանկյունից ռազմավարական նշանակության Սաուդյան Արաբիա-Իսրայել կարգավորման գործընթացը խափանելուն: Նշվածն անկյունաքարային հանգամանք է, քանի որ, օրինակ, ԱՄՆ-ի միջնորդությամբ 2020-2021 թթ. մի շարք կարևոր արաբական երկրների (ԱՄԷ, Բահրեյն, Սուդան, Մարոկկո) և Իսրայելի միջև ստորագրված «Աբրահամյան համաձայնագրերը» պաղեստինցիների կողմից արդարացիորեն գնահատվեցին որպես ռազմավարական բացթողում, քանի որ խարխլվեց հրեական պետության դեմ ընդհանուր համաարաբական ճակատի տրամաբանությունը: Վերջինի բովանդակության առանցքում հետևյալ պայմանական փաթեթային սկզբունքն էր՝ «Իսրայելի և բոլոր արաբական երկրների (բացի Եգիպտոսից և Հորդանանից, որոնք արդեն իսկ ունեին խաղաղության համաձայնագիր Իսրայելի հետ) միջև հարաբերությունների կարգավորումը հնարավոր է՝ բացառությամբ մինչև 1967 թ. վեցօրյա պատերազմը եղած սահմաններով Պաղեստին պետության ստեղծումից հետո՝ Արևելյան Երուսաղեմ մայրաքաղաքով»: Իսկ հատկապես 2023 թ. կեսերից դարձյալ Սպիտակ տան ջանքերով ակտիվացած Սաուդյան Արաբիա-Իսրայել կարգավորման գործընթացը, որի առանցքային նախապայմաններից մեկը՝ Պաղեստին պետության ստեղծման պահանջը, աստիճանաբար զիջում էր իր կարևորությունը Ալ-Ռիադին խոստացված այլ ռազմավարական հնարավորությունների դիմաց (ինչպես, օրինակ՝ Սաուդյան միջուկային ծրագրի իրականացումը), հաջողելու դեպքում միանշանակորեն բացասաբար էր ազդելու պաղեստինյան շարժման վերջնանպատակների կենսագործման վրա: Ուստի և վերոնշյալի համատեքստում շարունակվող Իսրայել-«ՀԱՄԱՍ» անողոք պատերազմ, ըստ էության, կրկին ծայրաստիճան սրել է մի շարք արաբական-մուսուլմանական երկրների միջև հարաբերությունները՝ անշուշտ, գոնե առժամանակ խափանելով Ալ-Ռիադ-Թել Ավիվ կարգավորումը:

Ինչ վերաբերում է Իսրայելին, ապա վերջինը ոչ պակաս հաջողությամբ օգտվում է միջաշխարհակարգի իրողություններից՝ «պատերազմը հնարավորություն է» բանաձևի տրամաբանությամբ:
Տվյալ դեպքում հնարավորինս օգտագործվեցին և ուռճացվեցին պաղեստինյան «ՀԱՄԱՍ» խմբավորման մասշտաբային աննախադեպ հարձակման ու դրա հետևանքների ծավալները՝ ներկայացնելով դրանք որպես «ամենադաժան, անմարդկային, նաև ունիվերսալ բնույթի ահաբեկչական հարձակում»՝ նման կերպ նաև հասնելով միջազգային լայն համախոհության և լեգիտիմացնելով Գազայում սանձազերծված պատերազմում սեփական պատասխան պատժիչ և հաճախ ոչ պակաս անմարդկային գործողությունները: Թել Ավիվը պաղեստինյան խմբավորման ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակի համար ոչ ճշգրտորեն հաշվարկված հարձակման իրողությունը ձգտում է օգտագործել իր համար ռազմավարական և անվտանգային լրջագույն խնդրի վերջնական հանգուցալուծման նպատակով: Մասնավորապես անթաքույց նպատակ է դրված առավելագույնս փոխել պաղեստինյան հիմնախնդրի՝ որպես նախորդ աշխարհակարգից մնացած «քաղաքական» չլուծված ժառանգության ներկա ստատուս-քվոն սեփական օրակարգի համատեքստում: Այն է՝ առնվազն կարճաժամկետ հեռանկարում ամբողջական վերահսկողություն հաստատել Գազայի հատվածում, իսկ հետագայում՝ հնարավորության պայմաններում, ընդհանրապես հասնել Պաղեստին պետության ձևավորման ծրագրի չեղարկմանը: Վերոնշյալի համատեքստում պետք է նշել, որ «ՀԱՄԱՍ» իսլամական արմատական կազմակերպության կողմից նախաձեռնված «Ալ Ակսայի ջրհեղեղ» ռազմագործողությունը, որն իրականացվեց միաժամանակ «օդից, ջրից և ցամաքից», ամենամահաբերն էր

Իսրայելի համար (ցայժմ ավելի քան 1300 զոհ, շուրջ 240 բազմազգ գերիներ, որոնցից 105-ին պաղեստինյան կողմն ազատեց մոտ մեկ շաբաթ տևած հումանիտար հրադադարի դիմաց): Պաղեստինյան կողմի կորուստները, ինչպես միշտ, անհամեմատելի ավելի են՝ շուրջ 18.600 զոհ[6] 1973 թ. «Դատաստանի օրվա» պատերազմից ի վեր: Ի դեպ, գուցե խորհրդանշական է, բայց գործողության և նշված պատերազմի օրերն էլ օրացուցային առումով համընկնում էին: Ի պատասխան՝ Իսրայելի բանակը Գազայում սկսել է «Երկաթե սրեր» կոդային անվանումով պատժիչ գործողությունը, որի հռչակված նպատակը Գազայում «ՀԱՄԱՍ»-ի իշխանության վերացումն է և շրջանում ավելի վերահսկելի կառավարության ձևավորումը: Մինչդեռ իսրայելական բանակի առայժմ եռափուլ ռազմագործողությունից կարելի է եզրակացնել, որ Թել Ավիվի ծրագրերը Գազայում ավելի խորքային են. եթե հակիրճ՝ շրջանի ամայացում և վերջնական անեքսիա: Ճիշտ նույն տրամաբանությամբ, ինչպիսին սեպտեմբերի 19-20-ի մեկօրյա պատերազմից հետո տեղի ունեցավ Արցախում՝ Իսրայելի հարավկովկասյան գործընկեր Ադրբեջանի ձեռամբ:

Չի բացառվում անգամ, որ Արցախի հայաթափումն ու ամբողջական օկուպացիան լավագույնս ոգեշնչել են Իսրայելիիշխանություններին՝ նույն սցենարը Գազայում իրականացնելու համար: Մինչդեռ Թել Ավիվի ծրագիրը ցայժմ չի գործում հատկապես Եգիպտոսի և Հորդանանի սկզբունքային դիրքորոշման պատճառով, որոնց աջակցում են նաև այլ արաբական և մուսուլմանական երկրներ: Մասնավորապես Գազային միակ սահմանակից Եգիպտոսը պատերազմի մեկնարկից ի վեր փակել է միակ սահմանային Ռաֆահ անցակետը պաղեստինցիների համար և տարբեր մակարդակներով հայտարարել, որ թույլ չի տա սեփական տարածքների հաշվին լուծելու պաղեստինյան հիմնախնդիրը: Նույն կարծր դիքորոշումն է հայտնել նաև Արևմտյան ափին սահմանակից Հորդանանը: Ուստի, նաև վերոնշյալով պայմանավորված, Գազայում ստեղծվել է մերօրյա աշխարհի ամենասուր մարդասիրական ճգնաժամը, երբ աշխարհի ամենախիտ բնակեցված շրջաններից մեկում (շուրջ 2,4 մլն մարդ) բնակչությունը զանգվածաբար տեղահանությունների է ենթարկվում, իսկ տարածքը վերածվում է շրջան-ուրվականի:

Գազայի պատերազմին զուգահեռ Թել Ավիվի առաջնային ծրագրերից է նաև շրջակա անվտանգային միջավայրի բարելավման խնդիրը, մասնավորապես՝ Սիրիայում, Լիբանանում տեղակայված իրանամետ կառույցներից հնարավոր սպառնալիքների վերջնական չեզոքացումը, որի միտումները ևս արդեն իսկ տեսանելի են: Մերօրյա աշխարհի իրողությունները թույլ են տալիս գնահատելու Իսրայել պետության վերոնշյալ ծրագրերի իրականացման հեռանկարը խիստ իրատեսական: Իսկ դրանց հաջողությունը միանշանակորեն կնշանակի Իսրայելի ռազմավարական հաղթանակ Իրանի նկատմամբ:

Ինչ վերաբերում է Գազայի պատերազմի նկատմամբ միջազգային հանրության դիրքորոշմանը, ապա հաշվի առնելով «ՀԱՄԱՍ»-ի հարձակման հետևանքները և նաև ավելի քան 3 տասնյակ երկրների քաղաքացիների շրջանում զոհերն ու գերիները՝ բազմաթիվ երկրներ սկզբնական շրջանում աջակցում էին Իսրայելի պատասխան օդային գործողությանը: Մինչդեռ ցամաքային գործողության իրականացմանը դեմ էր միջազգային ազդեցիկ դերակատարների զգալի մասը: Բայց և այնպես, ազդեցիկ խաղացողներից հատկապես պետք է կարևորել ԱՄՆ-ի և Իրանի դիրքորոշումները: Պատերազմի մեկնարկից ի վեր Վաշինգտոնը համակողմանի աջակցություն ապահովեց Իսրայելին հոգեբանական, քաղաքական, ֆինանսական, ռազմական և այլ մակարդակներում: Դաշնակից երկիր այցելեցին ԱՄՆ-ի նախագահը, պաշտպանության քարտուղարը, մի քանի անգամ՝ պետքարտուղարը և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ: Հատկապես ԱՄՆ-ի առարկայական ներգրավումը զարգացումներում, ՌԾՈՒ-ի մի քանի նավատորմերի տեղակայումը տարածաշրջանի ջրերում զսպում է պատերազմի մասշտաբների ընդլայնումը և այլ դերակատարների ներգրավման հնարավորությունը: Զուգահեռաբար դիվանագիտական հարթակներում ԱՄՆ-ը անգնահատելի «քաղաքական հովանոց» է ապահովում դաշնակցի համար՝ արդեն մի քանի անգամ խափանելով հատկապես ՄԱԿ-ի՝ ԱԽ-ում պատերազմն անմիջապես դադարեցնելու վերաբերյալ բանաձևի ընդունման գործընթացները[7]:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ Գազայի ապագայի հարցը լրջագույն տարաձայնությունների առիթ է դարձել անգամ Իսրայելի և նրա ամենաառանցքային դաշնակցի՝ ԱՄՆ-ի հարաբերություններում: Քանի որ Վաշինգտոնը կտրականապես մերժում է Գազայում իսրայելական վերահսկողության հնարավորությունը, որն առկա էր մինչև 2005 թ.:

«Համասի» հարձակումը

Գազայի ռմբակոծումը

Պաղեստինյան կողմի արտաքին աջակիցների գործողություններն էլ մեծ հաշվով դուրս չեն գալիս դիվանագիտական, քարոզչական, հումանիտար հարթություններից: Արաբական, մուսուլմանական երկրների շրջանում, նաև Ռուսաստանի կողմից նախաձեռնված տարաբնույթ հանդիպումներում, բանակցություններում, համաժողովներում և այլն: Իր բովանդակությամբ տարբերվում են Կատարի և Իրանի ներգրավվածության մակարդակները: Առաջինը համարվում է առանցքային միջնորդ Իսրայելի և պաղեստինյան խմբավորումների միջև: Հենց Դոհայի ակտիվ ջանքերով հնարավոր եղավ հասնել ավելի քան 2 ամիս շարունակվող պատերազմի ընթացքում միակ մեկշաբաթյա հումանիտար հրադադարին:

Ինչ վերաբերում է Իրանի դերակատարմանը, ապա Թեհրանի առաջնային նպատակը տասնամյակներ շարունակ Իսրայելի շուրջ ձևավորված «դիմադրության առանցքի» կազմալուծման կանխումն է, բայց ոչ պատերազմին ուղիղ մասնակցության ձևաչափում: Ընդ որում, հակամարտությանն Իրանի ուղիղ ներգրավման սցենարի բացառմանն էին հիմնականում միտված նաև ԱՄՆ-ի ռազմաքաղաքական ջանքերը: Այս համատեքստում փաստացի Թեհրանին առայժմ չի հաջողվում լուծել իր ռազմավարական նպատակը՝ Գազայում պատերազմի դադարեցումն ու որոշակի ազդեցության պահպանումը՝ ի դեմս «ՀԱՄԱՍ»-ի և պաղեստինյան «Իսլամական ջիհադ» խմբավորումների գործունեության ապահովման: Մեծ հաշվով առայժմ չի հաջողվում նաև գործընթացների վրա ազդելու Իրանի «պրոքսի-մարտավարությունը» Իսրայելի հարևան և տարածաշրջանի մի շարք այլ երկրներում գործող հովանավորյալ կառույցների քայլերի համակարգման միջոցով: Խոսքն առաջին հերթին լիբանանյան «Հիզբալլահ» և Սիրիայի իրանամետ ուժերի մասին է: Վերջիններիի առավել գործուն ներգրավվածության հնարավորությունը Իսրայելին առայժմ հաջողվում է կանխել նպատակային և հստակ թիրախավորված կանխիչ օդային գործողությունների միջոցով: Բայց և այնպես, Գազայում ընթացող պատերազմի վերաբերյալ Իրանում հնչում են նաև դրական գնահատականներ՝ իրավիճակը հիմնավորելով այն տեսանկյունից, որ Գազայում Իսրայելի կրած «պարտությունն» այնքան ծանր է, որ հրեական պետությանը հասցված վնասը վերականգնելու համար տարիներ կպահանջվեն:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է հավաստել, որ աշխարհաքաղաքական իրողություններով պայմանավորված՝ 2023 թ. ընթացքում ՄԱ-ում ընթացող բովանդակային վերափոխումները, վստահաբար, նոր դրսևորումներով շարունակվելու են նաև հաջորդ տարիների ընթացքում՝ էականորեն ազդելով տարածաշրջանի անվտանգային, տնտեսական և ռազմաքաղաքական պատկերի/միջավայրի վրա: Ընդ որում, հարկ է նաև նկատել, որ այդ զարգացումների նկատմամբ գլոբալ վերահսկելիության խափանումը կարող է հանգեցնել նաև տարածաշրջանային խոշորամասշտաբ պատերազմի՝ ամբողջ աշխարհի վրա ուղիղ ազդեցության կանխատեսելի հավանականությամբ:

Օգտագործված աղբյուրներ

1. A New Order in the Middle East? | Foreign Affairs:
2. Президент Ирана прибыл в Саудовскую Аравию - РИА Новости, 11.11.2023 (ria.ru)
3. 134. gün! Depremde ölü sayisi ne kadar oldu, güncel yarali sayisi kaç? Hangi ilde kaç bina yikildi, kaç kişi öldü? - Günün Haberleri (cnnturk.com)
4. Cumhurbaşkani Erdoğan son kez oy istedi: Kutlu bayraği gençlerimize teslim edeceğiz | Euronews:
5. Hamas surprise attack out of Gaza stuns Israel and leaves hundreds dead in fighting, retaliation | AP News:
6. 69-й день войны в Израиле. Хронология событий - NEWSru.co.il:
7. США наложили вето на проект резолюции СБ ООН о прекращении огня в Газе | Euronews:

Հայրենիք-բնաշխարհ՝ հարատևման գրավական

Արմեն Վարդանյան
Լրագրող

Աքսիոմային ճշմարտություն է, որ հայրենիքը սկսվում է բնությունից: Սերը դեպի բնաշխարհը և հողը հայրենի եզերքի գիտակցության ձևավորման հիմքն է: Մարդ-բնություն ամբողջությունն ապահովում է ինքնագիտակցության, բնօրրանի ընկալման հիմքերը, քաղաքացուն իր հողին կապող բնական ուժը, սեփական երկրի սահմանների գիտակցումը: Աստված և բնությունը շռայլ են գտնվել Հայկական լեռնաշխարհում բնակվողներիս հանդեպ՝ պարգևելով հարուստ բնաշխարհ: Քչերը գիտեն, որ ողջ Հին աշխարհամասում և նրա հարակից տարածաշրջաններում գերհարուստ կենսաբազմազանությամբ ընդամենը երկու «թեժ» կետ կա՝ Իտալիայում և Հայաստանի Հանրապետությունում, ինչը հիմնականում գրեթե բոլոր բարձրությունների, գոտիականությունների առկայության և աշխարհագրական դիրքով բացատրվող ինքնատիպ կլիմայական պայմանների արդյունք է:

Կենսաբազմազանությունը կյանքի տարբեր տեսակների համակեցությունն է, որն այսօր անընդհատ կրճատվում է մարդ-բնություն հարմոնիկ հարաբերության խախտման հետևանքով: Հայաստանի տեղադիրքը և ռելիեֆը նպաստել են ոչ միայն կենսառեսուրսների հարուստ տեսականու, այլև էնդեմիզմի՝ միայն մեր երկրին բնորոշ ֆլորայի և ֆաունայի բարձր մակարդակի և հարուստ ագրոկենսաբազմազանության ձևավորմանը:

Հայոց պատմական մեծ բնօրրանից մեզ բաժին հասած փոքր տարածքում ներկայում աճում է շուրջ 3600 տեսակի բարձրակարգ բույս, ապրում՝ 550 տեսակի ողնաշարավոր և շուրջ 17 000 տեսակի անողնաշար կենդանի: Վերոնշյալ բնական հարստությունը կարիք ունի պահպանման, հատկապես մարդու պահանջմունքների անընդհատ մեծացման և այն բավարարելու նպատակով տնտեսության գերարագ զարգացման պայմաններում: Վերջինս հիմնականում ապահովվում է բնական ռեսուրսների հաշվին, որոնց զգալի մասը վերականգնվող չէ:

Արդյունաբերության զարգացման ներկայիս ծավալներն ու արագությունը, շրջակա միջավայրի վրա ունեցած նրա բացասական ահռելի հետևանքները ողջ մարդկությանը կանգնեցրել են գոյաբանական խնդրի առաջ և այսօր նրա համար առաջնային է ոչ թե պետությունների տնտեսական աճի ապահովումը, ինչին ձգտում էին 19-րդ դարի կեսերից ի վեր՝ արդյունաբերական հեղափոխությունից հետո, այլ կայուն զարգացումը՝ գիտակցումով, որ բնական ռեսուրսները նաև ապագա սերունդներինն են: Սա էլ իր հերթին պարտադրում է նվազագույնի հասցնել մարդու գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ առաջնայնություն տալով վերականգնվող ռեսուրսների օգտագործմանը: Առողջ և առավելագույն անաղարտ շրջակա միջավայրն ապահովում է առողջ և կենսունակ մարդուն՝ բոլոր ժամանակների և պետական միավորների ամենաթանկ ռեսուրսին:

Տնտեսական քաղաքականություն՝ մեր բնության հաշվին

Հայաստանը չէր կարող զերծ մնալ համամարդկային այդ խնդիրներից: Խորհրդայնացված մեր երկրում արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացումը հիմնականում տեղի ունեցավ ի հաշիվ մեր բնօրրանի հարուստ կենսաբազմազանության՝ շատ դեպքերում անդառնալի հարված հասցնելով նրան: Արդյունաբերության հիմնական ճյուղը՝ հանքարդյունաբերությունը զարգացնելու համար շահագործումը հիմնականում բաց եղանակով արվեց՝ իր բոլոր բացասական հետևանքներով, իսկ գյուղատնտեսությունն ու էներգետիկան զարգացնելու համար խորհրդային իշխանությունները որոշեցին հողեր ազատել՝ Սևանա լճի մակարդակն իջեցնելով: Վերոհիշյալ որոշման հետևանքով անդառնալիորեն խաթարվեց լճի էկոհամակարգը: Եթե դիտարկենք այն փաստը, որ ՀՀ ներկայիս տարածքի 20 %-ը կազմող լիճը ապահովում էր մեր երկրի կենսաբազմազանության գրեթե ամբողջ համակարգի հավասարակշռությունը և ջրային ռեսուրսների ու գետերի հիմնական էկոհամակարգերը, ապա դժվար չէ պատկերացնել լճին հասցված հարվածի աղետալի հետևանքները մեր հարուստ կենսաբազմազանության վրա: Այդ որոշման հետևանքով նաև Սևանի իշխան ձկան 4 ենթատեսակից իսպառ անհետացել են երկուսը՝ բոջակը և ձմեռային իշխանը:

Վերջին 100-ամյակում մարդածին և բնական տարբեր գործոնների ազդեցությամբ Հայաստանի կենդանական և բուսական աշխարհների բազմաթիվ տեսակները համարվում են անհետացող, կրիտիկա-

կան վիճակում գտնվող կամ վտանգված: ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված է 452 բուսական տեսակ, որը ֆլորայի 12,5%-ն է և ֆաունայի 308 տեսակ (մոտ 2%): Կան նաև ընդհանրապես վերացած կենդանական և բուսական տեսակներ: Հայաստանի գրեթե բոլոր էկոհամակարգերը ենթարկվում են մարդածին ազդեցության, որի հետևանքներն առավել զգալի են անտառային, կիսաանապատային, տափաստանային էկոհամակարգերի, ինչպես նաև Սևանա լճի եզակի և յուրահատուկ ջրային էկոհամակարգի վրա:

Ողջ աշխարհում անհետացումը սպառնում է բուսական աշխարհի 34 000 և կենդանական աշխարհի 5 200 տեսակներին, թռչունների յուրաքանչյուր 8-րդ տեսակին: Ներկայում բույսերի և կենդանիների անհետացման տեմպերը 50-100 անգամ գերազանցում են բնական տեմպերին: Տարբեր փորձագիտական գնահատականներով ամեն օր անհետանում է 2-20 կենդանատեսակ: Մարդկության համար մեծ վտանգ է ներկայացնում այն տեսակների ոչնչացումը, որոնք կապված են պարենի արտադրության հետ: Միայն վերջին 50 տարում մարդը ոչնչացրել է ձկան արդյունագործական պաշարների մոտ 90%-ը:

Կենսաբազմազանության պահպանմանն ուղղված գործողություններ աշխարհում և Հայաստանում

Կենսաբազմազանության պահպանմանն ուղղված գլխավոր միջազգային համաձայնագիրը կենսաբազմազանության մասին կոնվենցիան է, որը գործում է 1992 թ.-ից: Մինչ օրս համաձայնագիրը վավերացրել է շուրջ 200 պետություն, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունը: Կոնվենցիայի հիմքում «Չկա ոչ կարևոր կամ ոչ անհրաժեշտ պոպուլյացիա կամ տեսակ. ողջ բնությունը պաշտպանության կարիք ունի» գաղափարն է:

Դրա շրջանակում Հայաստանն ընդունել է կենսաբազմազանության պահպանման ռազմավարություն և գործողությունների ծրագիր, մոտ 90 հազար հեկտարով ավելացրել է բնության հատուկ պահպանվող տարածքները, որտեղ կենտրոնացված է մեր երկրի կենդանական և բուսական աշխարհի մոտ 70%-ը, ինչպես նաև առանձին ծրագրեր են իրականացվում վտանգված տեսակների պոպուլյացիան պահպանելու և մեծացնելու ուղղությամբ:

Կայուն զարգացում սերունդների համար

Որքան էլ մարդը փորձի պահպանել բնությունը, էական արդյունքներ չի ապահովի, եթե չնվազեցնի նրա վրա իր տնտեսական գործունեության բացասական հետևանքները: Ժամանակի հետ մարդկությունն ընդունեց այն անբեկանելի ճշմարտությունը, որ պետք է որդեգրի կայուն զարգացման սկզբունքը՝ ապահովելով նաև սերունդների բաժին բնական ռեսուրսները: 1980 թ. ընդունված բնության պահպանման համաշխարհային ռազմավարության միջազգային փաստաթղթերում առաջին անգամ հիշատակվեց «կայուն զարգացում» եզրույթը:

Բրունդլանդի հանձնաժողովը, որը պաշտոնապես հայտնի է որպես շրջակա միջավայրի և զարգացման աշխարհիկ հանձնաժողով, եղել է այս տերմինի առաջ քաշողը՝ այն մեկնաբանելով որպես զարգացում, որը «ներկա սերնդի և ապագա սերունդների կարիքները հոգալու համար արգելք չի դառնա»: ՄԱԿ-ի հռչակած կայուն զարգացման 17 նպատակները համաշխարհային կոչ են՝ վերացնելու աղքատությունը, պաշտպանելու շրջակա միջավայրը և կլիման, ինչպես նաև ապահովելու, որ աշխարհում բոլոր մարդիկ ապրեն խաղաղ և բարեկեցիկ կյանքով:

Հիմնականում ՄԱԿ-ն է Հայաստանի պետական, գիտական և հասարակական կառույցների հետ աշխատում կայուն զարգացման նպատակներին հասնելու ուղղությամբ: Մեր երկրում կենսաբազմազանության պահպանության և կենսառեսուրսների կառավարման բնագավառում իրականացված և իրականացվող միջոցառումները նպատակաուղղված են բուսական և կենդանական աշխարհի պահպանության և

կայուն օգտագործման բարելավմանը, ինչպես նաև դրանց կառավարման համակարգի կատարելագործմանը: Վերոշարադրյալ գործընթացները կարող են արդյունավետ լինել միայն մեկ դեպքում՝ մարդու բնապահպանական բարձր գիտակցման առկայությամբ:

Քո տան պատուհանից դուրս գտնվողը քո սեփականությունն է

Հայաստանի հարուստ և ինքնատիպ կենսաբազմազանության պահպանության գերխնդիրը լուծելու համար պետք է փոխվի քաղաքացու մտածելակերպը: Այսօր մարդն է գործադիր մարմնում որոշումներ ընդունում, սոցիալ-տնտեսական քաղաքականություն մշակում, անհատն է ղեկավարում մեր երկրում գործող հանք շահագործող մոտ հազար ընկերությունները, գյուղացին է ամեն աշուն այրում դաշտերի խոզանը՝ հրդեհների և օդի աղտոտման պատճառ դառնալով, քաղաքային և գյուղական բնակավայրերի բնակիչներն են մեր երկրի եզակի էկոհամակարգով և ակունքներում խմելու ջրի որակ ունեցող գետերը վերածում աղբատարների, որսի սիրահարներն են վերացնում կենդանական աշխարհը, բոլորս ենք աղտոտում մեր շրջակա միջավայրը բնության գրկում հանգստանալիս կամ մեքենաներով ճամփորդելիս, երբ աղբը պատուհանից գցում ենք դուրս:

Բաց երկնքի տակ գտնվող թանգարան այցելած զբոսաշրջիկները մեր եկեղեցիների և հարուստ բնության մասին իրենց հիացական տպավորությունների հետ հիշատակում են նաև աղտոտված միջավայրը և մեր անհոգատար վերաբերմունքը դրախտային հայրենիքի հանդեպ:

Մեր քաղաքացիների այս վարքագիծը փոխելու համար ընդամենը պետք է նրանց մեջ ամրացնել այն գիտակցումը, որ սեփական տան պատուհանից ու դռնից այն կողմ գտնվողը նույնպես իրենց և երեխաների սեփականությունն է: Սա անելու համար պետք է փոխվի ներկայում գերակայող մտածողությունը, որը խորհրդային գաղափարախոսության հետևանք է, և որի կրողն է դեռ ապրում այսօրվա Հայաստանում՝ նույն մտածելակերպով սերունդ դաստիարակելով:

70 տարի ավագ սերնդին և մեզ ներարկել են հանրային սեփականության գիտակցումը, որ շրջակա միջավայրը ժողովրդինն է, սակայն խորհրդային հասարակության մեջ անհատը մշտապես երկրորդայնացված է եղել: Հետևաբար մեր ավագ սերնդի գիտակցության մեջ ներմուծվել է բանաձև, ըստ որի՝ բնությունը հանրային է, բայց անձամբ իրենը չէ: Այսօր այդ մտածելակերպն է փոխանցվում նաև մատաղ սերնդին՝ հիմնականում չգիտակցված:

Մարդուն դեպի բնություն տանելու առաջին քայլը նրա մեջ այն գիտակցության սերմանումն է, որ նա է միակ սեփականատերը մեր հայրենիքի գերհարուստ կենսաբազմազանության: Միայն այդ գիտակցությամբ հանք շահագործողը, գործարանատերը, բանվորը, գյուղացին, ուսուցիչն ու մատաղ սերունդը կարող են ապահովել իրենց և գալիք սերունդների առողջ միջավայրը, իսկ դրան հասնելու ճանապարհը էկոկրթությունն է, որն սկսվում է ընտանիքից: ■

Մի մտահոգիչ դիտարկում «Հայրենիք» - «Պետություն» հասկացությունների հարաբերակցության շուրջ հարցի շուրջ

Արարատ Հակոբյան

Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող

ՀՀ ԱԺ մշտական հանձնաժողովների ս. թ. հոկտեմբերի 30-ի համատեղ նիստում հանրապետության 2024 թ. պետբյուջեի նախագծի քննարկման ժամանակ ընդարձակ ելույթով հանդես եկած ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանը մի դրվագում, մեր կարծիքով, բանաձևեց արտաքուստ անմեղ ու գրավիչ, բայց խորքիմաստային առումով՝ մտահոգիչ, վտանգավոր ու վնասակար հայեցակարգային բնույթի մի եզրույթ, այն է՝ «**Հայրենիքը պետությունն է, սիրո՛ւմ ես հայրենիքը՝ ուժեղացրու պետությունը**»[11]: Իհարկե, հայրենի հող-հայրենիքի վրա հիմնված պետականությունը, տվյալ դեպքում՝ ՀՀ-ն, սիրելը անառարկելի, իմպերատիվ ճշմարտություն է: Բայց եթե այս կարգախոսը գործածվեր սովորական մի երկրի առնչությամբ, կարելի էր ընկալել ու չառարկել, քանզի այն նույնիսկ դաստիարակիչ հայրենասիրական բաղադրիչներ (կոմպոնենտներ) է պարունակում: Սակայն, կարծում ենք, միանգամայն ուրիշ է և այլ կերպ պիտի ընկալել պատմաաշխարհագրական բազմահարուստ ու պատմաքաղաքական և հոգևոր-մշակութային հագեցած անցյալ ունեցող, երբեմնի ծովից ծով սահմաններ ունեցող, իսկ ներկայում աշխարհաքաղաքական բարդ կացության մեջ հայտնված Հայաստանի ու հայ ժողովրդի պարագայում:

Իբրև պատմաբան և ավելի քան երեքհազարամյա Հայք-Հայաստանի պատմության քիչ թե շատ գիտակ՝ կարծում ենք, որ չի կարելի քաղաքական այդ երկու՝ «Հայրենիք» և «Պետություն» հասկացությունները, նույնիսկ հայոց պատմության անցյալի հիմքով ու հենքով, տարածականորեն նույնացնել: Պատմականորեն ստացվել է այնպես, որ մեր հին և միջնադարյան հինգ-վեց պետականությունները (հարստությունները), արտաքին ու ներքին աննպաստ գործոններով պայմանավորված, հիմնականում չեն համընկել մեր հսկայածավալ հայրենիքի՝ պատմահայր Մ. Խորենացուն կամ մեծ բնագետ Ա. Շիրակացուն վերագրվող «Աշխարհացոյց»-ում ներկայացված Մեծ Հայքի քարտեզի 15 աշխարհների (նահանգների) հետ: Եվ միշտ չէ, որ դրանք կարող են համընկնել կամ նույնանալ: Պատմական անցյալի ու ներկայիս իրողությունների համադրման առումով աշխարհի շուրջ 200-ի հասնող երկրներում միշտ չէ, որ կարելի է հանդիպել տվյալ ժողովրդի հայրենիքն ու պետությունը տարածականորեն իրար նույնական կամ առավել ևս՝ լիովին համընկնելու իրողությանը:

Նկատենք, որ ՀՀ 4 հարևաններից 2-ը՝ Իրանը և Վրաստանը, որոնց հետ դրական հարաբերություններ ունենք, ի սկզբանե ապրում են իրենց պատմական հողի վրա, և նրանց հայրենիքն ու պետությունը հիմնականում տարածականորեն համընկնում են ու, ըստ էության, նույնական են: Իսկ մյուս երկուսի՝ Թուրքիայի և Ադրբեջանի (որոնց հետ, ըստ էության, գտնվում ենք առճակատման մեջ և դիվանագիտական հարաբերություններ չունենք) պետականությունները իրենց պատմական հայրենիքում չեն, այլ քոչած, ներգաղթած և բռնազավթած տարածքներում են հաստատվել: Այդ են մեզ հուշում ու հավաստում հայ և օտար պատմավավերագիր նյութական, գրական ու հոգևոր աղբյուրները, իրողություններն ու արդի իրականությունը: Ավելին՝ նրանց պետականություններն էապես կառուցված են հայոց պատմական հայրենիքի տարածքների վրա, որտեղից էլ ծագում են ՀՀ հանդեպ թշնամանքը, միջպետական հարաբերությունների չկարգավորված վիճակը և իբրև դրա պարադոքսային արտահայտություն՝ նոր պատերազմի հրահրման և նոր տարածքներ գրավելու հավակնություններ:

Պատմականորեն ստեղծվել է մի իրավիճակ, որ ներկայիս մեր պետությունը՝ ՀՀ-ն, մեր պատմական հայրենիքի ընդամենը 1/10-րդ մասն է, և որի տարածքային ամբողջականության հանդեպ նոր ոտնձգության սպառնալիք կա, էլ չենք խոսում Արցախի փաստական կորստի մասին: Թուրք-ադրբեջանական ծավալապաշտ քարոզչամեքենան, կեղծելով պատմությունն ու իրականությունը, հավակնում է տիրանալ բուն արևելահայ այլ տարածքներին, ընդհուպ մինչև Երևան՝ դրանք ներկայացնելով իբրև ո՛չ ավել, ո՛չ պակաս «Արևմտյան Ադրբեջան»:

Նման լկտի հավակնությունների պայմաններում չենք կարծում, թե հանդես գալով քարոզչական բնույթի «Հայրենիքը պետությունն է», այսինքն՝ ընդամենը Հայաստանի Հանրապետությունն է բառախաղի նմանվող զգուշավոր կարգախոսով, ըստ որի՝ մեր հայրենիքը միայն ներկայիս ՀՀ-ն է՝ դա կհասկանա մեր հարևան, մեղմ ասած, քաղաքական հակառակորդը և այլևս ոտնձգություն թույլ չի տա մեր այս պետականության սահմանների ու տարածքի նկատ-

մամբ, ինչին վերջին տարիներին արդեն քանիցս ականատես ենք եղել:

Մյուս կողմից՝ ասվածը բնավ չի նշանակում, թե չպետք է սիրես քո հայրենիքը և նրա միջուկը հանդիսացող ՀՀ-ն: 19-րդ դարակեսերի ազատության մեծ երգիչ Մ. Նալբանդյանը, երբ գրում էր ներկայում պետական օրհներգ ու քաղաքական աղոթք դարձած «**Մեր հայրենիքը**», պատգամում էր, որ պայքարի մաքառումաշատ ճանապարհով միայն կարող ենք հասնել պետականության գաղափարի նյութականացմանը: Եվ այդ ուղիով է, որ մեծ կորուստների ու զոհողությունների գնով հասանք 1918 թ. Առաջին Հանրապետությանը, նրա իրավահաջորդ, երկրորդ՝ Խորհրդային Հայաստանին և մերօրյա՝ Երրորդ Հանրապետությանը:

Հայրենիքն ու պետականությունը հոգևոր իմաստով անբաժանելի, իրար փոխլրացնող ամբողջություն են: Պարզապես անթույլատրելի է մեր մեծ հայրենիքն ու մեր ներկայիս փոքրատարածք պետությունը՝ ՀՀ-ն, մտովի կտրել իրարից, օտարացնել ու նույնիսկ հակադրել իրար: Ընդհակառակը, թեկուզ իբրև պատմական հիշողություն՝ մոռացության չմատնելով մեր պատմական մեծ հայրենիքը՝ ազգովի պիտի ջանանք պաշտպանել ու ամրակայել ներկայիս մեր պետականությունը՝ անկախ նրա տարածքային չափերից, նրա իշխանավորներից, 19-րդ դարի արևելահայ մեծ հրապարակախոս Ստ. Նազարյանցի խոսքերով ասած՝ «**քաղաքական անոթը**», այսինքն՝ «**պետականությունը**»[12], քանզի **յուրաքանչյուր ազգ-ժողովրդի ինքնակազմակերպման բարձրագույն ձևը նրա պետականությունն է**, նրա կերտումը, պաշտպանված, կենսունակ, ստեղծարար ու ժողովրդավար լինելը: Հին աշխարհի պատմագիր ու փիլիսոփա Լուկիոս Պլուտարքոսը (46-120 մ.թ.) հղում անելով անտիկ աշխարհի մեծ փիլիսոփա Պլատոն Աթենացուն (427-347 մ. թ.ա.)՝ նշում է, որ «սոսկ այն ժամանակ պետությունները կազատվեն չարիքից, երբ նախախնամության բարի կամքով միավորվեն ուժեղ **իշխանությունը**, **իմաստությունն** ու **արդարությունը**»[13]: Միաժամանակ ճիշտ է նկատել պետության գաղափարի առաջին մարմնավորող նույն Պլատոնը, որ սովորաբար արդարացին, լինի մարդ, թե պետություն, միշտ տուժում է և ավելին է վճարում, քան անարդարացին[14]: Ասված միտքը արդիական է հնչում Հայաստանի ու հայ ժողովրդի համար:

Հայ ժողովրդի ավելի քան երեքհազարամյա հայրենիքն այն բնօրրանն է, ուր բնապատմական օրինաչափ զարգացումներով կազմավորվել է հայ ժողովուրդը որպես ազգ-հանրույթ, քաղաքական առումով ինքնակազմակերպվել ու կերտվել են հայոց հին և միջնադարյան պետականությունները, ստեղծագործ աշխատանքով արարվել են հոգևոր-մշակութային բազում համամարդկային արժեքներ և այլն: Մեր հայրենի միջուկը հանդիսացող ՀՀ-ից բացի՝ մեր ներկա ու ապագա սերունդը պիտի շարունակ հիշի ու ոչ-պակաս կերպով սիրի նաև մեր պատմական ամբողջական **մեծ հայրենիքը՝ Հայք-Հայաստանը**, ոչ թե իբրև զուտ հիշողություն, այլև հարկ եղած դեպքում՝ **պահանջատեր** լինելու առումով: Այդ ամենը ոչ միայն չպետք է մոռացության մատնվի, այլև դրվի մեր ազգային պետական կրթության ու դաստիարակության, եթե կուզեք, նաև քաղաքականության հիմքում: Եթե մեր հայրենիքը միայն ՀՀ-ն է, կնշանակի, որ մենք այլևս չպետք է մտածենք ու գործենք անարդար, բռնի, հանցավոր, ցեղասպանական մեթոդներով բռնազավթված մեր հայրենիքի երկրամասերը վերադարձնելու, պատմական արդարությունն ու հայ ժողովրդի իրավունքները վերականգնելու ուղղությամբ, իսկ հոգևոր առումով կնշանակի մոռացության տալ հայոց ավելի քան երեքհազարամյա պատմությունը, նրա արարած հոգևոր-մշակութային արժեքները:

Համեմատական կարգով հարկ է արձանագրել, որ հայոց պետականությունները կերտվել են հայոց հայրենիքում՝ Մեծ Հայքում, Փոքր Հայքում և միջնադարում հայոց հարազատ հող-հայրենիք հանդիսացող Հայկական Կիլիկիայում: Ի տարբերություն դրա՝ ներկայիս մեր հարևան, միջնադարում մեր տարածաշրջանում հայտնված թուրք-թաթարական վայկատուն, բարբարոս ցեղերն ու ժողովուրդները նստակեցության անցնելով՝ ի վերջո պետականություն են հիմնել բնավ ոչ իրենց պատմական հայրենիքում, այլ օտարի հողում: Ընդ որում, այդ ընթացքում իրենց ճանապարհին կոտորելով, թալանելով և նույնիսկ ոչնչացնելով (ցեղասպան անելով) կամ էլ յուրացնելով մարդկության ստեղծած քաղաքակրթական արժեքները՝ հիմնել են սոսկ բռնի ռազմուժի վրա հենված բռնակալ պետություններ՝ մշտապես ահուսարսափի մեջ պահելով իրենց պատմական բուն հայրենիքում ապրող ու արարող ազգերին ու ժողովուրդներին: Ինքնին հասկանալի է, որ տվյալ դեպքում խոսքը վերաբերում է Անդրբայկալ-Սիբիրից Միջին Ասիայով (այսինքն՝ Մեծ Թուրանից) գաղթած թուրքական քոչվոր ցեղերից մեկի առաջնորդ Օսմանի կամ Օթմանի՝ 1299 թ. Փոքր Ասիայում (Կենտրոնական Անատոլիայում) հիմնած օսմանյան պետությանը, որը նվա-

ճելով հարևան երկրները, առաջնահերթ կործանելով Բյուզանդիան, ինչպես նաև նվաճելով Հայաստանի մեծ մասը (Արևմտյան Հայաստանը)՝ հիմնեց Օսմանյան կայսրությունը՝ ներկայիս Թուրքիայի Հանրապետությունը: Իսկ մյուսը՝ դարձյալ միջնադարում անդրկովկասյան տարածաշրջան ներթափանցած նրա ցեղակից թյուրք-թաթարական քոչվոր ցեղերից առաջին անգամ 1918 թ. մայիսին պետություն դարձած «Ազերբայջան-Ադրբեջանը», յուրացրեց պարսկական «Ատրպատական» երկրամասի անվանումը, որն, ի դեպ, հեռագնա նպատակներով անվանակոչել են օսմանյան զորավարներ Խալիլ և Նուրի փաշաները[15]:

Ցավալին ու դատապարտելին այն է, որ ՀՀ-ին և հայ ժողովրդին թշնամի այդ երկու ցեղակից պետությունները գործնականում Խորհրդային Ռուսաստանի օժանդակությամբ, հատկապես 1920 թ. Ալեքսանդրապոլի և 1921 թ. Մոսկվայի ու Կարսի հայավնաս պայմանագրերով յուրացնելով հայապատկան երկրամասերի մեծ մասը, այդ թվում՝ 1921 թ. հուլիսի 5-ի ՌԿ(բ)Կ ԿԿ-ի Կովբյուրոյի անօրինական որոշմամբ Լեռնային Ղարաբաղը բռնակցելով Խորհրդային Ադրբեջանին՝ այժմ էլ համաշխարհային հանրության ու միջազգային կառույցների աչքի առաջ սպառնում են նոր պատերազմով՝ ՀՀ ղեկավար շրջանակների կողմից շարունակ կրկնվող ՀՀ ընդամենը 29,8 հազ քառ. կմ տարածքից նոր հողակտորներ ու գյուղեր «պոկելով», միջանցքներ պահանջելով և այլն:

Մի պահ, եթե անգամ անգիտանանք, թե Կարսը, Սուրմալուն, անգամ Արևմտյան Հայաստանը «մեր հայրենիքը չեն», կամ դա ընդամենը պատմական անցյալ է, այդ համատեքստում մեջտեղ է գալիս և մեզ շարունակում է տանջել մեր հայրենիքի կորստի ամենաթարմ օրինակը, թե՞ «Արցախը մեր հայրենիքը չէ»: Ցավոք, ներկայում այսպես են գրվում հայոց պատմության ու հայրենագիտական բնույթի դասագրքերը, և նոր աճող սերնդին հաճախ հրամցվում

Վանի ինքնապաշտպանությունը 1915 թ.

են ապազգային, օտարածին գաղափարներ, տեսադրույթներ ու կրթական չափորոշիչներ, ինչը կնշանակի սխալ հունով տանել նոր սերնդի կրթությունն ու դաստիարակությունը:

Հանրագումարի բերելով վերոշարադրյալը՝ արձանգրենք, որ անընդունելի է վարչապետի արտահայտած նման ձևակերպումը թե՛ քաղաքական և թե՛ բարոյական առումներով: Մյուս կողմից՝ պիտի տեսնել ու հաշվի առնել, թե քաղաքական լկտիության հասնող թուրք-ադրբեջանական պետական մակարդակի հավակնությունները ո՞ւր են հասել: Այս համատեքստում մեր ձեռնարկելիք հակաքայլը, ինչպես պատգամել են մեր հասարակական-քաղաքական մտքի ականավոր դեմքերը՝ սկսած Խ. Աբովյանից, ավարտած Հ. Թումանյանով ու Ե. Չարենցով, **ազգի**, **հայրենիքի** ու **պետության** փրկությունը միասնության և անբաժանելիության մեջ է: Բայց, ցավոք, դարձյալ հարց է ծագում՝ արդյոք մի՞շտ ենք առաջնորդվել ու առաջնորդվում **հայակերտումի** ու **հայրենակերտումի** այդ գաղափարով: Այդ առումով ազգովի մտածելու, խորհելու, դասեր քաղելու ու հետևություններ անելու, իսկ որ առավել կարևոր է՝ իրականացնելիք շատ գործեր կան: ■

Օգտագործված աղբյուրներ

1 Տես «Հրապարակ», 31 հոկտեմբերի, 2023 թ., (թիվ 187):
2 Տես Նազարյանց Ստ., Երկեր, հ. Ա, Թիֆլիս, 1913, էջ 90 և 99:
3 Պլուտարքոս, Երկեր, Եր., «Հայաստան» հրատ., 1988, էջ 388:
4 Տես Платон, Государство, СПБ, изд. «Наука», 2005, с. 180:
5 Ա. Հակոբյան, Ադրբեջանի Հանրապետության անվանման հարցի շուրջ, (տես Դրոշակ», Եր., 2022, թիվ 7, էջ 28-32):

Հայոց պատմության դասագիրքը թուրքական շահերի պաշտպան

Անի Մելքոնյան
Պատմաբան

«Հաճախ կաշառվում են պատմաբանները, պատմությունը՝ երբեք»:
-Գ. Նժդեհ

Յուրաքանչյուր ժողովրդի համար թե՛ սերնդի դաստիարակության, թե՛ պետականության կերտման գործում չափազանց կարևոր է ազգային պատմության դերը: Սա է պատճառը, որ շատ ու շատ ժողովուրդներ, ինչպես օրինակ, թուրքերը իրենց համար փորձում են ստեղծել գրեթե իդեալական պատմություն՝ հաճախ կեղծելով պատմական փաստերը:

Մենք՝ հայերս, բավականին հարուստ պատմություն ունենալով, երբեք նոր պատմություն հորինելու կարիք չենք ունեցել, թեև օտարներն ու օտարի շահերը սպասարկողները հաճախ են փորձել կեղծել կամ խեղաթյուրել մեր պատմությունը:

Խորհրդային Միության փլուզումից հետո սկսվեց խորհրդային կեղծիքներից հայոց պատմության մաքրման գործընթացը: Թվում էր, որ այսուհետ պայքարը միայն թուրքական պատմակեղծարարության դեմ է լինելու, սակայն 2018 թ. «թավշյա հեղափոխությունից» հետո յուրահատուկ գրոհ սկսվեց ազգային արժեհամակարգի դեմ. թիրախ դարձան հատկապես հայոց լեզուն և հայոց պատմությունը:

2019 թ. առաջարկված կրթական նոր չափորոշիչները[1] նախատեսում էին հայոց լեզվի և հայոց պատմության դասաժամերի կրճատում բուհերում, գրականության դասագրքերից հայ միջնադարյան գրականության դուրս բերում, հայոց պատմության դասագրքերի խմբագրում և թուրքերի տեսանկյունից «թշնամական կերպարների» հեռացում, ինչպես նաև պատմական փաստերի խեղաթյուրում:

Այսպես կոչված, «կրթական նոր չափորոշիչները» առաջ բերեցին գիտական հանրության, մի շարք ուսուցիչների և ուսանողների դժգոհությունը, մասնավորապես ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Արտակ Մովսիսյանը, Պատմության ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր Աշոտ Մելքոնյանը և բազմաթիվ հարգված գիտնականներ մատնանշեցին չափորոշիչների և դրանց հիման վրա ստեղծվող դասագրքերի վտանգները[2]: Բողոքի ակցիաներ սկսեց ՀՅԴ Հայաստանի երիտասարդական միությունը, որին միացան բազմաթիվ ուսանողներ: Չափորոշիչների կիրառումը և դրանց հիման վրա դասագրքերի տպագրումը հետաձգվեց նախ՝ կորոնավիրուսի, հետո՝ պատերազմի, դավաճանական կապիտուլյացիայի և դրան հաջորդած իրադարձությունների հետևանքով:

2023 թ. տպագրվեց 7-րդ դասարանի հայոց պատմության նոր դասագիրքը: Այս «վայ» դասագիրքն իսկական աղետ է նոր սերնդի համար և աննկարագրելի ավեր հայոց պատմագիտության ասպարեզում:

Դասագրքի հեղինակը ԵՊՀ պատմության ֆակուլտետի համաշխարհային պատմության ամբիոնի դոցենտ Սմբատ Հովհաննիսյանն է, որը չի խորշել պատմության ակնհայտ կեղծումից:

Այժմ կփորձենք հնարավորինս հակիրճ քննարկել դասագրքում տեղ գտած առավել ակնհայտ կեղծիքները և բացահայտել դրանց վտանգները՝ սկսելով մեր պատմական հայրենիքի՝ Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ հիշատակություններից:

Այսպես՝ ըստ դասագրքի՝ Հայկական լեռնաշխարհը «... գտնվում է Իրանական և Փոքրասիական (Անատոլիական) բարձրավանդակների, Միջագետքի հարթավայրի և Սև ծովի միջև»[3]: Առաջին հայացքից թվում է, թե ամեն ինչ կարգին է, բայց 7-րդ դասարանի երեխային սովորեցնում են Փոքր Ասիան և Փոքրասիական բարձրավանդակը կոչել միայն 13-րդ դարում այստեղ հայտնված քոչվոր թուրքերի տված «Անատոլիա» և «Անատոլիական բարձրավանդակ» անունով: Ինչո՞ւ, եթե ակնհայտ է, որ այլոց հայրենիքները զավթելու նպատակով են թուրքերը Փոքրասիական բարձրավանդակին կցել այդ արհեստական անունը:

«Արևելքում լեռնաշխարհի սահմանները հասնում են մինչև Ուրմիա (Կապուտան) լիճ...»[4]: Հետաքրքիր է՝ Ս. Հովհաննիսյանն իրո՞ք չգիտի Հայկական լեռնաշխարհի արևելյան սահմանը: «Քարտեզագրությունից անտեղյակ մարդն անգամ անմիջապես կնկատի, որ Հայկական լեռնաշխարհի արևելյան սահմանը Կասպից ծովն է, իսկ Ուրմիա լիճը գտնվում է լեռնաշխարհի հարավ-արևելքում»[5]: Ուրեմն հեղինակն ակնհայտորեն կեղծում է՝ գուցե ադրբեջանցիներին չնեղացնելու համա՞ր:

Հետաքրքիր է, որ հայոց պատմական հայրենիքի



Տիգրան Մեծի կայսրությունը Ք. ա. 80 թ. (ժամանակակից սահմաններով)

1. Բացահայտիր քարտեզը: Տիգրան Մեծի կայսրության ընդարձակումը դեպի արևմուտք ի՞նչ մարտահրավերների առջև էր կանգնեցնում Հայաստանին: Ի՞նչ հետևանքներ կարող էր դա ունենալ Հայաստանի համար:

2. Կիրառիր աշխարհագրական հմտություններդ: Ի՞նչ պետություններ էր ընդգրկում Տիգրան Մեծի կայսրությունը: Այսօրվա ո՞ր երկրների տարածքներն է ընդգրկել այն:

մասին խոսելիս Ս. Հովհաննիսյանը «մոռացել» է տեղեկություններ հայտնել նաև Փոքր Հայքի մասին:

Մեկ այլ ուշագրավ դիտարկում. դասագրքում նշվում է. «Ներկայիս Հայաստանի Հանրապետությունը գտնվում է Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան մասում և հիմնականում (ոչ ամբողջությամբ) ընդգրկում է Այրարատ, Սյունիք և Գուգարք նահանգները»[6]: Այս դեպքում հարց է ծագում. ո՞ր նահանգի մի մասի տարածքում է գտնվում ՀՀ Տավուշի մարզը, եթե այն ո՛չ Գուգարքում է, ո՛չ Այրարատում, ո՛չ էլ Սյունիքում: Այս դեպքում էլ դասագրքի հեղինակը «մոռացել» է Ուտիք նահանգը, որի մեծ մասը զավթած Ադրբեջանը այդ տարածքով սահմանակցում է Տավուշի մարզին և վերջինիս նկատմամբ զավթողական նկրտումներ ունի: Ինչպիսի՞ համերաշխություն «հարևան» ադրբեջանցիների հետ:

«…Մարդկության նախապատմության վերաբերյալ գրավոր նյութեր չկան»[7],—ասում է այն պատմաբանը, որի երկիրը լիքն է ժայռապատկերներով, որոնց միայն մի մասն է ուսումնասիրված: Ի՞նչ են դրանք, եթե ոչ գրավոր նյութեր, որոնք պատկերացում են տալիս վաղնջագույն ժամանակներում Հայկական լեռնաշխարհի բնիկների՝ մեր նախնիների մասին:

Ինչևէ, անցնենք առաջ:

«…Ամենից վճռորոշ գաղթը կատարեց հոմո սապիենսը, որը սնունդ փնտրելու նպատակով մոտ 80.000 տարի առաջ Արևելյան Աֆրիկայից շարժվեց դեպի հյուսիս: Գաղթականները հասան Արևմտյան Ասիա, այդպիսով նաև Հայկական լեռնաշխարհ»[8]: Պատմաբան-հնագետները զարմացած կարող են հարցնել՝ այդ դեպքում ովքե՞ր էին ապրում Գուգարքում հայտնաբերված, շուրջ 1,8 միլիոն տարվա թվագրում ունեցող բնակատեղիում, կամ Արցախի Հանրապետության Հադրութի շրջանի Ազոխ գյուղի քարայրում հայտնաբերված 300.000 տարեկան մարդկային մնացորդները ո՞ւմ էին պատկանում, եթե դասագրքի հեղինակը Հայկական լեռնաշխարհի բնակիչներին Աֆրիկայից է բերում, այն էլ 80.000 տարի առաջ՝ շատ նրբորեն առաջ տանելով «հայերի եկվորության» չարչրկված, բայց վտանգավոր տեսությունը (այս տեսության մասին առավել մանրամասն ավելի ուշ կխոսենք այլ հոդվածներում): Սա «հայերի եկվորության» տեսությունը նրբորեն պաշտպանելու միակ դրսևորումը չէ. «Բալկանյան տեսության համաձայն՝ հայերի նախնիներն են Բալկաններից Հայկական լեռնաշխարհ գաղթած փռյուգացի գաղութարարները»[9]:

Դրա փոխարեն՝ պատմահայր Խորենացու հաղորդած տեղեկությունները հայերի տեղաբնիկության վերաբերյալ Ս. Հովհաննիսյանը առասպելական է որակում: Դասագրքում, փաստորեն, միայն հպանցիկ նշվում է, որ Մովսես Խորենացին հայերին վերագրում է տեղական ծագում, այն էլ առասպելի հիման վրա, և ոչ մի խոսք հնագիտական գտածոների, ինչպես նաև Աստվածաշնչի վկայությունների մասին, որոնց համաձայն՝ Աստված մարդկությունն արարել է եդեմ-դրախտում, որը գտնվում էր Եփրատ, Տիգրիս, Գեհոն (Արաքս) և Փիսոն (Ճորոխ) գետերի ակունքների շրջանում, ասել է թե՝ Հայկական լեռնաշխարհում և, իհարկե, ոչ մի հիշատակություն համաշխարհային ջրհեղեղի, Արարատի վրա Նոյյան տապանի հանգրվանելու և Հայկական լեռնաշխարհից մարդկության վերասկզբնավորման մասին....: Փաստորեն, հայերի տեղաբնիկ լինելն «առասպել» է: «Առասպել», որը հաստատվում է հնագիտական պեղումների շնորհիվ, շումերական, աքքադական, խեթական սեպագրերով, Աստվածաշնչի վկայությամբ և հայ ժողովրդի ծագման վերաբերյալ արաբական ու վրացական աղբյուրներով, որոնց մասին, իհարկե, Սմբատ Հովհաննիսյանը «մոռացել» է: Այն դեպքում, երբ այս տարածաշրջանում միայն 13-րդ դարում հայտնված քոչվոր թուրքերն իրենց համարում են այս տարածաշրջանի բնիկները:

Այսպիսով՝ «Հնարավորինս հերքվում է հայերի տեղաբնիկ լինելու տեսությունը, և կասկածի տակ է դրվում Հայկական լեռնաշխարհի՝ հնդեվրոպական նախահայրենիքի մաս լինելը»[10]: Շատ նրբորեն առաջ է տարվում թե՛ գիտականորեն և թե՛ Աստվածաշնչի միջոցով վաղուց հերքված «հայերի եկվորության տեսությունը» այն դեպքում, երբ գո՛նե հնդեվրոպական ժողովուրդների նախնիներն իրենց ապագա հայրենիքներ գնացել են հենց Հայկական լեռնաշխարհից. խոսքը միայն բասկերի մասին չէ, այլ նաև հիքսոսների, բրիտների, բավարների, դասկոնների և այլն....

Թվում է՝ այսքանը բավարար էր դասագիրքը մերժելու համար, բայց մերժելի, անհասկանալի ու առնվազն տարօրինակ գաղափարներ այս դասագրքում շատ կան:

Դասագրքի պնդումներից է. «Հայկական լեռնաշխարհում վաղ պետական կազմավորումներից հայտնի են Արատտան, Հայասան, Նաիրին, Արմե-Շուպրիան և Ուրուատրին»[11]: Նախ՝ որտեղի՞ց է վերցրել Ս. Հովհաննիսյանը «Ուրուատրի» տարօրինակ եզրույթը, եթե վաղ պետական կազմավորումների թվում նման միավոր չի հիշատակվում:

Երկրորդ՝ ոչ մի հիշատակություն չկա առաջին հայկական պետական կազմավորման՝ Արատտայի պե-

տական կառուցվածքի մասին, իսկ տեղայնացումը համարվում է վարկածային: Մինչդեռ հայտնի է, որ միջագետքյան աղբյուրներում Սուբուր (Սուբարտու, Շուպրիա) ձևով հիշատակվող Արատտան գտնվում էր Վանա լճի ավազանում: Ինչպես տեսնում ենք, Շուպրիան կամ Արմե-Շուպրիան (Սուբուր-Հայա) օտար (միջագետքյան) աղբյուրներում Արատտային տրված անվանումն է, ոչ թե առանձին պետական կազմավորում:

Ոչ մի խոսք չկա «Հայկ և Բել» «առասպելի» պատմական հիմքը հանդիսացող Արմանի (Արմանում) պետական կազմավորման մասին, որի մասին խոսելիս Միջագետքի առաջին բռնակալ Սարգոն Աքքադացու թոռ, աքքադական արքա Նարամ-Սուենը (Սին) նշել է. «Մարդկության արարումից ի վեր ոչ ոք չի կարողացել նվաճել Արման(ում) երկիրը»[12]: Ինքը՝ Նարամ-Սուենը, որն իրեն հռչակել էր «Աստված», սպանվեց հայկական զորքերի դեմ պատերազմում՝ Ք. ա. մոտ 21-րդ դարում (Ալիշանի թվագրմամբ՝ 2492 թ.):

Նույնպիսի լռություն է նաև Միտաննի պետական կազմավորման շուրջ, որի արքայադուստրերը մի քանի սերունդ շարունակ դառնում էին Եգիպտոսի թագուհիներ (նրանցից ամենահայտնին Նեֆերտիտին էր): Եգիպտական աղբյուրներում Միտաննին հիշատակվում է Նահարինա ձևով, այն թվագրվում է Ք. ա. 14-13-րդ դարերով և տեղագրվում է Հայաստանի հարավ և Միջագետքի հյուսիս ընկած տարածքներում: Հատկանշական է, որ քրդերը Միտաննին համարում են քրդական, իսկ թուրքերը՝ թուրքական պետական կազմավորում: Արդյո՞ք Միտաննիի մասին մոռանալով՝ Ս. Հովհաննիսյանը իր համերաշխությունն է հայտնում թուրքերին ու քրդերին:

Դասագրքում մի քանի հպանցիկ խոսք է իր ժամանակի համար ահռելի ռազմական ուժ՝ 700 մարտակառք և 10.000 հետևազոր[13] մարտադաշտ դուրս բերող Հայասսա երկրի մասին, ոչ մի խոսք Հայասայի տեղագրման մասին (Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջան՝ Բարձր Հայք, Փոքր Հայք, Սև ծովի հարավարևելյան ափի, Հայկական Տավրոս լեռների, Եփրատ գետի և Վանա լճի միջև): Սա թուրք «հարևաններին» չնեղացնելու միտումով մոռացված փա՞ստ է, թե՞ համաշխարհային պատմության մասնագետ Սմբատ Հովհաննիսյանը չի տիրապետում հայոց պատմությանը… Նույնպիսի հպանցիկ ձևով էլ հիշատակվում է Նաիրի երկիրը (Վանա լճի շրջանում և նրանից դեպի հարավ ու արևմուտք ընկած տարածքներում- Ա.Մ.), որն ըստ ասորեստանյան արքաների՝ ունեցել է 250 քաղաք՝ զորավոր պարիսպներով, դարձել հայկական մեկ-միասնական պետության հիմքը:

Մի քանի դիտարկում էլ Վանի (Արարատյան) թագավորության մասին: Ցանկանում ենք հատուկ ուշադրություն հրավիրել Վանի թագավորության վերաբերյալ հետևյալ ձևակերպման վրա. «Այն առավել հայտնի է իր ասորեստանյան Ուրարտու (Արարատ) անունով»[14]: Սա կա՛մ քերականական սխալ շարադրանք է, որից տպավորություն է ստեղծվում, որ Արարատը ասորեստանյան անվանում է, կա՛մ դիտավորությամբ կատարված կեղծիք է, որովհետև ««Արարատ» կամ «Արարատյան թագավորություն» տերմիններն աստվածաշնչյան են»[15]:

Ճիշտ է այն, որ Ք. ա. 782 թ., Արգիշտի Ա-ի օրոք կառուցվեց Էրեբունի ամրոցը, բայց ոչ մի ակնարկ այն մասին, որ Էրեբունին Հայաստանի ներկայիս մայրաքաղաք Երևանն է (նախորդ տարիների դասագրքերում դրվում էր անգամ Էրեբունի-Երևանի հիմնադրման արձանագրությունը) և սա այն դեպքում, երբ թշնամի Ադրբեջանը կեղծում է պատմությունը՝ Երևանի հիմնադրումը կապելով Ռևան Ղուլի խանի անվան հետ[16] (17-րդ դարի պարսիկ խան), իսկ Հայաստանում հայ պատմաբանը վախենո՞ւմ է ասել, որ Երևանի հիմնադիրը հայոց արքա Արգիշտի Ա-ն է, իսկ միգուցե այս փաստը ևս դիտավորությամբ է անտեսվել:

«Վանի թագավորության անվան հիշատակությունն ենք գտնում նաև Բեհիսթունյան եռալեզու արձանագրության մեջ: Այն անվանվում է Ուրաշտու՝ բաբելոներեն, Արմինա՝ պարսկերեն և Հարմինույա՝ էլամերեն»[17]: Նշենք, որ Բեհիսթունյան արձանագրության բաբելոներեն հատվածում ոչ թե «Վանի թագավորության անվան հիշատակությունն է», այլ Հայաստանի՛, առհասարակ, որովհետև ասուրա-բաբելոներեն սեպագրերում Հայաստանը կոչվում էր Ուրարտու, հետևաբար արձանագրությունում Հայաստանը հիշատակվում է ոչ թե Ուրաշտու, այլ Ուրարտու

ձևով, իսկ Ուրաշտուն սխալ կամ դիտավորությամբ աղավաղված ձևն է:

Հեղինակը նշում է. «Վանի արքաներն ունեցել են հարեմ: Մենուան իր արձանագրության մեջ իրեն գովաբանում է որպես թագավոր, որն ամենաշատ կանայք է բերել մայրաքաղաք, Տուշպայի հարեմ»[18]: Հետաքրքիր է, թե որտեղից է նման տեղեկություն վերցրել Ս. Հովհաննիսյանը, եթե ինչպես նշում է ուրարտագետ, «Էրեբունի» թանգարանի տնօրեն Միքայել Բադալյանը. «Նման սկզբնաղբյուր չկա: Ուրարտական սեպագիր տեքստերում կան բազմաթիվ վկայություններ կանանց գերեվարելու մասին, սակայն մեզ հայտնի չէ, որ Մենուան հարեմ է ունեցել»[19]: Բացի այդ՝ կարծում ենք՝ արժեհամակարգը խեղաթյուրող անհիմն հորինվածքների փոխարեն՝ 7-րդ դասարանի երեխային նույն Մենուա արքայի մասին ավելի հետաքրքիր և օգտակար տեղեկություններ կարելի է փոխանցել: Ձավեշտալի է անգամ պատկերացնել, որ ժամանակի հզորագույն արքաներից մեկը, որի անվան հետ է կապված Վանի թագավորության մեջ Հայկական լեռնաշխարհի մեծագույն մասի միավորումը (ասել է թե՝ Վանի թագավորությունը առաջին համահայկական պետությունն էր) և Վանի թագավորության վերածվելը տարածաշրջանի հզորագույն տերության, թագավոր, որը հաղթանակներ է տանում Առաջավոր Ասիայի հզորագույն տերության՝ Ասորեստանի նկատմամբ և վերահսկողություն հաստատում դեպի Փոքր Ասիա տանող գլխավոր ճանապարհների վրա, իրեն գովաբանում է «որպես թագավոր, որն ամենաշատ կանայք է բերել մայրաքաղաք Տուշպայի հարեմ»: Այնինչ կարելի էր նշել Վանա լճի արևելքում Մենուա արքայի կառուցած 72 կմ երկարությամբ ջրանցքի, ինչպես նաև նրա անվան հետ կապվող մի հետաքրքիր իրադարձության մասին. արքան իր Արծիբե անունը կրող նժույգով ցատկի ժամանակ սահմանել է ռեկորդ, որը չեն գերազանցել 28 դար (մինչև 1975 թ.)՝ ցատկելով 11մ 39 սմ: Սա, կարծում ենք, ավելի հետաքրքիր է, քան քրիստոնյա հայ երեխային գոյություն չունեցող հարեմի մասին հորինվածքներ հրամցնելը: Իսկ միգուցե հարեմի մասին հիշատակությունը նպատակ ունի հայ երեխային համոզել, որ Վանի թագավորությունը (Ուրարտուն) թուրքական պետությունն էր, նրա արքաներն էլ՝ թուրք, դրա համար էլ հարեմը ընդունված երևույթ էր: Թուրքական պատմակեղծարարության ինչպիսի՞ լեգիտիմացում Ս. Հովհաննիսյանի և ՀՀ ԿԳՄՄՆ-ի կողմից:

Այս ամենից բացի՝ ինչպես իրավացիորեն նշում է Միքայել Բադալյանը. «Նշված է Արարատ լեռը և փակագծում նշված է Ուրուրուտ: Վանի թագավորության որևէ սեպագրում չկա որևէ նման սկզբնաղբյուր»[20]: Հետևաբար որտեղից է Ս. Հովհաննիսյանը վերցրել Արարատ-Ուրուրուտ վտանգավոր զուգորդումը, ինչ հիմքով, ո՞ր սկզբնաղբյուրների հիման վրա է Արարատ-Մասիսը դարձել Արարատ-Ուրուրուտ… Ոչ մի ողջամիտ բացատրություն կամ փաստ:

Միայն Վանի թագավորության մասին բազմաթիվ աչքի ընկնող կեղծիքներ ու խեղաթյուրումներ կան, որոնց անդրադառնալու համար էջերը չեն բավարարի, բայց գնանք առաջ ու խոսենք անգամ պատմությունից վատատեղյակ մարդկանց զայրույթը շարժած ակնհայտ ստի մասին. խոսքը Տիգրան Մեծի ժամանակաշրջանին վերաբերող քարտեզի մասին է, որտեղ անհասկանալի «հրաշքով» Ս. Հովհաննիսյանը նկարել է միայն 1918 թ. ստեղծված Ադրբեջանը, Արցախն էլ՝ «Լեռնային Ղարաբաղ» ձևակերպմամբ, Ադրբեջանի կազմում է տեղավորել[21]: Համաշխարհային պատմության մասնագետ Ս. Հովհաննիսյանը գուցե պարզաբանե՞ր, թե համաշխարհային պատմությանը մինչև 1918 թ. հայտնի հեղինակներից ո՞վ է երբևէ խոսել Ադրբեջան պետության մասին, որն էլ իրեն հիմք է տվել Տիգրան Մեծի նվաճումներն արտացոլող քարտեզում (սրանից ավելի քան 2000 տարի առաջ) նկարել թշնամի Ադրբեջանը՝ այն էլ փաստացի անկախ հանրապետություն Արցախը դրա կազմ խցկելով…. ի՞նչ է սա, եթե ոչ բացահայտ դավաճանություն, ակնհայտ սուտ և պատվիրված կեղծիք:

Մի փոքր էլ առաջ գնանք: Քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն թերի է ներկայացված, ազգային, մշակութային, կրթական կյանքում հայոց եկեղեցու դերի մասին ոչ մի արժեքորող խոսք:

Հեթանոսական մշակույթի մասին խոսելիս հիշատակվում է միայն Գառնու տաճարը, բայց ո՞վ է կառուցել, ե՞րբ, ո՞ւմ է նվիրված եղել, ոչ մի խոսք, ոչ մի հիշատակություն Նեմրութի սրբավայրի, Արդինի-Մուսասիրի Խալդիի տաճարի, «Մհերի դռան» արձանագրությունների, Բագարանի, որպես սրբավայր քաղաքի, կառուցման մասին…

Հայոց բազմահազարամյա պատմության ընթացքում մեր ազգի խոշորագույն նվաճումներից մեկը թերևս հայոց գրերի գյուտն է: Դարակազմիկ այդ իրադարձության մասին Ս. Հովհաննիսյանի հեղինակած դասագրքում կարդում ենք. «405 թ. Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց հայոց այբուբենը, և դպրոցներ բացվեցին թե՛ պարսկական, թե՛ հռոմեական (բյուզանդական) Հայաստաններում»[22]: Միայն այսքանը. ոչ մի խոսք Սահակ Պարթևի, «դանիելյան նշանագրերի», գրերի ստեղծման գործընթացի, մեսրոպատառ դպրության առաջին դպրոց Ամարասի, Վաղարշապատի վարդապետարանի, հայ գրականության ոսկե դարի, թարգմանչական գործի, կրթամշակութային կյանքի վերելքի մասին:

Արշակունյաց կրոնի մասին խոսելիս երկարաշունչ ու անիմաստ տեքստ է տեղադրվել զրադաշտականության մասին… որտեղից է Ս. Հովհաննիսյանը վերցրել այն ենթադրությունը, որ զրադաշտականությունը եղել է Արշակունյաց կրոնը: Եթե անգամ պարթև Արշակունիների կրոնը չի եղել զրադաշտականությունը, այն Սասանյան Պարսկաստանի կրոնն էր (իսկ Սասանյանները Արշակունիների տոհմական թշնամիներն էին), մինչդեռ որևէ խոսք չկա ո՛չ հայկական հեթանոսական կրոնի, ո՛չ էլ 301 թ. քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու մասին:

7-րդ դարի իրադարձությունները նկարագրելիս օգտագործվել է «Հարավային Կովկաս» տերմինը:

Այնինչ հայտնի է, որ արհեստականորեն ստեղծված սույն տերմինը, որը նույնքան արհեստականորեն տարածում են նաև Հայաստանի վրա (նպատակը՝ զրկել ՀՀ-ին Արևմտյան Հայաստանի հանդեպ իր անժամանցելի իրավունքներից (տես պրոֆ. Էդուարդ Լ. Դանիելյան և ուրիշներ)), ավելի ուշ է կիրառվել գիտական գրականության մեջ և ավելի շատ օգտագործվում է արդի ժամանակների համար[23]:

Հայոց պետականության առանցքային դերակատարների շատ պատվանուններ, որոնք ազգային հպարտության, ակնածանքի զգացում կարող են առաջացնել սովորողի մոտ միտումնավոր չեն հիշատակվում, օրինակ՝ Արտաշես 1-ինի՝ «Բարի», «Բարեպաշտ», «Աշխարհակալ» կամ Արտավազդ 2-ի՝ «Աստվածային», Աշոտ 3-րդի՝ «Ողորմած», Սմբատ 2-րդի՝ «Տիեզերակալ» և այլն[24]: Ժամանակագրության խախտման, սխալ տարեթվերի, Բագրատունյաց թագավորության թերի, ոչ պատշաճ, կիսատ-պռատ ներկայացմանը չենք անդրադառնա՝ նյութը շատ չծանրաբեռնելու համար:

Ամփոփելով՝ նշենք միայն, որ բազմաթիվ կեղծիքների ու խեղաթյուրումների հետ մեկտեղ Արցախն ու հայ առաքելական եկեղեցին, «ազգ», «հայրենիք», «հայրենասիրություն» եզրույթները գրեթե վտարված են հայոց պատմության այս «վայ» դասագրքից:

Որպես հետևանք ստացվել է դժվարամատչելի, անհասկանալի, ազգային նկարագրից զուրկ, անարժեք, ձանձրալի, ստերի կույտի հիման վրա ստեղծված մի ցավոտուք, որը հայոց պատմության դասագիրք անվանելն անգամ աններելի հանցագործություն կլինի հայոց պատմության և մեր նոր սերնդի հանդեպ: Այդ «դասագիրքը», որքան հնարավոր է, պետք է հեռու պահել դպրոցներից, քանի դեռ չի խեղվել ու չի փչացել մի ողջ սերնդի արժեհամակարգը: ■

Օգտագործված աղբյուրներ

1.https://www.tert.am/am/news/2020/07/24/Live/3352803?fbclid=IwAR2m82Ro6tOwyTkdev0kpva9fJTblur3x6EhnKuMSjK5geBG2IY90P9hMpQ#.Xxs1EATIkFZ.facebook (մուտք՝ 20.12. 2023 թ.):
2. Նույն տեղում:
3. Հովհաննիսյան Ս., Հայոց պատմություն 7, Եր., 2023, էջ 12:
4. Նույն տեղում:
5.https://yerkir.am/hy/article/2023/10/16/19566?fbclid=IwAR2tanp-gJxKlaBcYnB4f6nItvl6gOnTb2H_K8UdILyOr7OAmrVd1POk2Ks(մուտք՝ 20.12. 2023 թ.):
6. Հովհաննիսյան Ս., նշվ. աշխ., էջ 16:
7. Նույնը, էջ 20:
8. Նույնը, էջ 21:
9. Նույնը, էջ 28:
10.https://yerkir.am/hy/article/2023/10/16/19566?fbclid=IwAR2tanp-gJxKlaBcYnB4f6nItvl6gOnTb2H_K8UdILyOr7OAmrVd1POk2Ks(մուտք՝ 20.12. 2023 թ.):
11. Հովհաննիսյան Ս., նշվ. աշխ., էջ 31:
12. Մովսիսյան Ա., Հայոց 5000-ամյա պետականությունը., Եր., 2016, էջ 12:
13. Նույնը, էջ 19:
14. Հովհաննիսյան Ս., նշվ. աշխ., էջ 34:
15.https://yerkir.am/hy/article/2023/10/19/19741?fbclid=IwAR0FpJclDSsnctBXSi_eTK2DNBdfAvDdrwa8JqIYmk48ZpGsGAY3s_wYoJc(մուտք՝ 20.12. 2023 թ.):
16. https://www.youtube.com/watch?v=AvnTAKc25mE(մուտք՝ 20.12. 2023 թ.):
17. Հովհաննիսյան Ս., նշվ. աշխ., էջ 43:
18. Նույնը, էջ 46:
19.https://yerkir.am/hy/article/2023/10/08/19180?fbclid=IwAR3DeabQAYvdE1sMXjUIXickFEG9s69ZCAvvpQKOdwKCCeFAE895h94d5Y4(մուտք՝20.12. 2023 թ.):
20. Նույն տեղում:
21. Հովհաննիսյան Ս., նշվ. աշխ., էջ 80:
22. Նույնը., էջ 120:
23.https://yerkir.am/hy/article/2023/10/21/19855?fbclid=IwAR2CfIIWIeB71oC44M90-PaJzIr-uM-tYEtHib9NojTx8atzxMSX0emcl3E(մուտք՝ 20.12. 2023 թ.):
24. Նույն տեղում:

Ադանայի հայության կոտորածի արձագանքները «Հորիզոն» օրաթերթի էջերում

Արմեն Կարապետյան

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, հրապարակագիր, ՀՀ լրագրողների միության անդամ

Նախաբան. Քսաներորդ դարի սկիզբը հայ ժողովրդի համար նշանավորվեց նոր մարտահրավերներով և փորձություններով: Սուլթան Համիդը շուրջ երեսուն տարի շարունակ արևմտահայության հանդեպ կիրառեց ֆիզիկական բնաջնջման քաղաքականություն, որը պատմության մեջ մտավ «Զուլումի դարաշրջան» անունով:

1908 թ. ամռանը Թուրքիայում տեղի ունեցավ պետական հեղաշրջում: Գահընկեց անելով սուլթան Համիդին՝ իշխանության եկան երիտթուրքերը, որոնք դժբախտաբար ավելի դաժան ու անխնա եղան արևմտահայության հանդեպ, քան արյունարբու Համիդը: Հայ ժողովրդին ֆիզիկապես բնաջնջելու երիտթուրքական իշխանությունների գործելակերպի սկիզբը դրվեց Կիլիկիայում: 1909 թվականի գարնանը տագնապալից իրավիճակ էր տիրում Կիլիկիայի հայության շրջանում:

Թուրքերին մեծապես անհանգստացնում և գրգռում էր Ադանայի նահանգում հայերի տնտեսական բարվոք վիճակը: 20-րդ դարի սկզբին Ադանայի նահանգի բնակչության մեծ մասը՝ մոտ 400 հազարը, հայեր էին: Հենց նրանք էլ տնտեսության առաջատար ուժն էին:

1909 թ. ապրիլի մեկից Ադանա քաղաքի փողոցները ներկվեցին հայերի արյամբ: Հոգեբանական և ֆիզիկական առումով նախապես պատրաստված թուրք ու քուրդ խուժանը, ապա նրան միացած կանոնավոր զորքը հանկարծակի ներխուժում են հայկական թաղամասերը և սկսում են աննախադեպ թալանն ու կոտորածը: Երեք օր շարունակ Ադանայում շարունակվում էր հայ բնակչության սպանդը, որին զոհ գնաց շուրջ 18 հազար մարդ: Սակայն սրանով ամեն ինչ չավարտվեց: 1909 թ. ապրիլի 12-ին՝ առաջին կոտորածից 9 օր հետո, սկսվեց հայ ազգաբնակչության երկրորդ ջարդը, որն առավել սոսկալի բնույթ ուներ, քանզի հայերն արդեն զինաթափ էին եղել և դիմադրելու որևէ հնար չունեին: Ջարդեր ու կոտորածներ տեղի ունեցան Ադանայի վիլայեթի այլ քաղաքներում և գյուղերում: Ընդհանուր առմամբ՝ երեսուն հազարից ավելի զոհ տվեց Կիլիկիո հայությունը:

Ժամանակի հայկական մամուլը ականատեսի ու ժամանակակցի լիազորություններով արձանագրում և վավերագրում էր այն ամենը, ինչ տեղի էր ունենում դժբախտ ու անօգնական հայության հետ այդ դժնի ժամանակներում:

Կիլիկիահայության հանդեպ գործված նախճիրը «Հորիզոնի» գնահատմամբ. Թիֆլիսում լույս տեսնող «Հորիզոն» պարբերականը ուշադրությամբ և աչալրջությամբ հետևում էր Արևմտյան Հայաստանում ընթացող զարգացումներին: Թուրքիայում տեղի ունեցած երիտթուրքական հեղաշրջումը թեպետ մի պահ ոգևորել էր հայությանը, սակայն ժամանակը պիտի ցույց տար, որ այդ ոգևորությունն ու խանդավառությունը խաբուսիկ էր ու ժամանակավրեպ:

Այդքան գովերգված երիտթուրքական իշխանությունները կարճ ժամանակ անց՝ հաշված ամիսների ընթացքում, ցույց տվեցին իրենց իսկական դեմքն ու դիմագիծը:

Հայ քաղաքական ուժերն ու գործիչները, անշուշտ, շտապել էին դրական, ջերմ ու հուսադրող եզրահանգումներ կատարելիս: Այսպես՝ հայտնի ազգային ու հեղափոխական գործիչ Կ. Սասունին խանդավառ կերպով արտահայտվել էր, թե Սահմանադրության հռչակումը մեծ բարիք եղավ հայության համար և «Սահմանադրութեան շնորհիւ հայութիւնը սկսաւ կազդուրել»[16]:

Անտեղի ու անհիմն կերպով ոգևորություն էին ապրում կայսրության ազգային փոքրամասնությունները: Շատ արագ այդ ամենը հօդս էր ցնդելու, քանզի պետական քաղաքականության օրակարգում դրված էր Կիլիկիայի հայությանը պատժելու և նրան ոչնչացնելու հիմնախնդիրը: Ինչո՞ւ այս ամենը սկսվեց Կիլիկիայից: Այս հարցն ունի պատճառներ ու դրդապատճառներ, որոնց քննությունը, սակայն, դուրս է սույն հոդվածի շրջանակներից:

Մինչև ապրիլյան ջարդերը թուրք և քուրդ խուժանը, տեղական կառավարությունը զանազան դիվային սադրանքներով հող էին նախապատրաստում ընդհանուր հարձակման համար:

Հայ գործիչներից ոմանք զգում և հասկանում էին, որ թուրքերը ջարդի դժոխային պլաններ են կազմում: Դեռևս 1908 թ. դեկտեմբերի 17-ին Կ. Պոլսում լույս տեսնող «Բիւզանդիոն» թերթը հրապարակել էր Ադանայից ստացված մի թղթակցություն, որում նշված էր հետևյալը. «Բռնապետութեան օրով մեր վիլայէթը աւելի խաղաղ վիճակ մը ունէր, քան թէ հիմա: Եւ կարգ մը իրողութիւններ տակաւ մեզի սա համոզումը կազմել կու տան, թէ Սահմանադրութեան կատակերգութիւնը հետզհետէ ողբերգութեան արիւնոտ տեսարաններ ցուցադրելու պատրաստուած է»[17]:

Թուրքական կենտրոնական և տեղական իշխանու-

Ադանա 1909 թ.

թյունները ոչ միայն քաջատեղյակ էին Ադանայում և այլ վայրերում նախապատրաստվող եղեռնի մասին, այլև հենց իրենք էին ուղղորդում և քաջալերում խուժանի գործողությունները:

Նախապատրաստվող դավադրությունը պայթեց Կիլիկիահայության գլխին և առաջ բերեց աշխարհի բոլոր ծագերում ապրող հայության հոծ հատվածների բուռն բողոքն ու ցասումը:

Տարբեր երկրներում լույս տեսնող հայ պարբերականները արձագանքեցին տեղի ունեցող իրադարձություններին:

Այդ գործընթացը հատկապես ակտիվ էր արևելահայ պարբերականներում, որոնցում անաչառ տեղեկատվություն էր հաղորդվում, նաև սուր քննադատություն հնչում թուրքական հին և նոր իշխանությունների հասցեին:

Արևելահայ պարբերականների շարքում կարևոր դերակատարություն էր վերապահված նորաբաց «Հորիզոնին», որն իր ուշադրության և հոգատարության առանցքում էր պահում հայ իրականությանը վերաբերող կարևորագույն հարցերն ու հարցականները: Կիլիկիահայության սույն ողբերգությունը մեծապես արձագանք գտավ «Հորիզոնի» էջերում՝ դառնալով նրա ընթերցողներին հուզող արդիական ու հրատապ թեմա:

Պարբերականը 1909 թ. օգոստոսի 5-ի «Պարտք ունինք տալու» խմբագրականով անդրադառնում է Կիլիկիայում տեղի ունեցած ողբերգական իրադարձություններին: Նշվում է, որ լալահառաչ կոչերը, սրտազեղ աղերսները, շանթալից հրապարակախոսականները անհետևանք մնացին: Հայ և օտարազգի մամուլի ձայնը ապարդյուն անցավ, ինչպես օդի մեջ ղողանջող մի սին հնչյուն: Ադանան «իր 20-30 հազար հայ զոհերով կարծես չկարողացաւ, չենք ասում մարդկութեան, հայութեան գոնէ սիրտը կսկծացնել և նրան ի գործ հրաւիրել»[18]: Ըստ պարբերականի՝ Ադանայի վերքը «այն վէրքերից չէր, որոնք ռոպէապէս կամ օրերի ընթացքում բուժւում են մի կտրուկ անդամահատութեամբ: Նրա բուժումը տարիների գործ է և երկար ժամանակի ջանքեր է պահանջում մեզանից»[19]:

Կրկին շեշտադրվում է, որ յուրաքանչյուր հապաղումը նորանոր խոցեր է բաց անում մեր վերքի շուրջ, սակայն ուշացած օգնությունն էլ ընդունակ է նոր խոցերի, նոր դառնությունների առաջն առնել: Ուշագրավ է այն դիտարկումը, որ հազարավոր անմեղ զոհերի «կեանքի ու մահուան պատասխանատուութիւնն է ընկնում մեզ վրայ: Եթէ չենք կարող շէնացնել Ադանան ու նախկին փարթամութիւնը յիշեցնող վիճակի հասցնել, գոնէ պատճառ չդառնանք կենդանի մարդոց, նոր սերնդի գլխովին ոչնչացմանը»[20]: Ադանայի հայությանը օգնելու, սատարելու գործում թերթը կարևոր դերակատարություն է հատկացնում Կովկասի հայ գյուղացիությանը, որը ազգային յուրաքանչյուր աղետի ժամանակ առատաձեռնության լավագույն օրինակ է եղել:

Եվ նրա «կուտ-կուտ հաւաքած հացահատիկներից ստացած արդիւնքն աւելի խոշոր, աւելի թանգ կը տայ Ադանայի որբերին, քան բոլոր ընկերութիւնների միաձոյլ ջանքերով կազմուած «հսկայական երեկոյթը»[21]:

Հետաքրքիր է սույն համեմատությունը. «Միաւինայի աղէտաւորներին օգնելու համար համաշխարհային հանգանակութիւն բանալ արգելեց իտալական կառավարութիւնը՝ իր ազգային արժանապատուութեան վիրաւորանքը տեսնելով դրանում. «Աղէտաւորները մերն են, մեր ոյժերով կարող ենք և պարտաւոր ենք ամոքել ցաւը»:

Ցավոք, այդպես չէր Ադանայի ողբերգության դեպքում: Երիտթուրքերի կառավարությունը և սահմանադրական պառլամենտը՝ «աշխարհին յայտնի է արդէն նրանց վերաբերմունքը»[22]: Ուրեմն մնում է, որ արևելահայությունը և մնացած ողջ հայությունը հիմնավոր կերպով գիտակցի իր առաքելությունը և ունեցած ուժերով պատվար լինի ադանահայության առջև. «Մենք պարտք ունինք տալու, սրբազան, անյետաձգելի պարտք և պէտք է այդ պարտքի գիտակցութիւնը ևս: Մենք համոզված ենք, որ կովկասահայը ընդունակ է գիտակցելու այդ պարտքը: Եւ հաւատացած ենք, որ գաւառական ինտելիգենցիան հէնց այժմեանից հրապարակ կը նետէ իր ջանքերը՝ այդ գործի գլուխն անցնելու»[23]:

Սույն խմբագրականը փաստորեն ծրագրային կամ ուղենշային հոդվածի բնույթ և նշանակություն ուներ: Այն նախանշում էր Կովկասի հայության առջև ծառացած մարտահրավերներն ու անելիքները վիրավոր ու բզկտյալ Կիլիկիահայությանը ֆիզիկական և բարոյական առումով օգնություն հասցնելու և սատարելու գործում: Թերթը ճշմարտացի էր դիտարկում երիտթուրքական իշխանությունների ծայրահեղ հակահայ վերաբերմունքը:

Իհարկե, այդ պահին դեռևս շատ փաստեր հայտնի չէին այն մասին, որ Կիլիկիահայության ջարդերը տեղի էին ունեցել ոչ միայն երիտթուրքական իշխանությունների գիտությամբ, այլև նրանց ուղղակի և անուղղակի քաջալերանքով:

1909 թ. օգոստոսի 19-ին թերթը «Ճշմարտութեան ձայնը» հրապարակումով նորից անդրադարձ է կատարում Ադանայի ողբերգությանը՝ նշելով, որ համիդյան և նախորդ բռնակալ ռեժիմների օրոք արյունաքամ եղած և ամենաշատ զոհեր տված արևմտահայության գլխից անպակաս եղավ փորձության բաժակը նաև սահմանադրական օրերում:

Ըստ պարբերականի՝ համիդյան արյունկզակները

և սահմանադրական զինվորները համերաշխվեցին և առաջ բերեցին Ադանայի արյան բաղնիքը:

Սակայն այդ ծայրաստիճան դժբախտությունը կարծես բավական չէր: Ողբերգությունից անմիջապես հետո լսվեցին իշխող «երիտասարդ թուրքերի» կուսակցության և կառավարական շրջանակների ուղղորդումները, թե հայերն են մեղավոր կատարված խժդժությունների գործում և նրանց գրգռիչ ղեկավարների վրա է ընկնում սոսկումների ամբողջ պատասխանատվությունը: «Ահ, գայլի և գառան առակը. աշխարհի մեծամեծերի յաւիտենապէս անփոփոխ դատավճիռը իրենց զոհերի գլխին: Յանցանք, աներելի մեղք համարուեց տիրապետողների աչքում, որ դարերով հլու-հնազանդութեան վարժած հայը սարսափի ամենադժնդակ վայրկեանին իսկ ինքնապաշտպանութեան դիմեց»[24]:

Սակայն քննադատության սլաքն իր սուր ծայրով ուղղվում է ոչ միայն երիտթուրքական իշխանությունների հասցեին. «Հիշեցէք, ընթերցո՛ղ, այն արիւնոտ օրերը: Ձայներ, մեղադրական ձայներ լսեցին ադանացիների հասցէին նոյնիսկ մեր իրօք ստրկամիտների, բայց իրենց յառաջադէմ անւանողների կողմից»[25]:

Իսկ ի՞նչ էին ասում հայ «առաջադեմները»: Այն, որ չի կարելի մեղադրել թուրքական կառավարությանը, քանի որ «կրկին հայ խռովարարներ են տեղի տալ սուլթանական «քաջարի» զինուորներին զէնք ձեռք առնել և հայերին... արժանի պատիժը տալ: Եւ ի լրումն այդ բոլորի՝ խրատներ էին, որ տեղում էին «խոհեմների» կողմից «խռովարարների» հասցէին»[26]:

Թերթը հարց է բարձրացնում, թե այս անգամ էլ արդյո՞ք, բազմաթիվ համանման դեպքերի նման, պիտի լռեր ճշմարտության ձայնը, միթե «արիւնլայ եղած, անինչք և սգակիր դարձած ժողովուրդ չպիտի՞ լսէր գէթ ճշմարտութեան ձայնը, որ գար և հաստատէր իր անմեղութիւնը»[27]:

Երիտթուրք իշխանությունները սկզբնական շրջանում փորձել են լիովին խլացնել ճշմարտության ձայնը, և միակողմանի, իշխանամետ մարդկանցից բաղկացած քննիչ հանձնաժողով է գործուղվել ողբերգության վայր: Պարզ է, որ այդ հանձնաժողովն այնպիսի դիրքորոշում պետք է որդեգրեր, որ հանցավորները դատավորների դերում հանդես գային: Սակայն այս անգամ եվրոպական անկաշառ մամուլը ցնցում է հասարակական կարծիքը:

Դրվատական ջերմ խոսքեր են հնչում օսմանյան պառլամենտի հայազգի անդամ Պապիկյանի հասցեին, որը չերկնչելով ռեալ սպառնալիքներից՝ «սկսեց իր եզակի, իր սրբազան գործը: Նա պատռեց իշխանաւորների դիմակը և իսկական յանցաւորներին ի յայտ կանչեց: Եւ ահա իշխողների շրջանից հետզհետէ լսելի եղան մեղմ ձայներ, հայերի անպարտութիւնը խոստովանող խօսքեր»[28]:

Ի վերջո թուրքական կառավարության ընդունած որոշումը, թե «անհիմն է ճշմարտութեան անտեղեակ և անգիտակ եղողներու այն սխալ կարծիքը, թէ հայ ժողովուրդը քաղաքական մեսարար գաղափար մը կը սնուցանէ և կը հետապնդէ», թերթը համարում է մի շատ կարևոր խոստովանություն, և որ վերջապես երկար դարերից հետո «լսեց ճշմարտութեան ձայնը օսմանեան արիւնոտ հորիզոններում ճնշուած, արիւնլայ մի ժողովրդի հասցէին»[29]:

Թերթը 1909 թ. սեպտեմբերի 12-ին հայտնում էր (հենվելով պոլսահայ պարբերականների տեղեկությունների վրա), որ Ադանայի փոխկուսակալ Ջեմալ բեյը երկրի ներքին գործոց նախարարին տեղյակ է պահել որբանոցի հիմնադրման վերաբերյալ: Փոխկուսակալը նշում է, որ ինքն անձամբ է հանգանակություններ կազմակերպելու. «Իսլամ ժողովուրդը խոստացաւ այդ գործի համար կարևոր նպաստներ հայթայթել: Կը կարծեմ, թէ 30-40 հազար ոսկի պիտի հաւաքուի: Այս ձեռնարկը մեծ վստահութիւն ներշնչեց թէ՛ տեղացիներուն և թէ՛ օտարներուն»[30]: Պարբերականը 1909 թ. սեպտեմբերի 16-ին, հղում անելով օտարերկրյա օրգաններին, հայտնում է, որ թուրքական գործերում ներկայում ամենալուրջ հարցը հայոց պատրիարքի հրաժարականի հարցն է: Բարձր դռան և հայոց հոգևորականության միջև տարաձայնությունները դեռևս չեն վերացված: Թուրքական իշխանությունների ջանքերը՝ ուղղված այն նպատակին, որպեսզի ստիպեն հայոց պատրիարքին հետ վերցնել իր հրաժարականի խնդիրը, անհաջողության են մատնվել: Այս առումով ուշագրավ է հետևյալ դիտարկումը. «Պատժելով Ադանայի կոտորածների յանցաւոր մահմեդականներին՝ երիտասարդ թիւրքերն առաջին անգամ կորցրին մահմեդականների համակրանքը, որովհետև օրէնքի առաջ իրաւահաւասարութեան սկզբունքով վարվեցին: Պատրիարքը պէտք է բաւականանայ այդպիսի յաջողութիւնից և լարերը չափազանց շատ չձգէ»[31]:

1909 թ. դեկտեմբերի 19-ին «Անժամանակ պայքարը» վերնագրված խմբագրականում վերլուծության է տրված Թուրքիայում ստեղծված ներքաղաքական իրավիճակը, որն ի վերջո հանգեցրել է Ադանայի ողբերգությանը. «Սահմանադրական Թուրքիան էլ, դժբախտաբար, իր կրծքին սեղմեց ազգայնական պայքարը և հետզհետէ աճող եռանդ է գործ դնում այդ ներքին հուրը արծարծելու համար: Եւ պայքարի բովանդակութիւնը, գոնէ առայժմ, մնում է նոյնը, ինչ որ էր հին Թուրքիայում՝ իսլամ և ոչ իսլամ»[32]:

Անշուշտ, ճշմարիտ և արդիական էր սույն դիտարկումը:

Ասել կուզի, որ օսմանների երկրում բան չի փոխվել, որ միմյանց դեմ կանգնած են հին, հանրածանոթ ախոյանները, որոնք այնքան արյուն են թափել, այնքան ավերանքներ են պատճառել: Եվ ըստ պարբերականի. «Նրանք, ինչպես երևում է, դեռ չեն կարող միանալ, հաշտուել, ապրել կողք կողքի, փոխադարձաբար իրար ապրելու հնարաւորութիւն տալ»[33]:

«Դարձեալ ազգայնական պայքարը» հոդվածում խիստ քննադատություն է հնչում Թուրքիայի ղեկավարող կուսակցության հասցեին, որը մինչև ոսկորների ծուծը տոգորված է ազգային անհանդուրժողությամբ, որն էլ հանգեցնում է Օսմանյան կայսրության տարածքում նորանոր արյունոտ ողբերգությունների[34]:

1910 թ. հունվարի 3-ին թերթը կրկին անդրադարձ է կատարում Ադանայի ողբերգությանը՝ կապված մեծ վեզիր Հիլմի փաշայի հրաժարականի հետ:

Ադանայի կոտորածների առիթով թուրքական զինվորական ատյանը մահվան վճիռ էր կայացրել նաև մի քանի անմեղ հայերի հանդեպ: Դուրյան պատրիարքը բողոք էր ներկայացրել՝ պնդելով, թե այդ հայերն բոլորովին անմեղ են: Հիլմի փաշան այդ կապակցությամբ նոր քննություն է նշանակում, որն ապացուցում է հայոց անմեղությունը: Ուստի նրանք ազատվում են մահվան պատժից, իսկ քսանհինգ թուրք հանցավոր-

Ուրբաթ 7 Օգոստոսի 1909

ՀՈՐԻԶՈՆ

ԱՌԱՆՁԻՆ ԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅՈՒՍԻՍ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅՈՒՍԻՍ

Հ ա ղ ա բ ե

Ցանկացածներ ձերբակալած

ներ կախաղան են հանվում: Ահա սույն հանգամանքն էր, որ անբավականություն էր պատճառել ժեռն թուրքերին: Նրանք «վտանգաւոր համարեցին հարցի այս դրութեան մէջ հրապարակական վիճաբանութիւնների առարկայ դարձնել (պարլամենտում) հայերի այս արդարացումը: Եւ հետևանքը. պարլամենտից դուրս հարկադրել մեծ վեզիրին, որ հեռանայ»[35]:

Թերթն արձանագրում է, որ բռնակալությունը վերացնելու համար բավական չէր Սահմանադրության հռչակումը: Ինչ օգուտ, երբ օսմանյան «մէբուսների մէջքի ետևը նստած է մի ուրիշ, ամենակարող բռնակալութիւն»[36]:

1910 թ. հունվարի 14-ին «Բողոք-հրաժարական» ծավալուն հրապարակումը նվիրված էր Դուրյան պատրիարքի հրաժարականի պատճառների քննությանը, որը սկիզբ էր առել Ադանայի ջարդերից անմիջապես հետո. «Ամիսներ առաջ, երբ Դուրյանը տալիս էր իր հրաժարականը, հրապարակի վրայ մերկապարանոց ճշմարտութիւնն էր, որ Ադանայի կոտորածների գլխավոր ղեկավարներից շատերը պատասխանատուութեան չեն կանչուած: Դրա փոխարէն, թիւրք արդարադատութիւնը, իբր թէ անկողմնապահութեան ապացոյց տալու համար, մահւան էր դատապարտել մի քանի անմեղ հայերի: Այդ անարդարութեան դէմ միայն պատրիարքը կարող էր բողոքել: Եւ նա բողոքեց: Բայց «փոլիթիքան» այնքան արմատացել էր արդարադատութեան մէջ, որ պատրիարքը ստիպած եղաւ հետևողական լինել»[37]:

Ճշմարտացիորեն է ասված, որ պատրիարքը չբողոքելու դեպքում պիտի հաշտվեր իր հեղինակության ամբողջական կորստի հետ: Թուրքական կառավարությունն էլ իրավիճակը լիցքաթափելու համար արտաքուստ անտարբերությամբ վերաբերվեց պատրիարքի հրաժարականին, ապա մի քանի մասնակի զիջումներ կատարեց: Սակայն պատրիարքը պահանջում էր առանց նկատառումների արդարադատություն՝ ամբողջ ծավալով:

Եվ եթե մի սահմանադրական երկրում «մի պատրիարք չհամարձակուէր այդքան տարրական բան պահանջել, այն ժամանակ միայն խղճալ կարելի էր այդ Սահմանադրութիւնն էլ, այդ ազգն էլ, որ ջարդուել էր ոչխարների պէս, այդ պատրիարքն էլ»[38]:

1910 թ. հունվարի 21-ին թերթի 3-րդ և 4-րդ էջերում զետեղվել էր խորունկ մի թղթակցություն՝ հենց Ադանայից ուղարկված՝ «Զուլումի երկիրը» խորագրով: Հոգեզմայլ թախիծով պարուրված թղթակցությունը հիշեցնում էր, որ թեև 9 երկար ամիսներ են անցել այդ սոսկալի աղետից, բայց ժամանակը չկարողացավ սրբել որբերի և որբուհիների արցունքները, չկարողացավ մխիթարել այրիներին ու աղետյալներին: Ադանայի փողոցներում, եկեղեցու բակում «կը հանդիպիս դէմքերու, որոնց ցաւը, վիշտը հարցնելու պէտք չկայ, իրենց տժգոյն դիմագիծը և մարած աչքերը ամեն բան կը պատմեն քեզ: Ատոնք Ադանայի հայութեան կենդանի զոհերն են»[39]:

Թղթակցության մեջ ընդգծվում էր, որ ներկա պահին հազարավորներ մի պատառ հացի կարոտ են քաշում, վերմակի և անկողնու պետք ունեն բազմաթիվ ընտանիքներ: Ինը ամիս առաջ «ատանացիս երջանիկ էր, ունէր ամեն բան, ինքը նպաստներ կուտար ուրիշների, ինքը ուրիշները կը միխիթարէր: Ինչ հակապատկեր: Սահմանադրութեան մէջ՝ բռնապետութիւն: Ազատութեան մէջ՝ ջարդ»[40]:

Ուշադիր հետևելով Ադանայի ողբերգության շուրջ ընթացող իրադարձություններին՝ 1910 թ. հունվարի 30-ին պարբերականը գրում է, որ Թուրքիայի նոր վեզիրը՝ Հագգը փաշան, նույնքան ազգայնական տրամադրություններ է արծարծում, որքան համիդեական պաշտոնյաները: Եվ ժեռն-թուրքերի օրոք արդարադատությունը մնացել է նույն մակարդակին, ինչ որ առաջներում էր և թերևս դա արդարադատություն չէ, այլ լպիրշ մի հեգնանք դիակների կույտի վրա, վատ տեսակի մի կատակերգություն՝ քաղաքական մի խաղ հաջողացնելու համար: Ահա, թե ինչպես: Ադանայի ջարդերի մեջ ճիվաղային դեր կատարողներից մեկը կառավարական մի պաշտոնյա էր, մի մյութեսարիֆ՝ Ասաֆ անունով, որը ղեկավարում էր կատաղած ամբոխին և ամբողջովին թաթախված էր անմեղների արյունով: Այդ հրեշին սկզբում նույնիսկ դատի չենթարկեցին և միայն պատրիարքի բողոքից հետո զինվորական դատարանը ձեռք առավ նրա գործը:

Ասաֆ անունով այդ հրեշը փախչում է երկրից, իսկ դատարանը նորից քննելով նրա գործը՝ ընդամենը դատապարտում չորս տարվա պաշտոնազրկության. «Չորս տարուայ ընթացքում արիւնարբու գազանը իրաւունք չունի կառավարական պաշտօն վարելու: Այսքանը միայն: Հագգը փաշան սա համարում է արդարադատութիւն, սա համարում է լիուլի հատուցում, որին ամիսներից ի վեր սպասում են Ադանայի զոհերը»[41]:

Թերթը եզրահանգում է, որ Թուրքիայում 1908 թ. դեպքերից հետո տեղի է ունեցել **լոկ մարդկանց փոփոխություն՝ ոչ քաղաքական կարգերի, ուրիշ ոչինչ:**

Նույն այդ համարում «Ադանայի ջարդերը» թերթոնի ներքո ընդգծվում է, որ կիլիկիահայության կոտորածները գուցե եզակի լինեն ու մնան բոլոր ժամանակների պատմության մեջ: Ինքնաքննադատական կարգով ասվում է, որ շուտով լրանալու է այդ ջարդերի տարելիցը, բայց դժբախտաբար ոչ մամուլը, «թէ՛ Թուրքիայում և թէ՛ այստէղ, ոչ հասարակական հիմնարկութիւնները, և ոչ մենք չկատարեցինք մեր

պարտքը: Մեզ դեռևս յայտնի չէ կարիքի չափը. թշառների դրութիւնը, թաղածների քանակը, ոչ ոք չէ զգում այլևս պարտականութիւն, չէ հետաքրքրում զոհերով. արխիւների փոշիների և պատմութեան սեփականութիւն ենք դարձրել այդ բոլորը»[42]:

Թերթում մերթ ընդ մերթ տեղեկություններ էին հաղորդվում Ադանայի կարոտյալների օգնության գումարների հետ կապված, և խմբագրությունը յուրատեսակ հաշվետվություն էր տալիս հանրությանը:

Իսկ «Ադանայի ջարդերը» խորագրի ներքո շարունակվում էին ներկայացնել ջարդերի պատճառները. «Ադանայի ջարդերը շարունակութիւն են այն մեծ տրագեդիայի, որ դարերի ընթացքում ժառանգաբար անցնելով պարսիկներից, արաբներից, սելջուկներից ու թաթարներից՝ վերջապէս բաժին է հասել օսմանցիներին: Ձարդում են, որովհետև թոյլ և անզօր ենք մենք»[43]:

1910 թ. փետրվարի 5-ին «Շշուկները» խորագրով խմբագրականում տագնապով ահազանգվում է, որ Թուրքիայի ասիական խորքերում պատրաստվում է ինչ-որ խավար շարժում, և նորից գրգռում են անգրագետ ամբոխի վայրենի կրքերը. «Դեռ Ադանայի սարսափների տակ ճմլած մի ժողովուրդ կարող է ասել, թէ փոթորիկը իր գլխին չէ հաւաքւում»[44]: Ըստ թերթի դիտարկման՝ կառավարության վրա է ընկնում պատասխանատվությունը, և նա պետք է սանձի խուժանի գործողությունները. «Այսպէս, ուրեմն, գլխաւոր դերակատարը կառավարութիւնն է: Եւ մենք նրան էլ նկատի առնենք: Ադանայի կոտորածը տեղի ունեցաւ այն ժամանակ, երբ դեռ Աբդիլ Համիդ կար, և սահմանադրական կառավարութեան համար մեծ դժարութիւն չէր իր օձիքն ազատել՝ մատնանիշ անելով Ելդըզի հրեշին»[45]: «Հորիզոնի» 1910 թվականի մի շարք համարներում (թիվ 22, 24, 27, 33, 39, 40, 42, 45, 47, 52, 54, 55, 56, 64, 66, 72) հաջորդաբար ներկայացված էր Ադանայի ողբերգության ծագումնաբանությունն ու ընթացքը, կոտորածի մեխանիզմներն ու մեթոդները, թուրք մասսայի և պաշտոնեության մասնակցության ձևերն ու պատասխանատվության չափերը, հայ բնակչության նյութական և ֆիզիկական կորուստների ընդհանուր պատկերը և այլն:

Թերթի 80-րդ և 82-րդ համարներում տպագրված գրախոսականը ներկայացնում է վերջերս Փարիզում Անդոստիդեսի հեղինակությամբ ֆրանսերենով լույս տեսած «Հայերը և երիտասարդ թուրքերը» արժեքավոր աշխատության վերլուծություն-քննախոսությունը, որում տրված էր իրական ճշմարտությունը հայ-թուրքական հարաբերությունների ողջ ընթացքի վերաբերյալ: Անդրադառնալով կիլիկիահայության կոտորածների պատասխանատուների հարցին՝ գրաբար նշվում է, որ ամենևին պատահական չէր, որ թե՛ կառավարության աչքում, թե՛ պառլամենտում, թե՛ զինվորական ատյանի առջև, թե՛ մամուլի էջերում հայը ճանաչվեց վերոնշյալի մեղավոր, և իսկական հեղինակներն ու դրդիչները անպատիժ մնացին: «Երիտասարդ թիւրքերն էլ հայերին ապստամբ յայտարարեցին, դրանով ամեն ինչ բացատրեցին, իսկ թիւրքերին միանգամայն անմեղ գառնուկների կերպարանք տալու համար նրանք ժխտեցին նոյնիսկ մահմեդական մոլեռանդութեան գոյութիւնը և նրա արտայայտելը գազանութիւնների ժամանակ»[46]:

Հետագայում ևս առիթի դեպքում թերթն արձագանքում էր Ադանայի հայության ողջակիզման հետ կապված հարցերի և հիմնահարցերի լուսաբանմանը, հանդես գալիս համոզմունքի վերածված սեփական դիտարկումներով և բացահայտումներով:

Վերջաբան. Այսպիսով՝ «Հորիզոն» պարբերականը ևս պատռեց թուրքական իշխանությունների դիմակն ու քողը՝ ակներև փաստերով և համոզիչ տրամաբանությամբ ցույց տալով, որ Օսմանյան Թուրքիայում որևէ բան չի փոխվել, տեղական ու կենտրոնական կառավարական ոլորտում տեր ու տնօրեն են նույն հայատյաց բարբարոսներն ու մարդասպանները, որոնք գաղտնի, թե բացահայտ խրախուսել էին Ադանայի հայության ջարդերի կազմակերպիչներին և իրագործողներին, ապա նրանց առել իրենց հովանավորության ու պաշտպանության ներքո: ■

Օգտագործված աղբյուրներ

1. Սասունի Կ., Քուրդ ազգային շարժումները և հայ-քրդական հարաբերութիւնները, Պէյրութ, 1969 թ., էջ 194:
2. Սիմոնյան Հր., Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ., ապրիլ), Եր., 2009 թ., էջ 37:
3. «Հորիզոն», 1909 թ., թիվ 3:
4. Նույն տեղում:
5. Նույն տեղում:
6. Նույն տեղում:
7. Նույն տեղում:
8. Նույն տեղում:
9. «Հորիզոն», 1909 թ., թիվ 14:
10. Նույն տեղում:
11. Նույն տեղում:
12. Նույն տեղում:
13. Նույն տեղում:
14. Նույն տեղում:
15. «Հորիզոն», 1909 թ., թիվ 34:
16. «Հորիզոն», 1909 թ., թիվ 36:
17. «Հորիզոն», 1909 թ., թիվ 48:
18. Նույն տեղում:
19. «Հորիզոն», 1909 թ., թիվ 50:
20. «Հորիզոն», 1910 թ., թիվ 2:
21. Նույն տեղում:
22. «Հորիզոն», 1910 թ., թիվ 8:
23. Նույն տեղում:
24. «Հորիզոն», 1910 թ., թիվ 14:
25. Նույն տեղում:
26. «Հորիզոն», 1910 թ., թիվ 22:
27. Նույն տեղում:
28. «Հորիզոն», 1910 թ., թիվ 24:
29. «Հորիզոն», 1910 թ., թիվ 27:
30. Նույն տեղում:
31. «Հորիզոն», 1910 թ., թիվ 82:

Տիգրան Դևոյանցը Առաջին Հանրապետության անվտանգության ապահովման դիրքերում: Պայքար ադրբեջանա-թուրքական նկրտումների դեմ (մաս 1)

Վանիկ Հրանտի Վիրաբյան

Պատմ. գիտ. դոկտոր, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր

Անդրկովկասյան հանրապետությունների անկախության շրջանում հետախույզ Տ. Դևոյանցին բազում փորձություններ էին սպասում: Թիֆլիսում նա այցելում է Հայաստանի Հանրապետության զինվորական ներկայացուցիչ գեներալ Հովսեփ Քիշմիշյանին, որը հայտնում է, թե շուտով պատերազմ են սկսելու վրացիների հետ, ուստի անհրաժեշտ է տեղեկություններ ձեռք բերել վրացական զորքերի դասավորության և զորահավաքի, ինչպես նաև վրացական, ժողովրդական գվարդիայի քանակի և գործողությունների պլանի մասին: Դևոյանցը արագ գործի է անցնում և օգտագործելով իր բոլոր կապերը Վրաստանի մայրաքաղաքում՝ շտապ ձեռք է բերում անհրաժեշտ տեղեկատվություն, որն էլ Քիշմիշյանը հույժ գաղտնի ծածկագրով ուղարկում է Երևան՝ ակնկալելով, որ այն օգտակար կլինի վրաց-հայկական բախումների ժամանակ[1]:

Այնուհետև Տիգրան Դևոյանցը հայտնվում է Հայաստանի առաջին հանրապետության կայացման գործընթացներում և արդեն որպես փորձառու հետախույզ՝ մասնակցում է հայկական նորաստեղծ պետության հետախուզական ծառայության ձևավորման բարդ, հակասական և չափազանց դժվարին գործընթացներին՝ դառնալով նորաստեղծ ՀՀ զինվորական նախարարության գլխավոր շտաբի հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի պետերից մեկը և ծավալում է օգտաշատ գործունեություն ի փառս հայրենիքի, հանուն սեփական երկրի բարօրության:

Հետաքրքիր է նշել, որ մինչև իր հայտնի ուղևորությունը Արևմտահայաստանի քաղաքները և Կ. Պոլիս, Տիգրան Դևոյանցը շատ ծանր փորձության առաջ էր կանգնել Վրաստանում: Տ. Դևոյանցը հետախուզական ծառայության հայտնի դեմքերից էր, կադրային սպա, որը եղել էր կովկասյան բանակի սպայակույտի հակահետախուզական բաժնի կարևոր սպաներից, և բնականաբար վրացիներն այդ հանգամանքն օգտագործելով, ինչպես նաև որոշ հին գործեր առիթ դարձնելով՝ էլ ավելի են շիկացնում իրավիճակը վերջինիս շուրջը: 1918 թ. մայիսյան անկախացման գործընթացների օրերին Վրաստանի Հանրապետության տարածքով գնացքով անցնելու ժամանակ Սամտրեդիա կայարանում հայ հետախույզը անակնկալ ձերբակալվում է վրաց միլիցիայի և հատուկ ծառայությունների կողմից՝ վրացական բանակի մատակարարման ճյուղի պետի մատնությամբ, որը ժամանակին Տ. Դևոյանցին հատուկ հրամանով՝ որպես տաճկական լրտեսի, մի շարք այլ անձանց հետ ձերբակալել էր Երզնկայում: Բանտ փոխադրվելու ճանապարհին Տ. Դևոյանցը հասցնում է ոչնչացնել մի շարք կարևոր գաղտնի փաստաթղթեր, որոնք կարող էին դիվանագիտական բարդությունների առաջ կանգնեցնել ՀՀ ռազմաքաղաքական ղեկավար շրջանակներին: Տ. Դևոյանցի ձերբակալության օրը «վրաց հեռագրական գործակալությունը բաց էր թողել մի հեռագիր, որով հաղորդում էր, թէ կապիտան Տիգրան Դևոյեանցը՝ կովկասեան բանակի սպայակոյտի հակահետախուզական բաժանմունքի նախկին պետը, ձերբակալուել է Սամտրեդի կայարանի մէջ, մեղադրւում է լրտեսութեան մէջ և պէտք է յանձնուի զինուորական դատարանին»[2]:

Նրան տանում են Մետեխի բանտ, որը լեցուն էր հայերով: Այնտեղ էին գտնվում նաև մահվան դատապարտված հետախույզ, գնդապետ Շմագայլովը և Միխոն (Միխայիլ Քուչարյանց, որն իբր թե «Հայ Յեղափոխական Դաշնակցության անդամ էր, հետևաբար և ըստ վրացիների՝ ահաբեկիչ»)[3]: Նրանք անգլիացիների հրահանգով պայթեցրել էին Մցխեթի բանտի մերձակա Ջեգվիի կամուրջը խոչընդոտելու համար գերմանացիների ակնկալվող մուտքը Թիֆլիս, որի համար ձերբակալվել էին վրաց իշխանությունների կողմից և 1918 թ. դեկտեմբերին Վրաստանի գերագույն դատարանի կողմից դատապարտվել մահապատժի, որն այնուհետև փոխարինվեց 12 տարվա տաժանակիր աշխատանքով[4]: Շուտով, սակայն, վերջիններս Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի կառավարությունների և հատուկ ծառայությունների ջանքերով ազատվում են բանտից, իսկ Տիգրան Դևոյանցի հարցն ավելի է լրջանում: Նրա մասին շուտով տեղեկացվում է Թիֆլիսում գտնվող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական հավատարմատար Լևոն Եվանգուլյանին, որը Տ. Դևոյանցին Օրթաճալայի բանտ տեղափոխելուց հետո որոշ ջանքեր է գործա-

Տիգրան Դևոյանց

դրում, որպեսզի բանտում բծավոր տիֆով վարակված հիվանդին այցելեն հայ բժիշկներ, այդ մասին տեղեկացնում է Հայաստանի իշխանություններին, զինվորական ու արտաքին գործերի նախարարներին, ինչպես նաև Տ. Դևոյանցի հարազատներին ու մտերիմներին, որոնք տենդագին քայլերի են դիմում՝ բանտից անհապաղ ազատելու նրան և տեղափոխելու Հայաստան[5]: Այսպես՝ ՀՀ զինվորական նախարարին հասցեագրված հայկական դիվիզիայի պետ, գեներալ-մայոր Մ. Սիլիկյանի 1919 թ. մարտի 1-ի զեկուցագրից (№ 26/19) տեղեկանում ենք, որ Թիֆլիսում վրացական հակահետախուզության կողմից ձերբակալվել է հայկական զորամասերում ծառայող և տվյալ պահին կամավորական բանակում ծառայության մեջ գտնվող Տ. Դևոյանցը՝ կարևոր փաստաթղթերով հանդերձ, հանձնվել է դատի և դատապարտվել գնդակահարության: Մ. Սիլիկյանը հայտնում էր, որ անգլիացիները բողոքել են դատարանի այդ որոշման դեմ, քանզի հայկական իշխանությունները Դևոյանցի գործի կապակցությամբ դիմել էին վերջիններիս՝ կարծելով, որ նրանք կարող են ազդել վրացիների վրա և Տ. Դևոյանցին ազատել բանտից: Դատարանի որոշումը չի կիրառվել Տ. Դևոյանցի հիվանդության պատճառով, քանի որ բանտում գտնվելու ժամանակ Տ. Դևոյանցը հիվանդացել է բծավոր տիֆով, ինչի մասին ինքը՝ Տ. Դևոյանցը, վկայում է իր «Կեանքիս դրուագներից» հուշագրությունում՝ նշելով նաև բանտախցում եղած ժամանակ վրացական իշխանությունների բիրտ վերաբերմունքի մասին: Սիլիկյանը ցանկանում էր անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել Դևոյանցի վիճակը թեթևացնելու համար[6]: Նշված զեկուցագրի հիման վրա մարտի 5-ին զինվորական նախարար գեներալ-մայոր Հ. Հախվերդյանի և շտաբի պետ Մ. Ջինկևիչի ստորագրությամբ գրություն է ուղարկվում արտաքին գործերի նախարարին՝ խնդրելով հարաբերություններ հաստատել անգլիացիների հետ[7] տվյալ հարցին հանգուցալուծ գտնելու նպատակով: Այդ ընթացքում՝ 1919 թ. մարտի 7-ին, Հայաստանի արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանը Վրաստանի արտգործնախարար Եվգենի Գեգեչկորիին ուղղված հեռագրում խնդրում է կասեցնել դատավճիռը[8]: Սակայն վրացիները մտադիր չէին այդքան հեշտ ընդառաջել հայկական կողմին: Այսպես՝ ՀՀ արտգործնախարարին հասցեագրած 1919 թ. մարտի 25-ի հեռագրում (№ 1661) ի պատասխան № 485 դիմումագրի՝ Վրաստանի արտաքին գործերի նախարարի օգնական Կ. Բ. Սաբախտարաշվիլին հայտնում էր, որ Դևոյանցը մեղադրվում է ռազմական լրտեսության մեջ, հետաքննությունը չի ավարտվել, և գործը պետք է լսվի դատարանի նիստում[9]: Վերջիվերջո, ինչպես պարզվում է հենց Տիգրան Դևոյանցի հուշերից, նա փախչում է Թիֆլիսի Մետեխի բանտից[10]: Մինչ այդ նա մի ընդարձակ նամակով դիմում է ՀՀ դիվանագիտական հավատարմատար Լ. Եվանգուլյանին՝ տեղյակ պահելով պատերազմական ատյանի զինվորական քննիչ Կեկելիձեի հարցաքննությունների մասին և խնդրելով, որ օգնի իր փախուստը կազմակերպելուն՝ այդ նպատակի համար խնդրելով 700 ռուբլի: Վերջինս մերժում է՝ Դևոյանցին համարելով խելագար, երևի թե վախենալով հայ հետախույզի այդ հանդուգն նպատակադրումից և թերևս չհավատալով նման ծրագրի հաջողությանը: Այս առումով ուշագրավ է Եվանգուլյանին ուղղված շտաբս-կապիտան Տ. Դևոյանցի 1919 թ. մարտի 23-ի Մետեխի բանտ-ամրոցից գրված նամակը. «Արդեն սկսվում է իմ ձերբակալության չորրորդ ամիսը և մեր միսիան ոչ մի քայլ չի կատարել վրացական կառավարության առաջ՝ իրեն կալանքից ազատելու համար: Իմ գործը շատ լուրջ է և անձնական բնույթ չի կրում, թող միսիան որևիցե մեկին ուղարկի տեսակցության, այդժամ ամեն ինչ կբացատրեմ, գրել չեմ համարձակվում, կարող են բռնել: Այդ իսկ պատճառով ցանկալի կլիներ մինչև դատը հասնել գործի քննության կարճմանը: Լինելով Երևանի ծնունդ և մեղադրվելով հոգուտ կամավորական բանակի «լրտեսության» մեջ» և որպես Անդրանիկի անձնական համհարզ՝ կապեր եմ պահպանել Ղարաբաղի հետ հայ-վրացական պատերազմի ժամանակ (ես ձերբակալվել եմ անցած տարվա դեկտեմբերի 22-ին): Առաջ ընկնելով՝ ասեմ, որ մեղադրանքի այդ հիմքերը կարող են հոյակապ օգտագործվել միսիայի կողմից իմ ազատումը պաշտպանելու համար՝ իմ ձերբակալությունը դիտարկելով որպես հայ-վրացական բախման արդյունք: Մյուս կողմից՝ միանգամայն անհրաժեշտ է միաժամանակ մշտական կապ պահպանել ամերիկյան հյուպատոս Սմիթի հետ, որը համոզված է, որ ինձ համար շատ բան կանի: Վերջին կապն ինձ աջակցելու համար դժվար կլինի, քանի որ կարող է վարչակազմի ձեռքն ընկնել որևիցե նամակ, և դրանով գործերը կարող են վատթարանալ:

Իմ գործի քննությունն ավարտվում է, սակայն ես ամբողջ ժամանակ ցույց եմ տալիս նոր վկաների և դրանով ձգձգում գործի քննությունը դատարանում: Իսկ բանտում ամեն մի ավելորդ օր նստելը ուժեղ կերպով ազդել է իմ առողջության վրա (հիվանդ եմ տուբերկուլյոզով և խխմումով արյուն եմ թքում): Եթե ինձ հայտնի լինի, որ ազատվելու հույսեր չկան, այդժամ ծայրահեղ դեպքում ես ինքս կմտածեմ իմ մասին...

Պատասխանի սպասելով՝ ես մնում եմ խորին հարգանքով հավատարմատարի նկատմամբ...»[11]:

Սակայն վերջիվերջո նա էլ է աջակցում Տ. Դևոյանցին նրա փախուստի իրագործման ժամանակ: Վրացական իշխանությունները, անշուշտ, հենվելով իրենց հայտնի որոշ փաստերի վրա, չէին հավատում Տ. Դևոյանցի հավաստիացումներին, որ ինքն անմեղ է և Վրաստանի նկատմամբ վտանգավոր ձեռնարկումներ չունի, ինչն ավելի էր բարդացնում հետախույզի վիճակը և դրդում տենդագին որոնումների փախուստի ուղղությամբ: Ի վերջո նրա փախուստի կազմակերպիչներից է դառնում Տ. Դևոյանցի սիրեցյալներից մեկը՝ Ասյան: Օգտագործելով կեղծ փաստաթղթեր, ինչպես նաև կաշառելով բանտի պաշտոնյաներին ու վերակացուներին և վերջիններիս զգոնությունը բթացնելու համար նրանց հավաստիացնելով ինչ-ինչ հարցերում վրացական իշխանություններին օգնելու իր պատրաստակամության մասին՝ Տ. Դևոյանցը ժամանակ է շահում, շտապ իրականացնում է փախուստը և Ասիայի հետ հայտնվում Երևան ուղևորվող գնացքում: Այդ մասին նա շատ տպավորիչ գրում է իր հուշերում. «Ինձ տուին քրքրուած բանուորի զգեստ և կէս ժամ վերջը այնպէս կերպարանափոխեցին, որ ինձ ճանաչել անկարելի էր: Անուսս էր Արամ Ստեփանեան, երևանցի, արհեստով՝ հիւսն: Բոլոր վիզաները պատրաստ էին Երևան մեկնելու համար:

Պատռտուած զգեստով, կէպին գլուխս անցկացրած, գոյնզգոյն մեծ թաշկինակին մէջ կապոց շինած, դուրսը ցցուած հացով, թերս անցկացրած և միւս ձեռքիս մէջ մի սղոց առած՝ Հալաբարից լուսաբացին շարժուեցինք Նավթլուղ: Թիֆլիս հասանք ճիշդ Երեւան մեկնող գնացքի գնալու ժամանակ:... Վրաստանում մէր դիւանագիտական ներկայացուցիչը՝ Եւանգուլեանը, իրազեկ էր անցուդարձին: Առաջին կայարանից նրան ուղարկուեց պայմանաւորուած հեռագիրը: Ինձ ուղեկցողները՝ բացի Ասիայից, վերադարձան Թիֆլիս...:

Եւանգուլեանը ծածկագիր հեռագրել էր Երևան, և Հայաստանի հեռագրական գործակալութիւնը իմ՝ Երևան հասնելու միջոցին արդէն բաց էր թողել հետևեալ հեռագիրը. «Կովկասեան բանակի սպայակոյտի հակահետախուզական բաժանմունքի նախկին պետ, կապիտան Տիգրան Դևոյեանցը, որը ձերբակալված էր վրացիների կողմից և մեղադրւում էր լրտեսութեան մէջ, յաջող կերպով փախչելով Մեղեխի բանտից՝ հասաւ Երևան և նշանակուեց Հայաստանի բանակի հետախուզական և հակահետախուզական բաժնի պետի պաշտօնին»:

Այս հեռագիրը, երբ ստացուել էր Վրաստանում, սկսուել էր քննութիւն: Քննիչը, դատախազը, պատերազմական նախարարութեան ներկայացուցիչները իսկոյն ևեթ գնացել էին բանտ և քննել էին բոլոր թղթերը: Հետևանքը եղած էր այն, որ հեռացրել էին պաշտօնից բանտապետին, քննիչին ու դատախազին:

Այդ առթիւ Վրաստանի պաշտօնական թերթի՝ «Գրուզիա»-ի մէջ լոյս էր տեսել առաջնորդող մի յօդուած՝ «Կեցցէ Դևոյեանց» վերնագրով: Յօդուածագիրը յարձակում էր գործադրում բարձր իշխանութեանց վրայ, որ նրանք չէին կարողացել պահել մի կարևոր բանտարկեալ: Այնքան խիստ էր գրուած այդ առաջնորդողը, որ լոյս տեսնելուց յետոյ ներքին գործոց նախարարութիւնը հրամայել էր հաւաքել թերթի թիւերը կիոսկներից:

Երևան հասնելուն պէս ինձ կանչեց իր մօտ մեր պատերազմական նախարար զօր. Արարատեանը, որին ներկայացայ ալիւրի տոպրակից կարած բլուզով: Այնտեղ էր նաև զօր. Կ.՝ Հայաստանի զինուորական կցորդը Վրաստանում: Նա հանեց իր վրայի սուրը, համբուրեց ինձ և յանձնեց իբր նուէր»[12]: Հիրավի, ռազմահայրենասիրական, դաստիարակչական լիցք պարունակող մի ուշագրավ իրադարձություն, որ կարող է զարդարել ցանկացած ժողովրդի պատմությունը[13]:

Արձանագրենք նաև, որ Առաջին աշխարհամարտի տարիներին Կովկասյան ռազմաճակատում ռուսական բանակի 4-րդ կորպուսի հետախուզական բաժանմունքի կազմում է ծառայել հայտնի հետախույզ, ՀՅԴ անդամ Տիգրան Դևոյանցը, սակայն որի նկատմամբ 1920 թ. սեպտեմբերին սկսված ՀՅ Դաշնակցության 9-րդ ընդհանուր ժողովի դատական ատյանի կողմից հարուցվեց դատական քննություն: Դաշնակցության ընդհանուր ժողովի դատաքննական ատյանում հոգուտ Տիգրան Դևոյանցի պաշտպանության հանդես եկավ Դրոն (Դրաստամատ Կանայան)՝ հայտարարելով, որ նա մեղավոր չէ 1915 թ. ռուսական բանակի հուլիսյան նահանջի հարցում, որը կործանարար հետևանքներ ունեցավ հայերի համար: Ըստ այդմ՝ պարզաբանված է նրա դերակատարումը Վան-Մանազկերտ նահանջի ժամանակ, վերհանված են իրարամերժ գնահատականները: Իսկ արդեն Առաջին հանրապետության օրոք հայկական հետախուզական ծառայության ղեկավարներից մեկը՝ Տիգրան Դևոյանցը, գլխավորեց զինվորական նախարարության գլխավոր շտաբին առընթեր հետախուզական և հակահետախուզական բաժանմունքը: Նա 1919 թ. գարնանը գործուղվում է Վան, Մուշ, Բիթլիս, այնուհետև, որպես վերջնական նպատակադրում, հաստատվում Կ. Պոլսում: Այստեղ նա կազմակերպում է հետախուզական խումբ, որը հայթայթում էր Հայաստանի Հանրապետության համար կենսականորեն անհրաժեշտ տեղեկատվություն հայկական սահմանի ողջ երկայնքով թուրքական զորքերի տեղաբաշխման, նրանց ռազմաքաղաքական նախապատրաստությունների, թվաքանակի և Հայաստանի նկատմամբ թշնամաբար տրամադրված Թուրքիայի պլանների, ռազմական կարողության, տարածաշրջանային կարևոր իրողությունների մասին և այլն:

Հայաստանի առաջին հանրապետության հետախուզական ծառայությունն իր առաջին քայլերը կատարել է 1918 թ. կեսերին: Օգոստոսի 13 -ին նախարարների խորհրդի նիստի որոշմամբ հետախուզական և հակահետախուզական գործի կազմակերպման համար[14] կատարվում է շուրջ 40 հազար ռուբլու դրամական հատկացում: Ծառայության կայացման



Վերևում Մեսրեթի բանտը

ճանապարհին կարևոր էր ՀՀ զինվորական նախարարի 1919 թ. ապրիլի 14-ի հրամանագիրը, որով հիմնականում ավարտվեցին հետախուզական ծառայության ձևավորման ուղղությամբ ընթացող կազմակերպչական գործընթացները, և ստեղծվեց գլխավոր շտաբի հետախուզական ու հակահետախուզական բաժանմունք:

1919 -1920 թթ. գոյություն ունեցող բարդ իրադրությունում էլ հայկական հետախուզական ծառայությունը փորձում էր ոչ միայն իր ոտքերի վրա կանգնել, այլև հնարավորինս արդյունավետ հակազդել Հայաստանի նկատմամբ թուրքական մեքենայություններին: 1919 թ. վերջին և 1920 թ. առաջին կեսին այդ հետախուզությունը բավականաչափ գործուն աշխատում էր՝ տեղեկատվություն հավաքելով Թուրքիայի, Ադրբեջանի, Վրաստանի, բոլշևիկյան Ռուսաստանի և այլ երկրների մասին՝ որոշակի պատկերացում ստեղծելով նրանց զորքերի թվաքանակի, տեղաբաշխման, զինվածության և այլնի վերաբերյալ, ինչպես նաև վերջիններիս դեմ ձեռնարկելով որոշ հակամիջոցներ: ՀՀ զորքերի հրամանատարի շտաբի 1920 թ. պաշտոնական հաղորդագրության մեջ շատ կարևոր եզրակացություն է արվում արդեն կայացած հայկական հետախուզական ծառայության գործունեության մասին. «Անցյալ տարվա դեկտեմբերի վերջերից սկսած (1919 թ. - Վ. Վ.) մենք ունեցել ենք մշտական գործակալական կապ Թուրքիայի և Ադրբեջանի բոլոր քաղաքների հետ՝ սիստեմատիկ կերպով ստանալով ամենաստույգ ինֆորմացիա Արևելյան Անատոլիայի ազգայնական շարժման մասին, որի գլուխ կանգնած է Մուստաֆա Քեմալ փաշան[15], որը նպատակ է դրել միանալ բոլշևիկների և թրքական Ադրբեջանի հետ՝ ոչնչացնելու ատելի հայ ժողովուրդը, որը խանգարում է իրենց ձգտումները իրականացնելուն, այն է՝ միացնել թուրքական ցեղերը, որոնք զինվելով և կազմակերպվելով՝ պետք է սկսեն պայքար Անտանտի լուծը թոթափելու համար: Այն ժամանակ, երբ Մ. Քեմալ փաշան կազմակերպում է ամբողջ կորպուսներ, որոնք իբր թե չեն հպատակվում Կոստանդնուպոլսի կենտրոնական իշխանությանը, մի կողմից՝ այդ զորքերը կենտրոնացնում է հայկական սահմանի վրա, իսկ մյուս կողմից՝ պատրաստվում է հարձակման ֆրանսիացիների և անգլիացիների վրա: Այդ ժամանակ Խալիլ և Նուրի փաշաները բազմաթիվ թուրքական գործակալ սպաներով գործում են Ադրբեջանում և Դաղստանում, որտեղ նրանք պատրաստում են զինված ուժ՝ Թուրքիայի հետ միանալու և աշխատում են միաժամանակ նեղ օղակով շրջապատել Հայաստանը՝ մուսուլմանների ապստամբություններ հարուցանելով Նախիջևանում, Զանգեզուրում, Վեդիբասարում և Ղարսի շրջանում (Աղբաբա)»[16]:

1919 թ. հոկտեմբերի 20-ի հետախուզական ամփոփագրում կապիտան Մուրադյանը և Դոդոխյանը նշում են, որ Աղբաբայի, Շորագյալի և Զարուշատի շրջաններում թաթարները շարունակում են կազմակերպվել՝ քայլեր ձեռնարկելով իբր թե պաշտպանվելու համար հայերի հնարավոր հարձակումից: Ամփոփագրում ընդգծվում էր, որ Թուրքիայից, Ադրբեջանից և Վրաստանից եկած էմիսարների կողմից թաթարական բնակչությունը հրահրվում է ընդդեմ Հայաստանի ապստամբական գործողությունների, ինչի մասին տեղին է նկատում Տ. Դևոյանցը. «Ինչպես և միշտ, նրանք գերադասում էին գործել ոչ կանոնաւոր զօրքով և այդ դէպքում նրանք կարող էին վստահ լինիլ յաջողութեան մէջ: Յաջող ապստամբութիւնը կը ստեղծէր «Հարաւային Ազերբէյջան», կամ Թուրքիա սահման կունենար Արփաչայի հետ: Իսկ անյաջողութեան դէպքում իրենց թոյլ կը տրուէր մեղադրելու հայերին ամէն տեսակ վայրագութիւնների ու բռնութիւնների մէջ, որոնցից ոչ ամէն անգամ կարելի է խուսափել ապստամբութիւնները ճնշելու ժամանակ»:

Ադրբեջանա-թուրքական այդ ագրեսիվ նկրտումների մասին է վկայում Տ. Դևոյանցը. «Ազերբէյջանի թաթարների յարձակումները Սևանայ լճի հարաւարևելեան շրջանների վրա, նոյնպէս Նախիջևանի կողմից և արևելքից՝ Զանգեզուրի վրայ, միայն լրացնում են այդ ուղղութեամբ մահմեդականների աշխատանքը: Այս ենթադրութիւնը հաստատւում է նաև մեր գործակալների լուրերով Էրզրումում կայացած գաղտնի ժողովի մասին, որ որոշել է ամբողջ ուժով հակառակուել հայերի մուտքին տաճկա-հայկական նահանգները, եթէ նոյնիսկ պէտք լինի պատերազմիլ մեծ պետութիւնների, դաշնակիցների հետ»[17]: Ուշագրավ է ևս մի փաստ վրացական կողմի երկդիմի վերաբերմունքի մասին Հայաստանի նկատմամբ. այն մշտական անկայուն քաղաքական կուրսի մասին, որ վարում էր «եղբայրական» Վրաստանը բլոկադայի մեջ գտնվող և թշնամիներով շրջապատված Հայաստանի նկատմամբ՝ կուլիսներում

եզրեր փնտրելով ադրբեջանական կողմի հետ:

Հայաստանի առաջին հանրապետության հետախուզական ծառայության պատմության քիչ, թե շատ և ամբողջական բացահայտման տեսանկյունից կարևոր է նշել հայկական հետախուզական ծառայության գործունեության մի կարևոր էջի մասին՝ կապված Ադրբեջանի հատուկ ծառայությունների մեքենայությունների հետ հենց Երևանում՝ ի դեմս Հայաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկա-

յացուցչության և գործակալական ցանցի, որի մասին բազմանշանակ նկատում է Ալ. Խատիսյանը. «Միւս կողմէ՝ հաստատուեցաւ, որ Ատրպէջանի կառավարութեան յատուկ սուրհանդակը տարած էր 5 միլիոն ռուբլի Շարուքի շրջանի ապստամբած գիւղացիներուն: Այդպէսով՝ դուրսէն սնունդ ստացող խռովութիւնը ոչ միայն կը յուզէր ազգաբնակութեան մտքերը, այլ ևս կը ստեղծէր այնպիսի համոզմունք, որ ապստամբութեան պարագային անոնց համար ապահովուած էր արտաքին օգնութիւնը:

Միւս կողմէ՝ 1920 թ. սկիզբը կուղարկէր սպաներ և զինուորներ…

ՀՀ կառավարութիւնը ամէն օր կը ստանար իր խուզարկու մարմիններու միջոցով տեղեկութիւններ այս կամ այն շրջանի մէջ տեղի ունեցող պատրաստութիւններու մասին[18], ինչն ինքնին հենց ժխտում են *Վ. Արծրունու* և այլոց կողմից բերված այն փաստերը, համաձայն որոնց՝ իբր թե Հայաստանի առաջին հանրապետության տարիներին գործած «հայկական հետախուզությունն իր ավանդական ապիկարությունը ցույց կտար նաև հայ-ադրբեջանական ճակատի վրա»: Գործնականում այդպես չէր. արդեն 1919 թ. հուլիսի 31-ին ՀՀ արտաքին գործերի նախարար *Ալ. Խատիսյանը* Բոյուք-Վեդիի դեպքերի կապակցությամբ վճռական բողոք է ներկայացնում Ադրբեջանի կառավարությանը նրա կողմից ծավալած դավադրական բնույթի լրտեսական-հետախուզական քայքայիչ գործունեության առնչությամբ՝ ընդգծելով իր լավ տեղեկացվածության մասին. «Հայաստանի կառավարութիւնն ունի ճշտուած, անհերքելի փաստաթղթերի վրայ հիմնուած տուեալներ ոչ միայն Բէյիւք վեդիցիների զինման և դրսից դրամական օժանդակութիւն ստանալու մասին, այլ նաև այն մասին, որ բոլոր յետագայ ապստամբական բռնկումները մի կազմակերպութեան գործ են, որ հետապնդում է մի նպատակ՝ արհեստական կերպով գրգռել մահմեդական ազգաբնակչութիւնը Հայաստանի կառավարութեան դէմ և բռնի կերպով փաթաթել այդ գրգռումը մահմեդական ազգաբնակչութեան վզին դրսից եկած բազմաթիւ գործակալների միջոցով, առանց որոնց մահմեդական ազգաբնակչութիւնը Հայաստանի յիշեալ գաւառներում մինչև այժմ էլ կը շարունակէր ապրել խաղաղ, կուլտուրական կեանքով, ինչպէս որ այդ տեղի ունի Հայաստանի միւս վայրերում»:

1920 թ. որոշ հետախուզական տեղեկագրեր ու զեկուցագրեր հետաքրքիր տվյալներ են հաղորդում ադրբեջանա-թուրքական փոխհամաձայնեցված գործողությունների մասին Շարուր-Նախիջևանում, Սուրմալուում, Կարսի մարզում, Զանգիբասարում, որի մասին վկայում է նաև Տ. Դևոյանցը. «Մեր գործակալների տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ Հայաստանի մահմեդական բնակչութիւնը մասնաւորապես Կարսի նահանգի մէջ և Շարուր-Նախիջևանի շրջաններում չէր ուզում հաշտուիլ հայկական իշխանութեան ենթարկուելու մտքի հետ և տեղի վրայ մնացած ու նոր եկող տաճկական սպաների ու զինուորների օգնութեամբ կազմակերպում էր զինուած խմբեր ու պատրաստում ապստամբել Հայաստանի դէմ»[19]: Հետախուզական բաժանմունքի պետ, կապիտան Վ. Մուրադյանը և նրա օգնական կապիտան Տ. Դևոյանցը 1920 թ. մարտի 20-ի տեղեկագրում փաստեր են բերում մահմեդական շարժման ակտիվացման, թուրք-ադրբեջանական գործակալների գործունեության, Շահթախթից Դավալու ժամանած 300 ասկյարների մասին: Հաղորդվում էր, որ թաթարները շահագրգռված լինելով քրդերի հետ բարեկամության մեջ՝ նրանց առաջնորդներին պարգևատրում են մեծ գումարներով և նվերներով՝ Ֆաթթի բեկ Շամշատդինսկուն ուղարկելով 60 հազար ռուբլի, որ նախիջևանյան ուժերի գլխավոր հրամանատարը դարձել է Քերբալայ Խան Նախիջևանսկին, որը սկսել է զբաղվել քրդական ջոկատների կազմակերպմամբ՝ սպասելով 500-600 հոգանոց հեծյալ ջոկատի, բազմաթիվ սպահրահանգիչների ժամանմանը[20]:

1920 թ. մարտի 20-ի այդ տեղեկագրում հայտնվում էր Սուրմալուում մահմեդականների ակտիվության մասին՝ արձանագրելով, որ Քուլպում Շամիլ-բեկ Այրումլինսկու մոտ տեղական ավազակախմբերից բացի՝ կան նաև 200 թուրք ասկյարներ և 2 թնդանոթ՝ ավելացնելով, որ Բայազետից 7 ուղտերով Քուլպ է ուղարկվել զինամթերք[21]: 1920 թ. ապրիլի 5-ի հետախուզական ամփոփագիրը վկայում է Բայազետի սանջակից Նախիջևան ժամանած թուրք ասկյարների մասին, որոնց գլխավորում էին Ջաֆար Ղուլի Խանը և Քերբալայ Խան Նախիջևանսկին[22]: Ամփոփագրում կապիտան Դևոյանցը և պոդպորուչիկ Դոդոխյանը հայտնում էին, որ Նախիջևանի շրջանի թաթարները գլխովին զինվում են, սովորում հրացանաձգության արվեստը, ինչպես նաև Բաքվից ստանում գնդացիրներ[23]: 1920 թ. ապրիլի 23-ի ամփոփագրում (N 15) պարունակվում են փաստեր Նախիջևանում գտնվող 300 թուրքական և 550 ադրբեջանական ասկյարների ու 15 սպաների ժամանման մասին, որոնք իրենց հետ բերել էին 17 միլիոն ռուբլի[24]՝ Հայաստանում ապրող մահմեդականներին դրդելով ընդհանուր ապստամբության[25]:

Հայաստանի նկատմամբ Թուրք-ադրբեջանական մեքենայությունները բավականաչափ հստակ դրսևորվում էին Երևանից ոչ հեռու գտնվող Զանգիբասարում, Բոյուք-Վեդիում մահմեդական բնակչության խռովարարական գործողությունների մեջ[26]: Ստեղծված իրավիճակը ճիշտ է ներկայացնում Տ. Դևոյանցը. «Բայց թիկունքում, Զանգիբասարի մէջ՝ Իգդիրի շրջանի, Ղամարլուի և Շարուր-Նախիջևանի սահմանների մօտ, դրութիւնը աւելի լուրջ կերպարանք ստացաւ: Զանգիբասարի մէջ միշտ կը գտնուէին տաճկական և Ազրբէյջանի գործակալներ և ղեկավարներ, որոնք կը կազմակերպէին ժողովուրդը, կը հայթայթէին նրանց համար Շարուր-Նախիջևանի շրջանից Արաքսի վրայով զէնք և փամփուշտ: Այս նոյն գործակալները բնակչութեան այն մասի վրայ, որ կ'ուզէր յայտնել իր հաւատարմութիւնը Հայաստանի կառավարութեան,

Հին Երևան

ճնշում գործ կը դնէին՝ դիմելով ձերբակալութեանց և այլ բռնի միջոցների: Այս թշնամական բոյնը, որի մէջ էին համախմբուում միշտ հարաւից եկող տաճկական և Ազրբէյջանի մարզիչները, գաղտնի կերպով ղեկավարում էր Հայաստանի ազրբէյջանական ներկայացուցչի կողմից և իրենից ներկայացնում էր մի տեսակ ամրոց, որը պետք է խաղար մեծ դէր այն դէպքում, երբ սկսուէր ընդհանուր պատերազմ մահմեդականների կողմից հայերի դէմ, որովհետև նա կը գտնուէր պետութեան մայրաքաղաքի քթի տակ, շատ մօտիկ»[27]:

Առաջին հանրապետության կայացման ոչ միանշանակ, բարդ ռազմաքաղաքական գործընթացների պայմաններում և մասնավորապես՝ անցումային 1919 թ. երկրորդ կեսին - 1920 թ. սկզբին, Տիգրան Դևոյանց հետախույզի կողմից իրականացվում են ակտիվ հետախուզական աշխատանքներ Վան-Մուշ-Բիթլիս շրջանում, որից հետո, 1919 թ. վերջում-1920 թ. սկզբին նա հանգրվանում է Կ. Պոլսում[28], որտեղ կազմակերպում է հայկական հետախուզական խումբ, որի ջանքերով էլ հայթայթում է Հայաստանի Հանրապետության ազգային-պետական անվտանգության ապահովման տեսանկյունից արժեքավոր տեղեկություններ:

Տիգրան Թադևոսի Դևոյանցը ծնվել է 1887 թ. օգոստոսի 20-ին Երևանում, վախճանվել 1965 թ. սեպտեմբերի 12-ին՝ ժամը 5-ին, ԱՄՆ-ում: Սովորել է Տոմսկի համալսարանի լեռնային-ճարտարագիտական ֆակուլտետում, մանկավարժ: Հայտնի է «Դևո», «Տիգր», «Դево» և այլ ծածկանուններով[29]: ■

Օգտագործված աղբյուրներ

1 Տես «Հայրենիք», Բոստոն, 1944, № 6 (245), նոյեմբեր- դեկտեմբեր, էջ 80-81:
2 Նոյն տեղում, 1945, № 1 (246), Յունուար- Փետրուար, էջ 54:
3 Տես «Մշակ», 29 դեկտեմբերի, 1918 թ., № 269, 7 յունուարի, 1919 թ., № 5, 31 յունուարի, 1919, № 23, «Աշխա-տավոր», Թիֆլիս, 3 մայիսի, 1919 թ., № 85, «Кавказское слово», Тифлис, 30. I. 1919, № 10, Տես Ментешаш-вили А. И., Октябрьская революция и национально-освободительное движение в Грузии, 1917-1921, Тбилиси, Изд-во «Ганатлеба», 1987, стр. 150:
4 Տես «Աշխատավոր», Թիֆլիս, 3 մայիսի, 1919 թ., № 85:
5 Տես Դէոյեանց Տ., Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1945, № 1 (246), Յունուար-Փետրուար, էջ 54:
6 Տես ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ.1, թ. 64: Տես նաև Դէոյեանց Տ., Կեանքիս դրուագներից, «Հայրենիք», 1945, № 1 (246), Յունուար- Փետրուար, էջ 54-56:
7 Տես ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ . 1, թ. 64 :
8 Տես նույն տեղում, գ. 1, թ. 64, գ. 211, թ. 40:
9 Տես նույն տեղում, գ. 1, թ. 111:
10 Տես Դէոյեանց Տ., Հետախոյզի մը յուշերը, «ՎԷՄ», 1938, Յունուար - Մայիս, թիւ 2, էջ 71:
1 Տես ՀԱԱ, ֆ. 370, g. 3, գ. 6, թ. 40:
12 Դէոյեանց Տ., Կեանքիս դրուագներից, «Հայրենիք», 1945, № 1 (246), Յունուար-Փետրուար, էջ 59-60:
13 Հարկ է ավելացնել, որ տաղանդաշատ այս հայ հետախույզի հետագա գործունեության էջերը դեռևս լիովին պարզաբանված չեն, սակայն որոշ կցկտուր փաստեր երբեմն-երբեմն հաջողվում է գտնել, որոնք էլ ավելի ամբողջական են դարձնում նրա ոչ միանշանակ և տեղ-տեղ հակասական դիմանկարի և փոթորկուն հետախուզական կենսագրության ծալքերը: Դատելով որոշ փաստերից՝ ակնհայտ է դառնում, որ Առաջին ...հանրապետության անկումից և խորհրդայնացումից հետո Տիգրան Դևոյանցի անունը (ինչպես նաև հետա-խույզներ Նազարբեկովի, Դվերնիցկու, Գրիգորի Խաչատուրյանի անունները) հայտնվել է ազատված և ծա-ռայության վայրերում թողնված այն սպաների ցուցակում, որոնք ենթակա էին ուղարկվելու Բաքու՝ հանձ-նվելով XI Կարմիր բանակի շտաբի տնօրինությանը և հետագա հրահանգներին, ինչից կախված էր նրանց հետագա ճակատագիրը: Տես ՀԱԱ, ֆ. 113, g. 3, գ. 3, թթ. 40-47, 53, 68-70 և այլն:
14 Տես ՀԱԱ, ֆ. 201, g. 1, գ. 484, թ. 9, ֆ. 202, g. 1, գ. 13, թ. 12, ֆ. 204, g. 1, գ. 216, թ. 1:
15 Հարկ է, ի դեպ, նշել, որ մաթեմատիկայի բնագավառում իր հաջողությունների համար նա ստացել է «Քե-մալ» անվանումը, ինչը նշանակում է որևիցե բնագավառում «կատարելություն»: Տես Майкл Ли Лэннинг, 100 великих полководцев, Москва, «Вече», 1998, стр. 323: Իսկ ինչ վերաբերում է «Աթաթյուրք» անվանմանը, ապա Մուստաֆա Քեմալը այն որպես իր ազգանուն ընտրել է իր խորհրդական, հայտնի հայ լեզվաբան Հակոբ Մարթայանի խորհրդով 1935 թ. վերջինիս առաջարկությամբ հրավիրված խորհրդակցության ժա-մանակ՝ Մ. Քեմալի առաջարկով ազգանուններ մշակելով պետական գործիչների և լեզվաբանների հա-մար: Տես Աղայան Ծ., Հայերը Թուրքիայում, Եր., «Հայաստան», 1994, էջ 61:
16 «Յառաջ», Երևան, 9 մայիսի, 1920, N 95:
17 Դէոյեանց Տիգրան, Կեանքիս դրուագներից,, «Հայրենիք» (Բոստոն), 1945, N 5 (250), Սեպտ. - Հոկտ., էջ 95:
18 Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, «Համազգային» հայ մշա-կութային ընկերակցութիւն, տպ. Համազգային, Բէյրութ, 1968, էջ 205:
19 Դէոյեանց Տիգրան, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1945, N 4 (249), Յուլիս-Օգոստոս, էջ 84:
20 ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 33, թ. 11-12:
21 ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 33, թ. 11-12:
22 Նույն տեղում, գ. 427, մաս II, թ. 252:
23 Նույն տեղում:
24 Նույն տեղում, թ. 262:
25 Նույն տեղում, էջ 386:
26 Այդ նպատակով Ադրբեջանի առաջնորդները բացահայտ օգտվում էին Թուրքիայի պաշտոնական աջակ-ցությունից՝ երբեմն էլ այցելելով Կ.Պոլիս, ինչի մասին, օրինակ, վկայում է Տ. Դևոյանցը Փարիզ՝ գեներալ Գ. Ղորղանյանին ուղարկված 1919 թ. հոկտեմբերի 28-ի զեկուցագրում (No 46): Դրանում ասվում էր, որ Կ.Պո-լիս է ժամանել Ադրբեջանի վարչապետ Յուսուֆ Վեզիրովը, որը հանդիպումներ է ունեցել հայտնի թուրք գործիչների հետ, ինչպես նաև պայմանավորվածություն ձեռք բերել հետախուզության ղեկավարների՝ Բի-գա բեյի և Ջինգուն Կարա Վա[ս]գիֆի և մասնավորապես Ջիխնի բեյի հետ.- Տես Հայաստանի Հանրապե-տության արխիվ (Բոստոն), թիվ 17/17, պահ. 12, դ. 3, թ. 75:
27 Դէոյեանց Տիգրան, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1945, N 5 (250), Սեպտ.- Հոկտ., էջ 97:
28 Այդ մասին մանրամասն տես Վիրաբյան Վ., Հայաստանի Հանրապետության Պետական անվտանգու-թյան համակարգի ստեղծումը և գործունեությունը, Եր., ԵՊՀ հրատ., 2015, էջ 83-101, 226-238, 591-661 և այլն, նույնի Հայաստանի Հանրապետության Պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գոր-ծունեությունը, Եր., 2006, էջ 119-130, 181-182: նույնի Հայաստանի Հանրապետության հետախուզությունը և բանակը 1918-1920 թթ., Եր., 2009, էջ 34-63: նույնի Հայկական հետախուզական խմբի գործունեությունը Կ. Պոլսում Տիգրան Դևոյանցի գլխավորությամբ 1919 թ. երկրորդ կեսին - 1920 թ. սկզբին: Տես Տարեգիրք. Բ. (պատմագիտական հանդես), Եր., 2010, էջ 134 -150 և այլն:
29 Տես Հովակիմյան Բ. Մ., Հայոց ծածկանունների բառարան, Եր., ԵՊՀ հրատ., 2005, էջ 596: Տես նաև «Հո-ռիզոն» [Թիֆլիս], 1914, N 230, 233, «Армянский вестник» [Москва], 1916, N 33, стр. 24, «Кавказское слово» [Тифлис], 1914, N 28-30, 34-36, 1918, N 117, Հավելված 6 [1, 2, 3]: Հ.Գ.: Ծննդյան տարեթիվը ճշտվել է՝ նախ-կինում մեր կողմից շրջանառված 1890-ի փոխարեն:

Մնալով տեսլականին հաւատարիմ (95-Ամեակին առթիւ)

Վրէժ-Արմէն
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

«Համազգային»-ի 95-ամեակը նշող տարին փակելէ առաջ արդար է անդրադառնալ իր հիմնադիրներու տեսլականին և մտածել՝ ինչպէս հաւատարիմ մնալ անոր ու յանձն առնել շարունակել երթը այս մեծ առաքելութիւն ունեցող կազմակերպութեան:

Կ'արժէ այստեղ կարճ մէջբերում մը ընել այն յօդուածէն, որ Վահան Նաւասարդեան գրած է «Համազգային»-ի հիմնադրութեան մասին: Որքան ալ հետաքրքրական ըլլան իր տուած այլ մանրամասնութիւնները, այստեղ կ'ուզեմ տալ այդ հիմնադրութեան որոշումը կայացնող ժողովի նկարագրութեան հետևեալ հատուածը.

«Ժողովականները բաժանուած էին երկու մասի. մէկը, գլխաւորութեամբ [Լևոն] Շանթի, համեստ ծրագրի կողմնակից էր. «Լոյս» անունով ընկերութիւն հաստատել՝ միայն մէկ երկրորդական վարժարան հիմնելու ծրագրով: Շանթի հետ էր [Նիկոլ] Աղբալեանը, ասելով. «Շատ բան կ'ուզեմ. տրուողը ո՞վ է. գիտնանք քչով գոհանալ, եթէ քիչն էլ լինի, նորէն շատ է»:

Միւս մասը կողմնակից էր աւելի լայն ծրագրի՝ համազգային ծաւալով կրթական, մշակութային կազմակերպութիւն ստեղծելու առաջադրութեամբ, որի առաջին ձեռնարկը պիտի լինէր —իր սկզբնական շրջանին, քանի կազմակերպութիւնը ծաւալած չէր գաղթաշխարհի մէջ— հիմնադրումը միայն մէկ երկրորդական վարժարանի:

Այս երկրորդ տեսակէտի ջերմ պաշտպաններից էի ես՝ ինձ հետ ունենալով մասնաւորաբար Համոյին [Օհանջանեան] և Ստեփանին [Եսայեան]:

Մտքերի երկարատև փոխանակումից յետոյ յաղթանակեց այս վերջին տեսակէտը: Եւ իմ առաջարկով ընդունուեց հետևեալ անունը նորաստեղծ կազմակերպութեան համար՝ «Հայ Կրթական և Հրատարակչական Համազգային Ընկերութիւն»»[1]:

Հեռուն նայող, լայն հորիզոնի վրայ բացուող հայեացք մը, որը մերը ըլլալու է ամեն ժամանակէ աւելի: Ահա հինգ բառեր, որոնք կը բնութագրեն կազմակերպութիւնը և անոր էութիւնը՝ հայ – կրթական – հրատարակչական – համազգային - ընկերութիւն: Այդ բառերէն մէկը յետոյ աւելի ընդլայնելով՝ պիտի դառնայ «մշակութային», և կազմակերպութիւնը այսօր պիտի կրէ «Համազգային հայ կրթական և մշակութային միութիւն» անունը, և անունի վերածուած ածականը դրուելով սկիզբը՝ պիտի ստանայ ա՛լ աւելի մեծ առում:

Այո՛, իզուր չէ, որ մեծ տեսաբանը՝ Նաւասարդեան, պնդած է այդ առաջին՝ «համազգային» բառին վրայ: Այդ բառին մէջ կայ ամբողջ աշխարհ մը՝ հայաշխարհը, և ահա բառն է, որ կը նշէ կազմակերպութեան դիրքաւորումը. ան չէ՛ կուսակցութեան մը, կողմի մը կազմակերպութիւնը, որքան ալ վայելէ անոր հովանաւորութիւնը ու անոր գաղափարականին ջատագովը ըլլայ ան. իր նպատակը համազգային է, իր կոչումը համազգային է, իր ներուժը համազգային է: Ատկէ մեկնելով՝ պիտի ըսենք նաև իր աշխատանքը համազգային պիտի ըլլայ, այսինքն՝ բոլոր առնչուած կազմակերպութիւններուն և հաստատութիւններուն հետ գործակցաբար պիտի զարգացնէ իր գործունէութիւնը Սփիւռքի մէջ, թէ հայրենիքի:

Երկրորդ բառը «հայ»-ն է: Այդ ալ պատահականութեամբ չէ, որ ընտրուած է: Պարզապէս հայկական կազմակերպութիւն մը ըլլալը չէ՛, որ կը նշուի այդ բառով: Ան հայ է իր ուղն ու ծուծով և իր հայ ըլլալով է, որ համամարդկային է: Ան հայութեան կը ծառայէ և հայութեան ծառայելով է, որ մարդկութեան կը ծառայէ: Հայութեան մտահոգութիւններն են իր օրակարգին վրայ, հայութեան կարիքներն են իր ծրագրերուն հիմքը: Ինչպէս պարզապէս ածական մը չէ «համազգայինը», այնպէս ալ պարզապէս ածական մը չէ «հայ»-ը, այլ պատկանելութիւն մը, այդ պատկանելութեան խոր գիտակցութիւն մը: Ինքնութիւն մը, բայց առանց այլամերժութեան և առանց ցեղապաշտութեան, ինչ որ յարիր պիտի չըլլար Դաշնակցութեան իսկ գաղափարաբանութեան:

Հիմա նայինք «կրթական» և «մշակութային» բառերուն, որոնք կը ճշտեն ծիրերը այս կազմակերպութեան գործունէութեան և անդրադառնանք, թէ «կր-

«ՀԱՄԱԶԳԱՅԻՆ»-ի հիմնադրութեան յոյսարարութեան օրը՝ 28 մայիս 1928

Գահիրէի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ առջև: Հիմնադիրներէն Սրբեփան Եսայեանի զաւակներուն մկրտութիւնը՝ կնքահայրութեամբ միւս հիմնադիրներուն: Ձախէն աջ՝ Սրբեփան Եսայեան (փոքրերուն հայրը), Նունիա Էիրամեան (Զապէլին մայրը, փոքրերուն մեծ մայրը), տէր և տիկին Մեղրակ Պալրքեան՝ կնքահայր-կնքամայրը Շաքէի (իրենց առջև), Ռոպինսոն Եսայեան (զարմիկ մը), Լևոն Շանթ՝ կնքահայրը Գեղանոյշ-Աչոյի (իր առջև), Ռոբինա և Համօ Օհանջանեան՝ կնքամայր-կնքահայրը Սերոբ-Սերոյի (իրենց առջև), Վիքթորիա Եսայեան (Ռոպինսոնի մայրը), Վազգէն, Կարապետ Մալիասեան, Նիկոլ Աղբալեան՝ կնքահայրը Վազգէնի, Թագուհի-Թաթուշ, Վահան Նաւասարդեան (կնքահայրը անոր), Զապէլ Էիրամեան-Եսայեան (փոքրերուն մայրը)

թականը» զետեղուած է «մշակութային»-էն առաջ: Առանց կրթականին՝ մշակութայինը ինչպէ՞ս կրնայ գոյութիւն ունենալ:

Նպատակ չունիմ թուելու «Համազգային»-ի անցնող 95 տարիներու կատարուած աշխատանքները այս ծիրէրէն ներս. ատոնք արդէն կը պատկանին պատմութեան: Ատոնց գնահատումն ալ կը թողեմ ապագայ պատմաբաններուն: Բայց չեմ կրնար չանդրադառնալ ներկայ կարիքներուն, որոնք պիտի ճշտեն մեր գալիք ուղին:

Ինծի համար այսօր թիւ մէկ խնդիրը մեր լեզուի պահպանումն է՝ հայերէնի՛ պահպանումը. ոչ թէ միայն արևմտահայերէնի, այլ հայերէնի՝ իր երկու լեզուաճիւղերով, որոնք կը գտնուին աղաւաղման, խաթարման ու իսպառ անհետացման վտանգին առջև: Լեզուի պահպանումը՝ իր բոլոր ստորոգելիներով կամ բոլոր առնչումներով, դպրոցներու հարիւրապատիկ բազմացումով Սփիւռքի մէջ, այդ դպրոցներուն համար ուսուցիչներու դաստիարակութեամբ, ամենուրեք տեղւոյն յարմար կրթական ծրագրերու և դասագրքերու պատրաստութեամբ, գրականութեան զարգացումով, մանաւանդ մանկական, պատանեկան և երիտասարդական տարիքներուն համար, ժամանակակից բառարաններու և լեզուի ուսուցման անհրաժեշտ քերականութեան և ուղղախօսութեան դասագրքերու հրատարակութեամբ, մասնագիտական պատրաստութեամբ ու ներկայ արդի մօտեցումներուն համապատասխան:

Մշակութային գործունէութիւնը պիտի գայ ամբողջացնելու կրթական գործունէութիւնը. թատրոնը՝ մանաւանդ արդի կեանքին առնչուած հայերէն նոր թատերախաղերով, շարժանկարն ու այլազան տեսանիւթերը, երգն ու պարը, ասոնց բոլորին անհրաժեշտ ղեկավարներու և դերակատարներու մասնագիտական պատրաստութիւնը, ներկայացումները, անոնց հիւրախաղերը և այլն, և այլն: Այս ծիրէն ներս ալ տակաւին թանգարանները՝ ներառելով անոնց ստեղծումը Սփիւռքի բոլոր հայաշատ վայրերուն մէջ և չանտեսելով «Համազգային»-ի բոլոր մակարդակներու վարչութիւններու և գեղարուեստական խումբերու, ինչպէս նաև անհատ մտաւորականներու և արուեստագէտներու արխիւներու պահպանումը՝ թուայնացմամբ և այլապէս, արուեստագէտներու գործերու փրկութիւնը անոնց մահէն ետք, երբ անժառանգ կը մեկնին այս աշխարհէն, գիտաժողովներու յաճախակիացումը և այդ ոչ միայն հայրենիքի մէջ:

Խօսելով հայրենիքի մասին՝ կ'ուզեմ շեշտել, թէ որքան կարևոր է «Համազգային»-ի տարածումը բոլոր մարզերուն և բնակավայրերուն մէջ, անոր գործունէութեան ընդլայնումը՝ առկայ գեղարուեստական խումբերու գործակցութեամբ, արուեստագէտներու քաջալերումը և տակաւին ինչեր:

«Համազգային»-ին կ'իյնայ նաև քաղաքական բոլոր մակարդակներուն վրայ՝ համաշխարհային, շրջանային, թէ տեղական, կապեր ունենալ կրթական, թէ մշակութային կազմակերպութիւններու, հաստատութիւններու, թէ անհատներու հետ՝ ներառեալ լրատուական մարզէն ներս՝ փոխադարձ ծանօթացման և համագործակցութեան համար, միշտ ի նպաստ ու ի փառս համայն հայութեան:

Այս բոլորը, սակայն, պիտի ըսուի դրամի կը կարօտի:

Եւ ահա կու գանք կազմակերպութեան անունին վերջին բառին՝ «միութիւն»: Գիտենք, չէ՞, որ միութիւնը զօրութիւն է: Աւելին ըսելու պէտք կա՞յ:

95 տարի առաջ Եգիպտոսի մէջ օրուան նեղ պայմաններով «Համազգային»-ը հիմնելու համար եթէ հիմնադիրները յաջողեցան գոյացնել անհրաժեշտ հազար եգիպտական ոսկին, այսօր հայութեան ունեցած անբաւ հարստութեամբ հնարաւո՞ր չէ ստեղծել 1000 միլիոնի դրամագլուխ մը և ծրագրումով անցնիլ գործի՝ քայլ առ քայլ իրականացնելու նոր վարժարան առ նոր վարժարան, նոր ծրագիր առ նոր ծրագիր:

Անկասկած, կարելի է, եթէ ըլլան գիտակցումը, հաւատքն ու կամքը:

Հաւատարիմ՝ հիմնադիրներու տեսլականին: ■

Օգտագործուած աղբյուրներ

1. Վահան Նաւասարդեան, «Համազգայինի» եւ իր ճեմարանի հիմնադրութեան շուրջ, Յուսաբեր (բացա-ռիկ՝ նուիրուած Վահան Նաւասարդեանի յիշատակին), տպարան «Յուսաբեր», 1957, Գահիրէ (պահած եմ ուղղագրութիւնը այնպէս , ինչպէս տպուած է այնտեղ – Վ.Ա.):

Տնտեսական աճի տեմպը կայուն նվազում է արտաքին նպաստավոր գործոնների թուլացման ֆոնին

Ռուս-ուկրաինական հակամարտությամբ պայմանավորված արտաքին գործոնների ազդեցությամբ նախորդ երկու տարիներին արձանագրվող ՀՀ տնտեսական բարձր աճի կարճաժամկետ բնույթն արդեն իրողություն է:

Մասնավորապես՝ այս տարվա երկրորդ եռամսյակից սկսած տնտեսական ակտիվությունը կայուն նվազում է: 2022 թ. առաջին ինը ամիսներին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ՀՆԱ-ի աճը եղել է 12,3 տոկոս, իսկ 2023 թ. համադրելի ցուցանիշը նվազել է 2,8 տոկոսային կետով և կազմել է 9,5 տոկոս: Հաջորդը. 2022 թ. հոկտեմբերին ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշի աճը, նախորդ տարվա նույն ամսվա համեմատ, եղել է 17,5 տոկոս, ինչը հետագայում եռակի նվազել է՝ 2023 թ. հոկտեմբերին կազմելով 6 տոկոս: Ավելին, նույնիսկ ՀՆԱ-ի երկնիշին մոտ աճերի պայմաններում 2023 թ. հոկտեմբերի դրությամբ ՀՀ պետական պարտքը դարձավ 11 միլիարդ 116 միլիոն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 10,5 տոկոսով: 2022 թ. հոկտեմբերին և.ս, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, պետական պարտքն աճել է շուրջ 10 տոկոսով՝ հատելով 10 միլիարդ ԱՄՆ դոլարի շեմը:

Նախորդ տարվա 1-ին եռամսյակի համեմատ՝ 2023 թ. 1-ին եռամսյակում գրանցվել է ՀՆԱ-ի 12,05 տոկոս աճ, որը, կայուն նվազելով, այս տարվա 3-րդ եռամսյակին դարձել է 7,38 տոկոս2: 2023 թ. 3-րդ եռամսյակում ՀՆԱ-ի 7,38 տոկոս աճի վրա եղել են հետևյալ ոլորտային ազդեցությունները՝

– գյուղատնտեսությունը՝ ընդամենը + 0,23 տոկոսով,

– արդյունաբերությունը ազդել է բացասական, - 0,43 տոկոսով,

– շինարարությունը՝ +1,23 տոկոսով,

– առևտուրը և ծառայությունները՝ էական, + 6,34 տոկոսով:

2023 թ. երրորդ եռամսյակում առևտրի և ծառայությունների ոլորտի ազդեցության բաժինը ՀՆԱ-ի աճի մեջ ավելացել է 12 տոկոսային կետով և կազմել է 86 տոկոս:

2023 թ. 3-րդ եռամսյակում արձանագրվել են ՀՆԱ-ի հետևյալ կառուցվածքը և 2022 թ. համեմատ՝ բացասական միտումները.

– գյուղատնտեսություն՝ 11,7 տոկոս, որը 2022 թ. 3-րդ եռամսյակի համեմատ՝ նվազել է 2,1 տոկոսով,

– արդյունաբերություն՝ 15,1 տոկոս, որը 2022 թ. 3-րդ եռամսյակի համեմատ՝ նվազել է 2,3 տոկոսով,

– շինարարություն՝ 7,2 տոկոս, որը 2022 թ. 3-րդ եռամսյակի համեմատ՝ գրեթե չի փոխվել,

– առևտուր և ծառայություններ՝ 58 տոկոս, որը 2022 թ. 3-րդ եռամսյակի համեմատ՝ աճել է 4,8 տոկոսով:

Փաստորեն, 2023 թ. և.ս ՀՆԱ-ի կառուցվածքում առևտրի և ծառայությունների տեսակարար կշիռը դրսևորել է առաջանցիկ աճի միտում, իսկ իրական հատվածի (գյուղատնտեսություն, արդյունաբերություն) տեսակարար կշիռը՝ նվազման միտում:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 2023 թ. 3-րդ եռամսյակում ՀՆԱ-ի ծավալային աճեր են արձանագրվել գյուղատնտեսության ոլորտում (2022 թ. ընթացքում և 2023 թ. 1-ին կիսամյակում գրանցված էական անկումներից հետո), արդյունաբերության ոլորտից միայն հանքարդյունաբերության ճյուղում, իսկ մշակող արդյունաբերությունը ունեցել է զրոյական աճ: Միջինից էականորեն բարձր և առաջանցիկ աճեր շարունակել են ունենալ.

– շինարարությունը՝ 32,2 տոկոս, որը 2022 թ. համադրելի ցուցանիշը գերազանցում է 12,3 տոկոսով,

– առևտրի ոլորտը՝ 36 տոկոս, որը 2022 թ. համադրելի ցուցանիշը գերազանցում է 16 տոկոսով,

– հյուրանոցային և հանրային սննդի ծառայությունները՝ 37,5 տոկոս, որը 2022 թ. համադրելի ցուցանիշը գերազանցում է 24,7 տոկոսով,

– զվարճությունների և հանգստի կազմակերպման ծառայություններ՝ 32,1 տոկոս, որը 2022 թ. համադրելի ցուցանիշը գերազանցում է 24,3 տոկոսով,

– սպասարկման այլ ծառայությունները՝ 27,2 տոկոս, որը 2022 թ. համադրելի ցուցանիշը գերազանցում է 4 տոկոսով:

Փաստորեն, այս տարվա 3-րդ եռամսյակում և.ս, ըստ տնտեսության ոլորտների, արձանագրված ՀՆԱ-ի բարձր աճի միտումները հիմնականում պայմանավորված են առևտրի և ծառայությունների ոլորտների պահանջարկի ավելացմամբ, որը նույնպես արտաքին, պատահական գործոնների ազդեցության արդյունք է: Չնայած 2023 թ. առաջին եռամսյակում տեղեկատվության և կապի ծառայությունների ոլորտը գրանցել է 50 տոկոս տպավորիչ աճ՝ սակայն 2022 թ. համադրելի ցուցանիշին զիջում է գրեթե 10 տոկոսային կետով: Առաջնային այս ոլորտում նկատվում է աճի տեմպերի էական նվազում:

Հատկանշական է նաև այն, որ 2022 թ. արձանագրված 47 տոկոս թռիչքաձև աճից հետո 2023 թ. ընթացքում ֆինանսական ծառայություններն արդեն գրանցում են երկնիշ անկումներ՝ յուրաքանչյուր եռամսյակում շուրջ 10 տոկոսի չափով: Եվ սա էականորեն պայմանավորված է արտաքին առևտրաշրջանառության աճի տեմպերի, ինչպես նաև արտերկրից ստացվող դրամական միջոցների էական նվազման միտումներով (օտարերկրյա դրամական միջոցների փախուստով):

Մասնավորապես 2023 թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների չափերի տարբերությունը (զուտ ներհոսքը) եղել է 568 միլիարդ դրամ, ինչը շուրջ 313 միլիարդ դրամով կամ 36%-ով նվազել է՝ 2022 թ. համապատասխան ժամանակահատվածի համեմատ:

Հաջորդը. 2022 թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը (ընդհանուր արտահանման և ներմուծման հանրագումարը) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 66,4 տոկոսով, իսկ 2023 թ. համադրելի ցուցանիշը եղել է ընդամենը 41,2 տոկոս՝ նվազելով 1,6 անգամ:

Ամփոփելով՝ նախորդ տարի արձանագրված և այս տարի դեռևս շարունակվող տնտեսական բարձր աճը հիմնականում տնտեսական ընդհանուր պահանջարկի թռիչքաձև ավելացման արդյունք է, որը պայմանավորված է արտաքին, պատահական և կարճաժամկետ գործոններով: Ընդ որում, այս գործոնները աստիճանաբար թուլանում են՝ հանգեցնելով տնտեսական աճի տեմպերի կայուն նվազման և առաջացնելով տնտեսական աճի ապահովման նոր ռիսկեր:

Ավելին՝ արձանագրված բարձր տնտեսական աճն այդպես էլ չկապիտալացվեց, չհանգեցրեց ՀՀ տնտեսական կառուցվածքի բարելավման և առաջարկի ներուժի ավելացման: Հակառակը՝ խորանում են տնտեսության իրական հատվածի մակրոցուցանիշների բացասական միտումները: Այս ամենին էլ գումարած տնտեսական անվտանգության անչափելի ռիսկերը՝ աշխարհաքաղաքական ավելացող սպառնալիքների ֆոնին ...

Թադևոս Ավետիսյան

ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի անդամ, ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր

ԴՐՕՇԱԿ